ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

10

ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
10

Մեթոդական ուղեցույց

Երևան 2023

Սիրելի՛ ուսուցիչ

Կրթական բարեփոխումների արդյունքում հաստատվել են Հանրակրթության պետական չափորոշիչը և նոր ծրագրերը: «Հայ գրականություն 10» դասագիրքը, որն ունի ավանդականից տարբեր կառուցվածք, կազմվել է չափորոշչի և գրականության ծրագրի պահանջներին համապատասխան:

Դասագրքի հեղինակներն են՝ բանաս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ալ. Մակարյանը (հայ նոր գրականություն), բանաս. գիտ. դոկտոր Հ. Բախչինյանը (հայ հին և միջնադարյան գրականություն), մեթոդիստ-փորձագետ Թ. Թովմասյանը (արտասահմանյան գրականության նյութերը և դասագրքի բոլոր առաջադրանքներն ու վարժությունները):

Սույն մեթոդական ուղեցույցի նպատակն է՝ 10-րդ դասարանի գրականության ուսուցիչն ուղղորդել ճիշտ աշխատելու դասագրքով:

Ըստ 10-րդ դասարանի ծրագրի՝ դասագիրքը բաղկացած է երեք թեմատիկ բաժիններից՝ «Ինքնություն և մշակույթ», «Փոփոխություն և հեռանկար», «Մշակույթ և բարքեր, անհատ և հասարակություն»: Յուրաքանչյուր բաժնում ընդգրկված են հայ դասական գրողների լավագույն գործերը: Բացի հիմնական ուսումնական նյութերից, դասագրքում ներառված են ծրագրով նախատեսված լրացուցիչ նյութեր՝ հայ և արտասահմանյան դասական գրողների ատեղծագործություններից: Դասագրքի լրացուցիչ նյութերը զետեղված են QR ծածկագրի տակ, որտեղ առկա են գրողների կենսագրություններ, թեմային համապատասխան ֆիլմեր, բնագրերի համար գրված վարժություններ և առաջադրանքներ և այլն:

Մեթոդական ուղեցույցի նպատակը ուսուցչին ոչ միայն մեթոդական օգնություն ցուցաբերելը և ուսուցումն առավել մատչելի ու հետաքրքիր դարձնելն է, այլև ուսուցման ժամանակակից մեթոդներն ավելի հասկանալի և նպատակային գործածելու կարողությունները զարգացնելը:

Ծրագրային թեմաների համար մեր կողմից կազմվել է օրինակելի թեմատիկ պլանավորում (լրացուցիչ նյութերը ևս)՝ շաբաթական 3 ժամի համար, որը կօգնի ուսուցչին դասերի պլանավորման և վերջնարդյունքների կիրառման հարցում: Որքան էլ անթերի լինեն ծրագիրն ու դասագիրքը, բոլոր դեպքերում ուսուցման մեջ վճռորոշը ուսուցչի դերն է: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի թեման ստեղծագործաբար ներկայացնելու իր մոտեցումներն ու հնարավորությունները, և ուղեցույցում առկա դասի պլանները նույնպես զերծ են պարտադրանքից. դրանք ունեն միայն ուղղորդող բնույթ:

10-րդ դասարանում գրականության ուսուցումը նպատակ ունի զարգացնելու տարբեր բնույթի բանավոր և գրավոր շարադրանք ստեղծելու կարողություններ, ձևավորելու արժեհամակարգ և սեփական դիրքորոշում ունեցող քաղաքացի:

Հեղինակների ընդարձակ կենսագրությունները, ստեղծագործական կյանքի հիմնական փաստերը, բնագրերի վերլուծականները, վարժություններն ու առաջադրանքները

բխում են չափորոշչային ուսումնական նպատակներից: Թեմայի նպատակն ու վերջնարդյունքները զետեղված են դասագրքի յուրաքանչյուր թեմատիկ բաժնի սկզբում:

Թեմատիկ պլանով նախատեսված յուրաքանչյուր հեղինակին հատկացվող ժամաքանակը հնարավորություն է տալիս գրողին ու նրա գրական երկն ուսումնասիրել ավելի հանգիստ ընթացքով: Մեթոդական ուղեցույցը կոչված է մեթոդապես ու մասնագիտորեն օգնել ուսուցչին և նպաստել դպրոցում գրականության ուսուցման բացթողումները շտկելուն, ինչպես նաև սովորողի ժամանակակից պահանջների բավարարմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Յուրաքանչյուր բաժնից մեր կողմից ընտրվել է մեկ կամ երկու ենթաթեմա և հանգամանորեն վերածվել դասի պլանների, որոնք կօգնեն ուսուցիչներին վերակառուցելու իրենց աշխատանքը՝ արդի դասավանդման պահանջներին համապատասխան:

Թեմաների յուրացման համար կազմվել են այնպիսի առաջադրանքներ, որոնք հնարավորինս ապահովում են սովորողի անհրաժեշտ գիտելիքների գործնական իրացումը՝ նրանց ընկալողական կարողունակություններին համապատասխան: Վարժություններն իրենց բովանդակային ծավալով, տարաբնույթ առաջադրանքներով խթանելու են սովորողի և՛ ուսումնական պատրաստվածությունը, և՛ ինքնուրույն մտածողությունը և տրամաբանելու ունակությունը, ստուգում ու բացահայտում:

Միաժամանակ ուղեցույցում զետեղված է գնահատման նոր համակարգի վերաբերյալ ուղղորդող նյութ, որը կօգնի կատարելու ճիշտ գնահատում՝ միավորային և ուսուցանող կամ բնութագրական:

Ձեր բարեկամ՝ **Թամարա Թովմասյան**

Ա. Թեմատիկ պլան

Հայ գրականություն - 10-րդ դասարան

Տարեկան՝ 102 ժամ

Շաբաթական՝ 3 ժամ

Հեղինակ՝ Թամարա Թովմասյան (մեթոդիստ-փորձագետ)

Թեմա	Ժամ	Նպատակ	Վերջնարդյունքներ
Հայ գրականության սկզբնավորումը	1	- ծանոթացնել հայ հին և միջնադարյան գրականության ընդհանուր առանձնահատկություններին:	- **Ներկայացնել** հայ հին և միջնադարյան գրականության ընդհանուր առանձնահատկությունները: **-Արժևորել** ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակութային նշանակությունը: -Ստեղծագործությունները **դիտարկել** որպես մեր ժողովրդի գոյատևման, զարգացման և առաջընթացի նախապայման: **-Գնահատել** անհատի, ընտանիքի, հասարակության ժառանգած ավանդույթները, **դիտարկել** դրանց զարգացումները որպես հայ մարդու ընդհանրական նկարագրի արտահայտություններ:
Գրերի գյուտը	1	-Ծանոթացնել գրերի գյուտի պատմաքաղաքական և մշակութային դերին ու նշանակությանը:	**Բնութագրել** գրերի գյուտը՝ իբրև հին և միջնադարյան գրականության բովանդակության, պատկերային համակարգի, ազգային արժեքների ժամանակի և տարածության համատեքստում: **Մեկնաբանել** այբուբենի, հին և միջնադարյան գրականության դերը ազգային արժեհամակարգի դրսևորման և մշակութային արժեքների պահպանման գործում:

			-**Արժևորել** գրերի գյուտը:
Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը	1	- Նպաստել գիտակցելու Մեսրոպ Մաշտոցի գործի մեծությունը:	**-Ներկայացնել** Մեսրոպ Մաշտոցի կյանքի հիշարժան դրվագները: -Կենսագրությունից ելներով՝ գնահատել Մաշտոցի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում: –**Արտահայտել** սեփական կարծիք Մաշտոցի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապել իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ: - Մաշտոցին **ներկայացնել** որպես Հայ առաքելական եկեղեցու սրբերի շարքին դասվող կերպար: -Մեսրոպի կյանքին և գործունեությանն առնչվող փաստերի միջոցով հասարակական հարաբերությունների, միջավայրի, անհատի գործի արժևորման քննություն **կատարել:** **1. -Գնահատել** Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի դերը հայ ժողովրդի կյանքում:
Հայ պատմագրություն **Ո**սկեդար: 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը	1	- Նպաստել հայրենասիրության և ազգի հարատևման գաղափարների՝ որպես հայ գրականության հիմնական բովանդակության ըմբռնմանը: - Նպաստել հետագա դարերում ստեղծված գիտական և գեղարվեստական գրականության զարգացման	-Ժամանակագրական հաջորդականությամբ **ներկայացնել** 5-րդ դարի հայ մատենագիրներին և նրանց պատմությունները: **- Բնութագրել** ոսկեդարի գրականության հերոսներին, դատողություններ անել նրանց արարքների վերաբերյալ: -**Արժևորել** հայ գրականության դերը այլ ազգերի

		ընկալմանը: -Ներշնչել հայկական և համաշխարհային պատմա-մշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցում:	գրականությունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում: **-Դրսևորել** պատասխանատու վե-րաբերմունք դրանց պահպան-ման, զարգացման, արժևորման գործում:
Ագաթանգեղոս: Կյանքն ու ստեղծագործությունը: «Հայոց պատմություն»	1	–Ծանոթացնել Հայաստանի ներքին կյանքը, հեթանոսական աստվածներին ու նրանց պաշտամունքային վայրերին: –Ծանոթացնել՝ ով է Ագա-թանգեղոսի Պատմության կենտրոնական դեմքը, և ինչ նպատակներ էր իրակա-նացնում նա:	–**Ներկայացնել** Ագաթանգեղոսի գրքի երկրորդ մասում պատմվող Հռիփսիմյան կույսերի վկայաբա-նությունը և **մեկնաբանել:** –**Մեկնաբանել՝** ինչ արժեք է ներկայացնում Ագաթանգեղոսի Պատմության չորրորդ բաժինը: –Ըստ հատվածի **ներկայացնել** 4-րդ դարի սկզբին Հայաստանի ներքին կյանքը, հեթանոսական աստվածների ու նրանց պաշ-տամունքային վայրերի մասին: –**Մեկնաբանել** Գրիգոր Լու-սավորչի ընդարձակ տեսիլքը (երազը): –**Համեմատել** հեթանոս Տրդատ արքայի կերպարը քրիստո-նեությունն առաջ և ընդունելուց հետո և վերլուծել: –Բնագրից **դուրս գրել** այդ հատվածները և **ներկայացնել** նրա ֆիզիկական հզոր ուժը: **-Մեկնաբանել** Ագաթանգեղոսի Պատմության նշանակությունը հետագա հայ պատմագրության և գրականության համար և նշել նրա գեղարվեստական արժեքը՝ ներկայացնելով դիրքորոշում:

Փավստոս Բուզանդ Կյանքն ու ստեղծագործությունը. «Հայոց պատմություն»	**1**	-Ծանոթացնել Փավստոս Բուզանդի կյանքին ու ապրած ժամանակաշրջանին:	–**Ներկայացնել՝** ժամանակագրական առումով Բուզանդի «Հայոց պատմությունը» պատմական ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում: **-Բացատրել՝** հատկապես որ ավանդավեպի հիման վրա է կառուցել Բուզանդն իր «Հայոց պատմություն» երկի զրույցները: **–Մեկնաբանել՝** ինչ դեր ունեն քրիստոնեական գաղափարներ քարոզող խրատներն ու հրաշապատումներն այս երկում: **–Թվարկել** Մամիկոնյան տոհմի անձնազոհ հերոսներին ու ներկայացնել յուրաքանչյուրի արարքները՝ ելնելով երկից: **– Գնահատել** պատմիչի պատկերած Ներսես Մեծ կաթողիկոսին: **–Բնութագրել** նրան՝ համեմատելով երկի ձեր նախընտրած կերպարի հետ:
Եղիշե Կյանքն ու ստեղծագործությունը. «Հայոց պատմություն»	1	–Ծանոթացնել Եղիշեի կենսագրությանը և ստեղծագործությանը: –Ծանոթացնել նրա դերին ու նշանակությանը հայ գրականության մեջ:	**–Ներկայացնել** Եղիշեի Պատմությունը և փաստել այդ երկի պատմական հիմքը: -**Մեկնաբանել** պատմական իրողությունը, որ առաջին անգամ ներկայացնում է Եղիշեն: -**Ներկայացնել** հեղինակի գաղափարների հիմնական կրողին և նրա երկի կենտրոնական կերպարը՝ բնագրից բերելով հիմնավորումներ: **–Գնահատել** Եղիշեի թողած գրական ժառանգությունը որպես ազգային արժեք՝ բերելով փաստեր:

Ղազար Փարպեցի Կյանքն ու ստեղծագործությունը. «Հայոց պատմություն»	1	Ծանոթացնել Փարպեցու Պատմության ժամանակաշրջանին, պատմական հիմքերին և իրադարձությունների ընդգրկմանը:	–Վահան Մամիկոնյանի կերպարով **ներկայացնել** աշխատության հիմնական գաղափարները: -**Մեկնաբանել** Փարպեցու «Պատմության» վերնագրի և բնագրի իմաստային փոխադարձ կապը նախորդ պատմիչների «Պատմությունների» հետ: -**Անվանել** վերնագրի այլընտրանքային տարբերակներ՝ պատճառաբանելով: -**Գնահատել** Փարպեցու Պատմության նշանակությունը հետագա հայ պատմագրության և գրականության համար և նշել նրա գեղարվեստական արժեքը:
Մովսես Խորենացի Մովսես Խորենացու կյանքը, ժամանակաշրջանը	1	-Նպաստել ընկալելու Մովսես Խորենացու «Հայոց պատմության» դերը հայ ժողովրդի կյանքում:	-**Ներկայացնել** Մովսես Խորենացու կյանքի հիշարժան դրվագները: **–Կազմել** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:
Երկի պատվիրատուն և կառուցվածքը: Երկի գաղափարը	1	-Նպաստել գնահատելու ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակութային նշանակությունը: -Նպաստել ստեղծագործությունը դիտարկելու որպես մեր ժողովրդի գոյատևման, զարգացման և առաջընթացի նախապայման:	-**Ներկայացնել** Պատմության կառուցվածքը և դրա մասերը: **–Հիմնավորել** կառուցվածքային մասերի փոխկապակցվածությունը, գործողությունների զարգացումը: –Սահիկաշարով **ներկայացնել** աշխատության կառուցվածքը՝ գրելով յուրաքանչյուր հատվածի մեջ հեղինակի արծարծած խնդիրները: –**Մեկնաբանել՝** ինչու և ինչպես է

			գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին՝ բերելով օրինակներ:
«Հայոց պատմություն» երկի ընդհանուր բովանդակությունը	1	-Հեղինակի ինքնության և ազգային մտածողության դրսևորումների օգնությամբ նպաստել բացահայտելու սեփական արմատները՝ տեսնելու սեփական անձը պատմականորեն ձևավորված մշակութային համատեքստում, ճանաչելու սեփական ինքնությունը:	–Երկի համապատասխան հատվածը կարդալուց հետո **ներկայացնել՝** Պատմության գրելու շարժառիթը անձնական բնույթ ունի՞, թե՞ ո՛չ: **Զուգորդել** դրանք աշխատության բովանդակության հետ: –**Ներկայացնել՝** նախորդ Պատմությունների հետ համեմատած ի՞նչ առանձնահատկություններ ունի Խորենացու Պատմությունը: **Թվարկել** և **մեկնաբանել**: –**Վերլուծել** առասպելներում առկա կոնֆլիկտները և հեղինակի առաջարկած լուծումները՝ բերելով օրինակներ: –Առասպելներում ներկայացված իրադարձությունները **համեմատել** պատմական նույն դարաշրջանի հետ՝ բերելով օրինակներ:
«Ողբը» հատվածի նշանակությունը	1	-Ազգային մտածողությամբ և մշակույթով պայմանավորված՝ **նպաստել** ընկալելու տեքստը, ըմբռնելու գրական երկում արտացոլված հայ ազգային պատմությունը, մշակույթը, ժողովրդի ոգին և հոգեբանությունը:	-«Ողբ»-ից **գտնել** տողեր, որտեղ հեղինակը պատմում է համազգային վիշտը, ցույց է տալիս մարդու հոգու խռովքի գերազանցությունը բնության տարերքի խռովքի համեմատությամբ: -Ստեղծագործաբար **վերաշարադրել** «Ողբ»-ի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները:

			–Ուսումնասիրել և **ներկայացնել** գրողի կենսագրության և «Ողբ»-ի միջև առկա կապերը: -«Ողբ»-ից **դուրս գրել** բոլոր այն մերժելի, կործանարար գծերը, որոնք թվարկում է Խորենացին: -«Ողբ»-ից **դուրս գրել** այն տողերը, որոնք խիստ արդիական են: –**Գրել** շարադրանք՝ «Ինչպիսի՞ն կուզենար տեսնել իր ազգը Խորենացին» վերնագրով: **–Ապացուցել** «Ողբի» արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր:
«Հայոց պատմության» դասերը, արդիականությունը և գրական արժեքը	1	- **Նպաստել** ըմբռնելու հեղինակի կատարած դերը ազգային մշակութային արժեքների պահպանման գործում՝ օրինակներով հիմնավորելով մեկնաբանությունը: - **Նպաստել** «Հայոց պատմությունը» դիտարկելու որպես մեր ժողովրդի գոյատևման, զարգացման և առաջընթացի նախապայման:	–**Բացատրել՝** ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին՝ հիմնավորելով օրինակներով: -**Մեկնաբանել** «Հայոց պատմություն» երկի դերն ու նշանակությունը մեր գրականության համար: –**Բացատրել և արժևորել** գրական երկի բովանդակության հիմնական և հարակից գաղափարական հարցադրումները՝ բերելով համապատասխան օրինակներ և փաստեր տվյալ ստեղծագործությունից: Կապել մեր օրերի հետ: –**Ապացուցել** Պատմության արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր:

			–**Գնահատել** ստեղծագործության նշանակությունը և գաղափարական ազդեցությունը թե՛ անհատի, թե՛ հանրության կյանքում:
Թեմատիկ գրավոր աշխատանք 1	1		
Գրիգոր Նարեկացի Կյանքը, գործունեությունը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	1	-Ծանոթացնել հայ միջնադարյան գրականության ժանրային բազմազանությանը, գաղափարական, գեղագիտական առանձնահատկություններին:	-**Ներկայացնել** Նարեկացու ապրած ժամանակաշրջանը՝ նշելով նրա ստեղծագործության գրական ուղղությունները: -Փաստերով **ցույց տալ** հեղինակի ընտրած գրական ուղղությանը բնորոշ գծերը: **-Բացատրել** Նարեկացու՝ կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ որդեգրած գրական ուղղության:
«Մեղեդի ծննդյան» տաղը, բովանդակությունը, պատկերային համակարգը	1	-Գաղափար տալ միջնադարյան գրականության թեմատիկ բովանդակության մասին:	-Կարողանալ **կարդալ** Նարեկացու տաղերը, **վերաշարադրել** դրանց բովանդակությունը: -**Ցույց տալ** տաղերի պատկերավորման միջոցները և մեկնաբանել: **-Տարբերել** և **ներկայացնել** տաղերի ոճական առանձնահատկությունները: -**Ներկայացնել** տաղերի այլաբանությունը:
«Տաղ Վարդավառի» տաղի այլաբանական բովանդակությունը, բնության պատկերումը Նարեկացու տաղերում	1	-Նպաստել ընկալելու հայ միջնադարյան քնարերգության գեղագիտական, տաղաչափական հատկանիշները:	-**Ներկայացնել** տաղի բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը: **-Կազմել** գրական երկում արծարծվող հիմնական և հարակից

			հասկացությունների աղյուսակ: -Գրական երկից սովորածը, լսած և կարդացած նյութը **վերաշարադրել** ստեղծա-գործաբար: **Փոփոխել** նկարագրվող դեպքերի ընթացքը, **մատնանշել** ինքնատիպ լուծումներ և զարգացման հնարավորություններ: - **Ուսումնասիրել** տաղի լեզուն և ոճը, օրինակներով **ցույց տալ** գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով:
«**Մատյան ողբերգության**» աղոթամատյանի կառուց-վածքը, ժանրային առանձնահատկությունը	1	-Ծանոթացնել «Մատյան ողբ-երգության» աղոթամատյանի կառուցվածքին, ժանրային առ-անձնահատկությանը:	**Կարդալ, մեկնաբանել** «Մատյան ողբերգության» աղոթամատյանից ընտրված հատվածը, մեկնաբանել հիմնական ասելիքը, կապել ամբողջ պոեմի գաղափարի հետ: **-Ներկայացնել** պոեմի կառուց-վածքը և ձևը՝ նշելով պոեմի տեսակը և առանձ-նահատկությունները: -«Մատյան ողբերգության» ստեղծագործության միջոցով **ճանաչել** մեր ինքնության ակունքները: **-Ներկայացնել** աղոթամատյանի բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը: **-Կազմել** գրական երկում արծարծվող հիմնական և հարակից հասկացությունների

			աղյուսակ: -Պոեմից սովորած, լսած և կարդացած նյութը **վերաշարադրել** ստեղծա-գործաբար: **-Փոփոխել** պոեմի պատմվող դեպքերի ընթացքը, **մատնանշել** ինքնատիպ լուծումներ և զարգացման հնարավորություններ: **-Ուսումնասիրել** և **ցույց տալ** պատմական ժամանակաշրջանի և անհատի ճակատագրի առնչությունները, անհատի գործունեության նպատակակետը: **-Ուսումնասիրել** պոեմի լեզուն և ոճը, **բացատրել** լեզվի դերը միջավայր, պատկեր, կերպար ստեղծելու, հույզեր փոխանցելու հարցում: **-Վերլուծել** գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա: **-Համեմատել** և **հակադրել** աղոթամատյանի բովանդակությունը, լեզվա-ոճական յուրահատկությունները: **-Ներկայացնել** եզրակացություն՝ շեշտադրելով գրողի բերած նորությունները: **Մեկնաբանել** հասանելի տեղեկույթը, **կառուցել** և **գնահատել** փաստարկները: **-Դրսևորել** քննական և

			դատողական մտածողություն պոեմն ընթերցելիս:
«Մատյան ողբերգության» աղոթամատյանի գաղափարական բովանդակությունը, գեղագիտական արժեքը	1	-Նպաստել գիտակցելու հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը: -Նպաստել ուսումնասիրելու գրական երկի տեքստերում կիրառված ոճական հնարների բազմազանությունը և դրանց ազդեցությունը ընթերցողի ընկալման վրա:	-**Ներկայացնել** պոեմի գաղափարը, հեղինակի ասելիքը, դրա նշանակությունը ժամանակի և տարածության համատեքստում: **-Գտնել** և **ներկայացնել** թեմային առնչվող գրական, գեղանկարչական, երաժշտական ստեղծագործություններ, մեկնաբանել, թե արվեստի այլ տեսակներն ինչպես են փոխանցում հույզերն ու գաղափարները: **-Կազմել** պատկերավորման միջոցների կիրառման աղյուսակ, կատարել գրառումներ, բացատրել ոճական միջոցների կիրառման նպատակահարմարությունը: -**Գնահատել** անհատի ժառանգած ավանդույթները, **դիտարկել** դրանց զարգացումները որպես հայ մարդու ընդհանրական նկարագրի արտահայտություններ:
Հայ առակագրության սկզբնավորումը: **Մխիթար Գոշ** Կյանքը և ստեղծագործությունը: Մխիթար Գոշի առակների թեմատիկ բաժանումն ու բովանդակությունը: «Արջը և մրջյունը», «Աստղերը» և «Ձկների թագավորը» առակները	**1**	**-Ծանոթացնել** առակագրության ժանրին, նրա գաղափարական, գեղագիտական առանձնահատկություններին: **-Ծանոթացնել** հայ միջնադարյան գրականության առակագիրների հետ: **-Ծանոթացնել** առակների ոճական առանձնահատկություններին: -**Գաղափար տալ** միջնա-	**-Ներկայացնել** առակի ժանրային հատկանիշները, հայ առակագիրների կենսագրության կարևոր դրվագները: **-Կարդալ** առակները և **մեկնաբանել** դրանց թեմատիկ առանձնահատկությունները: **-Աշխատել** բնագրի վրա, **հանդես գալ** լսարանի առաջ և մատչելի ու գրագետ **ձևակերպել** ասելիքը: **-Տարբերակել** միջնադարյան ժանրերը, հակիրճ բնորոշել

		դարյան գրականության՝ առակագրության թեմատիկ բովանդակության մասին:	դրանք: **-Ներկայացնել** առակների բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը: **-Կազմել** առակներում արծարծվող հիմնական և հարակից հասկացությունների աղյուսակ: -Առակներից սովորածը, լսած և կարդացած նյութը **վերաշարադրել** ստեղծագործաբար: **-Փոփոխել** պատմվող դեպքերի ընթացքը, **մատնանշել** ինքնատիպ լուծումներ և զարգացման հնարավորու-թյուններ:
Վարդան Այգեկցի Կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը Վարդան Այգեկցու առակները, թեմատիկ հատկանիշները, բովանդակությունը: «Իմաստուն զինվորը», «Այրի կինը և իշխանը», «Եզն ու ձին» առակները	**1**	-Գաղափար տալ միջնա-դարյան գրականության՝ առակագրության թեմատիկ բովանդակության մասին: -Ծանոթացնել հայ միջնադար-յան գրականության ժանրային բազմազանությանը, գաղափա-րական, գեղագիտական առանձնահատկություններին:	-**Ներկայացնել** առակի ժանրային հատկանիշները, հայ առակա-գիրների կենսագրության կարևոր դրվագները: -**Կարդալ** առակները և մեկնա-բանել դրանց թեմատիկ առանձնահատկությունները: -**Աշխատել** բնագրի վրա, **հանդես գալ** լսարանի առաջ և մատչելի ու գրագետ ձևակերպել ասելիքը: -**Ներկայացնել** առակների բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը: **-Կազմել** առակներում արծարծվող հիմնական և հարակից հասկացությունների աղյուսակ:

			-Առակներից սովորածը լսած և կարդացած նյութը **վերաշարադրել** ստեղծագործաբար: **-Փոփոխել** պատմվող դեպքերի ընթացքը, **մատնանշել** ինքնատիպ լուծումներ և զարգացման հնարավորություններ:
Ֆրիկ Կյանքը, ստեղծագործու-թյան բնութագիրը	1	-Նպաստել գիտակցելու հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացա-հայտողի դերը՝ ըստ Ֆրիկի -Ծանոթացնել հայ միջնադար-յան գրականության ժանրային բազմազանությանը, գաղափա-րական, գեղագիտական առանձնահատկություններին:	-**Կազմել** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանա-կակիցների հուշերի: **-Ներկայացնել** Ֆրիկի կյանքը և ստեղծագործության ընդհանուր պատկերը: **Ներկայացրել՝** ինչ պատմական ժամանակաշրջանում է Ֆրիկը գրել իր բանաստեղծությունները: -**Ներկայացնել՝** անձնական ինչ ողբերգություն է ապրել Ֆրիկը:
«Ընդդեմ ֆալաքին» (Բանք ի Ֆրիկ գրքոյն) բանաստեղծությունը	1	-Ծանոթացնել Ֆրիկի ազգային և սոցիալական թեմաներով գրված բանաստեղծություն-ներին:	-**Կարդալ** Ֆրիկի «Ընդդեմ ֆալաքին», բանաստեղծությունը՝ արձակ վերաշարադրելով դրա բովանդակությունը և կարողանալ **մեկնաբանել:** -**Ներկայացնել** «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծության մեջ հեղինակի արծարծած խնդիրները: -**Հիմնավորել** «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծության արդիակա-նությունը՝ բերելով օրինակներ: -**Բացատրել**՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և իր կերպարը՝ հիմնավորելով

			օրինակներով: -**Արժևորել** հեղինակի կատարած դերը ազգային մշակութային արժեքների պահպանման գործում՝ օրինակներով հիմնավորելով մեկնաբանությունը: -**Ցույց տալ** բանաստեղծության պատկերավորման միջոցները:
«Գանգատ» բանաստեղծությունը: Հայ միջնադարյան քնարերգության գեղագիտական, տաղաչափական արվեստը:	1	-Նպաստել ընկալելու հայ միջնադարյան քնարերգության գեղագիտական, տաղաչափական արվեստի առանձնահատկությունները: -Ծանոթացնել Ֆրիկի բանաստեղծական արվեստի յուրահատկություններին:	-**Կարդալ** Ֆրիկի «Գանգատ» բանաստեղծությունը՝ արձակ վերաշարադրելով բովանդակությունը և կարողանալ մեկնաբանել: -**Ներկայացրել** «Գանգատ» բանատեղծության մեջ բանաստեղծի արծարծած խնդիրները: -«Գանգատ» բանաստեղծությունից **դուրս գրել** անարդարությունները նկարագրող հակադրությունները: -Պատմության դասագրքից կարդալ թաթար-մոնղոլական տիրապետության շրջանում հայ իրականությանը վերաբերող հատվածը և **համեմատել** Ֆրիկի «Գանգատի» հետ: -**Ցույց տալ** բանաստեղծության պատկերավորման միջոցները և կատարել բառային աշխատանք:
Նահապետ Քուչակ Կյանքը, ստեղծագործության բնութագիրը: Հայրենի ժանրը	1	-Ծանոթացնել հայ միջնադարյան գրականության ժանրային բազմազանությանը, գաղափարական, գեղագիտական առանձնահատկություններին:	-**Ներկայացրել** Նահապետ Քուչակի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության: -**Կազմել** գրողի գրական

			դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի: -Ընդհանուր գծերով **բնութագրե**լ հայրենների բովանդակությունը՝ ըստ տեսակի: -**Ցույց տալ** հայրենի ժանրի առանձնահատկությունները:
Սիրային հայրեններ	**1**	-Ծանոթացնել սիրային հայրենների ներքին բովանդակային առանձնա-հատկություններին:	**-Տարբերել** Քուչակի ստեղծագործությունների թեմատիկան և տաղաչափական առանձնահատկությունները: -**Վերաշարադրել** հայրենների բովանդակությունը՝ ներկայացնելով հեղինակի արծարծած խնդիրները: **- Ներկայացնել** սիրային հայրենների բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը: **-Կազմել** հայրեններում արծարծվող հիմնական և հարակից հասկացությունների աղյուսակ: -Հայրեններից սովորածը, լսածը և կարդացածը **վերաշարադրել** ստեղծագործաբար: -**Ուսումնասիրել և ցույց տալ** պատմական ժամանակաշրջանի և անհատի ճակատագրի առնչությունները, անհատի գործունեության նպատակակետը: **Նկարագրել** հայրենների քնարական հերոսուհուն՝ օգտվելով սիրո հայրենների բառապաշարից: **Նկարագրել** հայրենների

			քնարական հերոսուհուն՝ օգտվելով հեղինակային բառապաշարից:
Պանդխտության հայրեններ	1	-Նպաստել հասկանալու հայ պանդուխտի նյութական ու հոգևոր վիճակը Ֆրիկի բանաստեղծություններում: -Նպաստել ընկալելու հայ միջնադարյան քնարերգության գեղագիտական, տաղաչափա-կան առանձնա-հատկությունները:	**-Կարդալ** Քուչակի հայրենները, վերաշարադրել դրանց բովանդակությունը և մեկնաբանել: -Կարողանալ անգիր **արտասանել** հայրեններից մի քանիսը: -**Գնահատել** հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը: **-Ներկայացնել** Քուչակի լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ: -Հայրեններից **դուրս գրել** համեմատություններ, փոխաբերություններ, մակդիրներ, պատկերավորման այլ միջոցներ:
Թեմատիկ գրավոր աշխատանք 2	**1**		
Սայաթ-Նովա Սայաթ-Նովայի կյանքը, գործունեությունը	1	-Ծանոթացնել Սայաթ-Նովայի կենսագրության կարևոր փաս-տերին:	-**Ներկայացրել** Սայաթ-Նովայի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության: **-Կազմել** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:
Սայաթ-Նովայի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	**1**	-Գաղափար տալ Սայաթ-Նովայի ստեղծագործություն-ների թեմատիկ բովանդակութ-յան մասին:	- **Կարևորել** Սայաթ-Նովայի դերը հայ միջնադարյան գրականության մեջ: -**Կարողանալ կարդալ** Սայաթ-

			Նովայի խաղերը, վերաշարադրել դրանց բովանդակությունը:
Սիրո երգը	1	-Նպաստել գիտակցելու Սայաթ-Նովայի ներդրումը սիրային թեմաներով գրած տաղերում: -Նպաստել ընկալելու հայ միջնադարյան քնարերգության գեղագիտական, տաղաչափական առանձնա-հատկությունները:	-**Տարբերել** խաղերի թեմատիկ առանձնահատկությունները: **-Վերաշարադրել** խաղերի բովանդակությունը՝ ներկայացնելով բանաստեղծի արտահայտած հույզերը: -**Վերլուծել** և **դատողություններ անել** խաղերի կառուցվածքի, հիմնական գաղափարների շուրջ: -**Ցույց տալ** խաղերի պատկերա-վորման միջոցները և մեկնաբանել:
«Թամամ աշխար պըտուտ էկա» խաղը	1	Նպաստել ստացած գիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով բանավոր/գրավոր կերպով վերարտադրելուն:	-**Դուրս գրել** Թիֆլիսի բարբառին բնորոշ բառերը և մեկնաբանել: **-Վերաշարադրել** խաղի բովանդակությունը՝ ներկայացնելով բանաստեղծի արտահայտած հույզերը: **-Կազմել** բացատրական բառարան՝ ներկայացնելով Թիֆլիսի բարբառին բնորոշ բա-ռերը և դրանց բացատրու-թյունները:
«Դուն էն գլխեն իմաստուն իս» խաղը	1	-Նպաստել ընկալելու Սայաթ-Նովայի խոհախրատական բանաստեղծությունների բարոյախոսական իմաստը:	-Սայաթ-Նովայի խրատական տաղերում պատկերված իրակա-նությունը, բարոյական միջավայրը **համեմատել** ժամանակակից իրականության և մերօրյա բարքերի հետ՝ բանավեճ կազմակերպելով այս հարցի շուրջ: -Ժամանակակից տեխնոլոգիա-ների կիրառմամբ **ստեղծել**

			թեմային վերաբերող տեսադաս կամ սահիկաշար՝ մեկնաբանելով:
«Աշխարըս մե փանջարա է» տաղը	1	-Նպաստել ընկալելու Սայաթ-Նովայի երգարվեստի առանձնահատկությունները:	-Սայաթ-Նովայի խրատական տաղերում պատկերված իրականությունը, բարոյական միջավայրը **համեմատել** ժամանակակից իրականության և մերօրյա բարքերի հետ՝ բանավեճ կազմակերպելով այս հարցի շուրջ:. -**Մեկնաբանել՝** ինչ կերպ են արտահայտվում բնագրում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը բանաստեղծի ասելիքի, ոճի, բառապաշարի, կառուցվածքի վրա: -**Ներկայացնել՝** ինչ կերպ են արտահայտվում բնագրում հույզը, զգացմունքը, ապրումը: **-Ներկայացնել** Սայաթ-Նովայի լեզվաոճական առանձնահատ-կությունները՝ բերելով օրինակներ:
Հայ նոր գրականության զարգացման փուլերը	1	-Գաղափար տալ հայ նոր գրականության սկզբնավոր-ման, զարգացման ընդհանուր ընթացքի և առանձին փուլերի մասին:	-**Վերլուծել** հայ նոր գրականութ-յան սկզբնավորման ու զարգաց-ման պատմությունը, ճանաչել հեղինակներին: **-Գնահատել** հայ գրականության իմացությունը՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման, ազգային մշակութային արժեքների գնահատման կարևոր պայման: **-Գիտակցել**՝ հայ և համաշխա-րային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերել պատասխանատու վերաբերմունք դրանց

			պահպանման և լուսաբանման գործում:
Գրական ուղղություններ	**1**	-Ծանոթացնել տվյալ ժամանակաշրջանում գերիշխող գրական ուղղություններին, տարածված գրական ժանրերին:	**-Ճանաչել և տարբերել** հայ գրականության մեջ ռոմանտիզմի, ռեալիզմի դրսևորման ձևերը: - Քննության **ենթարկել** հեղինակների ռոմանտիկական և ռեալիստական հայացքների դրսևորումները:
Խաչատուր Աբովյան Կյանքը և հասարակական գործունեությունը:	1	-Ծանոթացնել Խաչատուր Աբովյանի կյանքին, նրա հասարակական գործունեությանը: -Նպաստել իմանալու հեղինակի տեղն ու դերը մեր գրականության մեջ:	**Ուսումնասիրել** և **ճանաչել** գրողի ապրած ժամանակաշրջանը, **ներկայացնել** գրողի կենսագրությունը, հուշեր նրա մասին: -Գրողի կենսագրական փաստերի, նրա հայրենանվեր գործունեության, կերտած հայրենասեր, կամային հերոսների օրինակով **զբաղվել** ինքնադաստիարակությամբ: **-Ներկայացնել** հեղինակի ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, գաղափարների արդիականությունը, ժամանակագրությունը և համեմատել մեր օրերի հետ:
Խաչատուր Աբովյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	1	-Նպաստել ունենալու որոշակի գիտելիքներ վեպի գաղափարի, բերած նորության մասին: -Գաղափար տալ «Վերք Հայաստանի» վեպի, այն գրելու շարժառիթների, քննվող խնդիրների, պատկերվող դարաշրջանի, պատմական հիմքի մասին:	- **Ներկայացնել՝** ինչ ժանրերով է ստեղծագործել Աբովյանը: **Բացատրել՝** նրա ստեղծագործությամբ ի՞նչ նոր ուղղություն սկզբնավորվեց հայ գրականության մեջ: **Պարզաբանել՝** հեղինակի որ երկերը հիմք դրեցին հայոց նոր մանկավարժությանը: **Ներկայացնել** Աբովյանի անհատականությունը՝ ելնելով նրա՝ գրականություն բերած

			նորություններով: **Ներկայացնել** հեղինակի ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, գաղափարների արդիակա-նությունն ու ժամանակա-գրությունը և համեմատել մեր օրերի հետ: **Մշակել** երևակայական հարցա-զրույց հեղինակի և պատմողի հետ: **Գնահատել** գրող-քաղաքացուն, նրա ծավալած գործունեությունը ազգային արժեքների և գաղափարախոսության պահպանման, զարգացման և տարածման գործում:
«Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը»	1	-Նպաստել գիտակցելու հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը:	-**Ներկայացնել** հեղինակի ապրած ժամանակաշրջանը, տվյալ երկի գրության շարժառիթները: **-Կարդալ** վեպի «Հառաջաբանը»՝ ընկալելով կարդացածի արտա-հայտած ենթատեքստը: **-Նշել** հեղինակի և պատմողի տարբերությունը, վեպում արտահայտված հույզը, զգացմունքը:
Վեպի սյուժեն և կառուցվածքը	1	-Ծանոթացնել վեպի կառուցվածքին, սյուժեին և բովանդակությանը:	**Վերարտադրել** գրական երկի դիպաշարը (սյուժեն): -Բնագրից բերված օրինակներով **մատնանշել** դիպաշարի հիմնական մասերը՝ նախադրություն, հանգույց, գործողության զարգացում, գագաթնակետ, լուծում: **-Ներկայացնել** հեղինակի

			կյանքի, բնագրի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ազդեցության, վեպի բառապաշարի, ոճի, կառուցվածքի, ժանրային առանձնահատկությունն**ե**րի, ժամանակի ընթացքում ժանրի որոշակի ձևափոխությունների, պատկերի, կերպարի, կոնֆլիկտի, հեղինակի և պատմողի տարբերության մասին: -**Ներկայացնել** գրական երկի դիպաշարը, նշել գործողությունների հաջորդական ընթացքը՝ ցույց տալով դիպաշարի և երկի բովանդակության աղերսները: -**Ընդգծել** գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը/ բանալի միտքը, մեկնաբանել: -**Գտնել** տեքստում պատկերված խորհրդանիշները, բացատրել դրանց նշանակությունը: -Կարդացած հատվածից **ընտրել** պատմողներ և **ստեղծել** վերջիններիս բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:
Վեպի գաղափարն ու կերպարները	1	-Նպաստել ընդլայնելու գիտելիքները բնագրում պատկերված բնության, հայրենիքի, նրա ճակատագրի, մարդկային ապրումի՝ մենության, կարոտի, սպասման, հայրենասիրության, ատելության, սիրո, գեղեցկության և այլնի մասին:	-**Ներկայացնել** վեպի գաղափարը/ գաղափարները: -**Մեկնաբանել** ստեղծագործությունը՝ ըստ առանձին հատվածների՝ ելնելով կառուցվածքից, կերպարներից:

			-Վերլուծել գլխավոր հերոսի արդիական լինելը՝ համաժամանակայնությունը: **-Բացահայտել** հերոսների արտաքինը նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծերը: **-Ներկայացնել** գլխավոր հերոսի ծագումը, մանկությունը, շրջապատը՝ համեմատելով իր հետ: -**Բացահայտել** հերոսների գաղափարական և բարոյական դիրքորոշումը: -**Ներկայացնել** գլխավոր հերոսի քաղաքական-հասարակական գործունեությունը՝ բնագրից բերելով փաստեր՝ ասածները հաստատելու համար: **-Բացահայտել** հեղինակի վերաբերմունքն իր հերոսների նկատմամբ: **-Ներկայացնել** սեփական կարծիքը, մեկնաբանությունը դրական կամ բացասական հերոսների մասին: -**Բացահայտել՝** ուրիշ ինչ հեղինակներ կամ արվեստագետներ են անդրադարձել Աղասու կերպարին՝ ինչ նպատակով և ինչպես: **-Ներկայացնել** գրական հերոսի արդիական լինելը՝ համաժամանակայնությունը:

			-Մեկնաբանել գրողի օգտագործած բառապաշարը՝ միջավայր, տրամադրություն, կերպարներ ստեղծելու նպատակով:
Գրողի ստեղծագործության ոճական ու գեղագիտական արվեստը	1	-Նպաստելու ըմբռնել ուսումնասիրվող երկրի տեղն ու դերը նրա գրական ժառանգության մեջ, հասկանալու երկի ոճական առանձնահատկությունները:	-**Գնահատել** ստեղծագործության նշանակությունը և գաղափարական ազդեցությունը թե՛ անհատի, թե՛ հանրության կյանքում: **-Համեմատել** տարբեր ստեղծագործություններ՝ ըստ կերպարների ստեղծման, կառուցվածքային տարրերի փոխկապակցվածության, ոճական միջոցների կիրառության և այլն: **-Գնահատել** գրող-քաղաքացուն, նրա ծավալած գործունեությունը ազգային արժեքների և գաղափարախոսության պահպանման, զարգացման և տարածման գործում: **-Ուսումնասիրել** գրական տեքստի լեզուն և ոճը, օրինակներով ցույց տալ գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով: -Բնագրի հատվածում **գտնել** և **բացատրել** ժանրով պայմանավորված լեզվական իրողությունների կիրառումը (բառագործածություն, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքներ):
Թեմատիկ գրավոր աշխատանք 3	1		

Ռաֆֆի Կյանքն ու գործունեությունը	1	-Ծանոթացնել Ռաֆֆու կյանքին, ապրած ժամանակաշրջանին, գործունեությանը:	**Կազմել** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի: **-Ներկայացնել** Ռաֆֆու կյանքից հետաքրքիր դրվագներ, ապրած ժամանակաշրջանը: -Մեծերի կարծիքների հիման վրա **բնութագրել** Ռաֆֆուն սեփական պատկերացմամբ: **-Կազմել** սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը:
Ռաֆֆու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	1	-Ծանոթացնել Ռաֆֆու ստեղծագործության ընդհանուր բնութագրին, ստեղծագործական շրջափուլերին, թեմատիկային: -Նպաստել ունենալու որոշակի գիտելիքներ վեպի/պատմավեպի ժանրի, գրական ուղղությունների մասին:	**-Թվարկել** հեղինակի ստեղծագործությունները և զանազանել յուրաքանչյուր ստեղծագործության ժանրային պատկանելությունը, առանձնահատկությունը: **-Կարդալ՝** ընկալելով կարդացածի ենթատեքստը: **Քննարկել** հեղինակի արծարծած խնդիրների տարբեր ընկալումներն ու բազմակողմանի մեկնաբանությունները: -Հիմնվելով գրողի ապրած ժամանակաշրջանի և կենսագրական փաստերի վրա՝ ստեղծագործական խնդիրները **դիտարկել** տարածության և ժամանակի համատեքստում: **-Քննարկել** հեղինակի արտահայտած տեսակետների փոփոխությունները և դրանց առաջացման պատճառները (մշակույթ, մտածողություն,

			արժեհամակարգ, ազգային պատկանելություն և այլն), **դիտարկել** ժամանակավրեպ կամ արդիական մոտեցումները: -**Ուսումնասիրել** Ռաֆֆու երկերում կիրառված ոճական հնարների բազմազանությունը և դրանց ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա:
«Սամվել» պատմավեպի պատմական հիմքը	1	-Գաղափար տալ «Սամվել» պատմավեպի, նրա գրության շարժառիթների, պատկերվող դարաշրջանի, պատմական հիմքի մասին:	**Կազմել** պատումի ժամանակագրական քարտեզ՝ կարևորելով կառուցվածքային տարրերը: **Դուրս գրել** գաղափարական հարցադրումները, **նկարագրել** ժամանակաշրջանը, միջավայրը: **Մեկնաբանել** ստեղծագործությունը՝ ըստ առանձին հատվածների՝ ելնելով կառուցվածքից, կերպարներից:
Վեպի կառուցվածքը, սյուժեն բովանդակությունը, և գաղափարը	1	-Նպաստել ուսումնասիրելու վեպի կառուցվածքը, դիպաշարն, հերոսներին, գաղափարը:	**Ցույց տալ և բացատրել** գրական կերպարի զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, դրանց զարգացումը և համոզիչ կամ անհամոզիչ լուծումները: -**Ներկայացնել** գրական երկի կառուցվածքը, դրա մասերը: **Հիմնավորել** սյուժեի կառուցվածքային մասերի փոխկապակցվածությունը, զարգացումը:
Կիսամյակային կրկնություն	1		
		ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ	
«Սամվել» պատմավեպի կերպարները: Դրական կերպարները	1	Նպաստել գիտակցելու հայկական և համաշխարհային	-**Ճանաչել** գլխավոր հերոսին և տարբերել մյուսներից:

		պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը, դրսևորել պատաս-խանատու վերաբերմունք այդ արժեքների պահպանման, զարգացման, արժևորման գործում:	**-Վերլուծել** գրական կերպարի զարգացման քայլաշարը: -**Թվարկել** գլխավոր կերպարները՝ տարբերակելով հայրենասեր և դավաճան ուժերին: **-Վերլուծել** վեպի կերպարները՝ վեր հանելով նրանց արարքների պատճա-ռահետևանքային կապերը:
Սամվելի կերպարը	1	-Նպաստել գնահատելու հայ և համաշխարհային գրականության լավագույն երկերի բովանդակության իմացությունը և գաղափարական ըմբռնումը՝ որպես ինքնաճանաչման, սեփական անձի, աշխար-հայացքի ձևավորման և ազգային մշակութային արժեքների պահպանման, հետագա զարգացման կարևոր պայման:	-**Ներկայացնել** Սամվելին որպես պատմական անձնավորություն: -Բնագրից **դուրս գրել** այն հատվածը, որտեղ ընթերցողը առաջին անգամ հանդիպում է Սամվելի հետ և **բնութագրել** նրան՝ սկզբնական տպավորությամբ: -Սամվելի ժողովրդականությունը ապացուցող **փաստեր բերել** բնագրից՝ հիմնավորելով: **-Բացահայտել** հերոսի ներքին դրաման ու տագնապը՝ օրինակներ բերելով բնագրից: -Վերլուծաբար **մեկնաբանել** որդու և ծնողների գաղափարական հակա-մարտությունը՝ արտահայտե-լով դիրքորոշում: **-Մեկնաբանել** Սամվելի՝

			հայրենիքի նկատմամբ սերը և ծնողական-մարդկային ներքին զգացումը՝ մեկնաբանելով նրա արարքների պատճառա-հետևանքային կապերը: -Սամվելին **համեմատել** որևէ այլ ստեղծագործության հերոսի հետ, գտնել նմանություններ, տարբերութ-յուններ և ընդհանրություններ:
«Սամվել» պատմավեպի բացասական կերպարները	1	-Նպաստել արժևորելու հայ գրականության դերը այլ ազգերի գրականութ-յունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում:	-**Բացատրել** Ռաֆֆու՝ կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ իր որդեգրած գրական ուղղության: **-Բացատրել** երկու գլխավոր նախարարների դավաճանու-թյան պատճառները՝ ըստ վեպից ընտրված հատվածների: **-Մեկնաբանել** թագուհու կերպարը՝ նշելով նրա քաջությունը, անկոտրում կամքը և հայրենասիրությունը: **-Ներկայացնել** գլխավոր հերոսներից յուրաքանչյուրի զգացմունքների պայքարը: -Փաստերով **ցույց տալ** նրանցից յուրաքանչյուրին բնորոշ գծերը:

Վեպի կին հերոսները	1	-Ծանոթացնել վեպի կին հերոսներին, որոնք ամեն ինչից վեր են դասում հայրենիքի շահը:	**Ներկայացնել** Աշխենին որպես հայրենասեր անձնավորություն՝ բնագրից բերելով համապատասխան օրինակներ: -Բնագրից **դուրս գրել** այն հատվածը, որտեղ ընթերցողը առաջին անգամ հանդիպում է Աշխենին և **բնութագրել** նրան՝ սկզբնական տպավորությամբ: -Աշխենի հայրենասիրությունը ապացուցող **փաստեր բերել** բնագրից՝ հիմնավորելով: **-Բացահայտել** մյուս կին հերոսների կերպարները՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի ապրած ներքին դրաման ու տագնապները՝ օրինակներ բերելով բնագրից: -Վերլուծաբար **մեկնաբանել** Համազասպուհու և Տաճատուհու գաղափարական հակամարտությունը՝ արտա-հայտելով դիրքորոշում: **-Մեկնաբանել** Տաճատուհու՝ հայրենիքին դավաճանությունը և ծնողական-մարդկային ներքին զգացումը՝ մեկնաբանելով նրա արարքների պատճառա-հետևանքային կապերը: -Տաճատուհուն և մյուս կին հերոսներին **համեմատել** որևէ

			այլ ստեղծագործության հերոսի հետ, գտնել նմանություններ, տարբերութ-յուններ և ընդհանրություններ:
Մուրացանի Կյանքը և գործունեությունը	1	-Ծանոթացնել Մուրացանի կյանքին ու գործունեությանը:	**-Բնութագրել** Մուրացանին նրա կենսագրականում եղած տեղեկությունների հիման վրա: **-Պատմել** իր մանկության տարիներից հետաքրքիր պատմություններ՝ դրանք զուգորդելով Մուրացանի կյանքի հետ: -**Ուսումնասիրել** և **ճանաչել** գրողի ապրած ժամանա-կաշրջանը, ներկայացնել գրողի կենսագրությունը, հուշեր նրա մասին: **-Կազմել** սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը: **-Հորինել** մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց գրողի հետ:

Մուրացանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	**1**	-Ծանոթացնել հեղինակի ստեղծագործության ընդհանուր պատկերին:	-Կենսագրությունից ելներով՝ գնահատել կյանքն ու ստեղծագործությունը նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:
Պատմագեղարվեստա-կան երկերը	1	-Ծանոթացնել Մուրացանի պատմագեղարվեստական երկերին: -Ունենալ որոշակի գիտելիքներ պատմավեպի ժանրի և հեղինակի գրական հայացքների մասին:	**-Թվարկել** Մուրացանի հայտնի ստեղծագործությունները և ներկայացնել դրանց ժանրային առանձնահատ-կությունները՝ փաստերով ցույց տալով դրանցից յուրաքանչյուրին բնորոշ գծերը:
«Գևորգ Մարզպետունի» վեպը գրելու շարժառիթն ու պատմական ժամանակաշրջանը	1	-Գաղափար տալ «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի, նրա գրության շարժառիթների, պատկերվող դարաշրջանի, պատմական հիմքի մասին:	-**Ներկայացնել** հերոսի ապրած հոգեբանական դրաման՝ հիմնավորելով բնագրից բերված օրինակներով: -**Մեկնաբանել** վեպի պատմական հիմքերը՝ բերելով համապատասխան փաստեր: -Ուսումնասիրելով և ճանա-չելով գրողի ապրած ժամա-նակաշրջանը, **հետազոտել** և **ներկայացնել** տվյալ երկի գրության շարժառիթները, պատմական հիմքը:
«Գևորգ Մարզպետունի» պատմավեպի սյուժեն և կառուցվածքը	1	-Նպաստել զանազանելու վեպի կառուցվածքը, սյուժեն, հերոսներին, գաղափարը:	-Կարողանալ **կարդալ՝** ընկալելով կարդացածի ենթատեքստը: -**Ներկայացնել** վեպի կառուցվածքը, դրա մասերը:

			-**Ներկայացնել** վեպի դիպաշարը, նշել գործողությունների հաջորդական ընթացքը: -**Ցույց տալ** դիպաշարի և երկի բովանդակության աղերսները: -**Բացատրել** «Գևորգ Մարզպետունի» վեպի բովանդակության հիմնական և հարակից գաղափարական հարցադրումները՝ բերելով համապատասխան օրինակներ և փաստեր տվյալ ստեղծագործությունից:
«Գևորգ Մարզպետունի» պատմավեպի գաղափարն ու գլխավոր կերպարները	2	-Նպաստել գիտակցելու հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը	-**Ներկայացրել** «Գևորգ Մարզպետունի» վեպի գլխավոր գաղափարը/գաղափարները: -**Վերշարադրել** գրական երկի բովանդակությունը՝ որպես ականատես: -**Բացահայտել** գլխավոր կերպարի զարգացումը: -**Թվարկել** և **վերլուծել** վեպի գլխավոր կերպարները: -Վեպից **բերել**, օրինակը որոնք արտահայտում են մարդկային բարոյական վեհ արարքներ, ինչպես՝ հերոսությունը, հայրենասիրու-թյունը, նվիրվածությունը: -Վեպից **բերել** տողեր, որոնք

			արտահայտում են մարդկային բարոյական անկման դրսևորումներ, ինչպիսիք են՝ դավաճանությունը, ագահությունը, բռնությունը:
«Գևորգ Մարզպետունի» պատմավեպի մյուս կերպարները	1	-Գրողի կենսագրական փաստերի, նրա հայրենանվեր գործունեության, կերտած հայրենասեր, կամային հերոսների օրինակով սովորողի ինքնադաս-տիարակությանը: -Զարգացնել արդարամտություն, լայնախոհություն, համարձակություն, հավասարակշռվածություն, համառություն, ցկյանս սովորող և զարգացող անհատականություն:	**-Բացատրել** Մուրացանի՝ կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ այս վեպի և իր որդեգրած գրական ուղղության: -**Ցույց տալ** և **բացատրել** վեպի գրական կերպարների զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, կոնֆլիկտի զարգացումը և համոզիչ կամ անհամոզիչ լուծումները: -**Թվարկել** և **վերլուծել** վեպի երկրորդական կերպարները: **-Վերլուծել** վեպի տրված հատվածը՝ վեր հանելով պատճառահետևանքային կապերը: **-Հիմնավորել** սեփական տեսակետը՝ երկից բերված օրինակներով: Տարբերել երկի հեղինակին և դեպքերը պատմողին: **-Հորինել** պատում՝ որպես վերնագիր կամ բնաբան կիրառելով գրական երկից վերցված որևէ բառ, բառակապակցություն կամ նախադասություն՝ կիրառելով

			հարուստ բառապաշար և արտահայտչամիջոցներ: **Գնահատել «**Գևորգ Մարզպետունի» վեպի նշանակությունը և գաղափարական ազդեցությունը թե՛ անհատի, թե՛ հանրության կյանքում: -**Ապացուցել** վեպի արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր:
Թեմատիկ գրավոր աշխատանք 4	1		
Հակոբ Պարոնյան Կյանքը և ստեղծագործությունը	1	-Ծանոթացնել Պարոնյանի կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրին: -Նպաստել ունենալու որոշակի գիտելիքներ երգիծանքի, հեղինակի որդեգրած գրական ուղղության մասին:	-**Կազմել** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի: -**Դուրս գրել** գաղափարական հարցադրումները, նկարագրել ժամանակաշրջանը, միջավայրը:
«Մեծապատիվ մուրացկանները» երգիծական-մենագրական վեպի սյուժեն, կառուցվածքը և գաղափարը	**1**	-Գաղափար տալ երգիծանքի և «Մեծապատիվ մուրացկան-ները» երգիծական վեպի մասին: -Նպաստել վեպի կառուցվածքը, սյուժեն, հերոսներին, գաղափարը ընկալելուն:	**-Կարդալ** արևմտահայերեն բնագիրը՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը: -**Կազմել** վեպի ժամանակագրական քարտեզ՝ կարևորելով կառուցվածքային տարրերը: -**Մեկանաբանել** ստեղծագործությունը՝ ըստ առանձին հատվածների՝ ելնելով կառուցվածքից:

			-Մեկնաբանել գործողությունների գարգացման ընթացքը և ներկայացնել սեփական դիրքորոշում:
«Մեծապատիվ մուրացկանները» վեպի կերպարները: Աբիսողոմ աղայի կերպարը	1	-Նպաստել գիտակցելու հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացա-հայտողի դերը:	-Բնութագրել Աբիսողոմ աղային, նրա արարքները՝ մեկնաբանելով սոցիալ-հոգեբանական տեսանկյունից: -Ներկայացնել Աբիսողոմ աղային որպես միջոց՝ ցուցադրելու ազգի մտավոր ու բարոյական կացությունը՝ բնագրից բերելով համապատասխան օրինակներ: -Ստեղծագործաբար **վերաշա-րադրել** վեպի բովանդակու-թյունը՝ կիրառելով բնագրից սովորած նոր բառեր և պատկերավոր արտահայտություններ: **-Մեկնաբանել** հեղինակի հույզերն ու ապրումները և դրանց ազդեցությունը անձի վրա: **Բնութագրել** աղջկան՝ օգտվելով հեղինակային բառապաշարից: **Բացատրել՝** ժամանակը, միջավայրը ինչ կերպ են ազդել հերոսի հոգեբանության վրա: **Գնահատել** հեղինակի

			վարքագիծը և **արտահայտել** վերաբերմունք նրա հանդեպ: -Ստեղծագործաբար **վերարտադրել** գրական երկի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստերից ընտրած արտահայտչա-միջոցները: -Գրել ստեղծագործական փոխադրություն գրական երկի թեմաներով:
Մեծապատիվ մուրացկանների կերպարը	1	-Ծանոթացնել Պարոնյանի երգիծանքի ժանրային տարբերակներին՝ ըստ առարկայի և երևույթի հանդեպ հեղինակի ունեցած դիրքորոշման:	**-Թվարկել** մեծապատիվ մուրացկաններին, մեկնաբանել նրանց արարքները՝ հիմնավորելով բնագրից բերած օրինակներով: -**Հիմնավորել՝** ինչու է Պարոնյանը վեպը վերնագրել «Մեծապատիվ մուրացկանները» և ոչ թե այլ վերնագրով: Սա պատահակա՞ն է արդյոք, թե՞ մտացածին: -Ձեր կարծիքով այս երկը քանի՞ գաղափար է արտահայտում: Խմբով **քննարկել,** թե ինչու եք այդպես մտածում: **Ձևակերպել** գաղափարը սեփական բառերով: **-Բնութագրել** վեպի երկրորդական կերպարները առանձին-առանձին՝

			ապացուցելով նրանց «մեծապատիվ մուրացկան» լինելը: -**Ներկայացնել** վեպում արտա-հայտված հույզերն ու ապրումները: -**Մեկնաբանել** կամ **հիմնավորել** գրողի ոճական հնարների ընտրությունը (մեկնաբանել գրող- ընթերցող կապը, բերել համապատասխան օրինակներ՝ անդրադառնալով լեզվական, պատկերավորման, կերպավորման միջոցներին, նկարագրություններին, երկխոսություններին և այլն): **-Հորինել** պատում՝ որպես վերնագիր կամ բնաբան ընտրելով գրական երկից:
Շիրվանզադե Կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Ռեալիզմի առանձ-նահատկությունները. Շիրվանզադեի ռեալիզմը	1	-Ծանոթացնել Շիրվանզադեի կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր պատկերին:	**-Ներկայացնել** Շիրվանզադեի ապրած ժամանակաշրջանը և ստեղծագործության ընդհա-նուր պատկերը: **- Կազմել** սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը: -**Ներկայացնել** հեղինակի կենսագրության հիմնական փաստերն ու ապրած ժամանակաշրջանը և դրանց ազդեցությունը նրա ստեղծագործության վրա: **-Ցույց տալ** Շիրվանզադեի

			գրական կերպարները՝ ելնելով գրողի և նրա ստեղծագործության մասին նշանավոր մարդկանց ասույթներից ու կարծիքներից:
Շիրվանզադեի դրամատուրգիան. «Պատվի համար»	1	-Ծանոթացնել դրամատուրգիայի ժանրային առանձնահատկութ-յուններին:	**-Ներկայացնել** դրամատուր-գիայի ժանրային առանձնահատկությունները: **-Ներկայացնել** դրամայի կառուցվածքը և սյուժեն, բաղկացուցիչ մասերը: **-Վերլուծել** կերպարները՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի կատարած արարքի դրդապատճառները և ներքին դրաման: **-Մեկնաբանել** «Պատվի համար» դրամայում արտահայտված սոցիալական և գեղագիտական արժանիքները:
Շիրվանզադեի «Քաոս» վեպի սյուժեն, ներկայացված խնդիրները	1	-Գաղափար տալ ռեալիզմի գրական առանձնահատկությունների և «Քաոս» վեպի մասին: -Նպաստել ունենալու որոշակի գիտելիքներ դրամայի ժանրի մասին:	-**Կարդալ՝** ընկալելով կարդացածի ենթատեքստը: **-Ներկայացնել** այն հիմնախնդիրները, որոնք հիմք են ծառայել վեպ գրելուն: **-Ներկայացնել** վիպական գործողությունների կատարման ժամանակա-հատվածը, վայրը, միջավայրը: -Երկը կարդալուց հետո **ներկայացնել՝** արդյոք վեպ գրելու շարժառիթը անձնական

			բնույթ ունի, թե ո՛չ: **Զուգորդել** երկի բովանդակության հետ: -**Վերարտադրել** վեպի գործողությունների գարգացման ընթացքը և **նշել** թեման:
Վեպի կառուցվածքը, սյուժեն և գաղափարա-կան բովանդակությանը:	1	-Ծանոթացնել վեպի կառուցվածքին, սյուժեին, գաղափարական բովանդա-կությանը:	**-Բացատրել** վեպի կառուց-վածքային առանձնահատ-կությունները՝ ներկայացնելով սյուժեի բաղկացուցիչ մասերը: **-Նկարագրել** գրական երկի կառուցվածքը, սյուժեն, գաղափարը: -**Հիմնավորել** կառուցվածքային մասերի փոխկապակցվածությունը, զարգացումը: -**Ներկայացնել** վեպի գաղափարական բովանդակությունը: -**Մեկնաբանել՝** քանի գաղափար է արտահայտում վեպը՝ **ձևակերպելով** գաղափարը սեփական բառերով:
Շիրվանզադեի «Քաոս» վեպի կերպարները:	1	Ծանոթանալ կերպարներին:	-**Թվարկել** ու **զանազանել** դրական և բացասական

Մարկոս և Սմբատ Ալիմյաններ			կերպարները՝ հիմնավորելով իրենց կատարած արարք-ներով: - **Վերլուծել** գրական կերպարների զարգացման քայլաշարը: -**Արդարացնել, մեղադրել** կամ **խղճալ** Մարկոս աղային, Սմբատին, Միքայելին, Արշակին, Մարութխանյանին, Մարթային՝ հիմնավորելով փաստերով: -**Ստեղծել** գլխավոր հերոսների բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:
Միքայելի, Արշակի, Մարութխանյանի կերպարները	1	Ծանոթանալ կերպարներին:	**Արդարացնել, մեղադրել** կամ **խղճալ** Արշակին, Մարութխանյանին, Մարթա-յին՝ հիմնավորելով փաստերով: **-Ներկայացնել** նշյալ հերոսների բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ՝ հիմնավորելով բնագրից բերված օրինակներով: -**Ստեղծել** գլխավոր հերոսների բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:
Շիրվանզադեի «Քաոս» վեպում ընտանիքի, կնոջ և բարոյականության	1	-Գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի	-Վեպից **բերել** տողեր, որոնք արտահայտում են մարդկային բարոյական վեհ արարքներ:

խնդիրները: Կանանց կերպարները		կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը:	**-Վերլուծել** վեպի կանանց կերպարները՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի կատարած արարքի պատճառա-հետևանքային կապերը: -Դիրքորոշում **արտահայտել,** դրսևորել սեր և հարգանք հեղինակի ապրումի և հույզի, ցավի վերաբերյալ: **-Գրել** շարադրություն՝ «Մարդու փառամոլությունը նրա մեծագույն թշվառություն-ների աղբյուրն է դառնում» վերնագրով: -**Բացատրել** և **հիմնավորել** բնագրի արտահայտած իր սեփական մեկնաբանությունը: **-Նկարել** վեպից որևէ հատված՝ ընտրե-լով համապատասխան խորհրդանիշ:
Վեպի մյուս կերպարները	1		**Վերլուծել** վեպի մյուս կերպարները՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի կատարած արարքի պատճառա-հետևանքային կապերը: -Դիրքորոշում և վերաբերմունք **արտահայտել** հեղինակի ստեղծած կերպարների վերաբերյալ:
Նար- Դոս Կյանքը և ստեղծագործության	1	-Ծանոթացնել Նար-Դոսի կյանքին, ստեղծագործության	-**Ներկայացնել** Նար-Դոսի ապրած ժամանակաշրջանը և ստեղծագործության ընդհա-

ընդհանուր բնութագիրը		ընդհանուր պատկերին:	նուր պատկերը: -**Ներկայացնել** հեղինակի կենսագրության հիմնական փաստերն ու ապրած ժամանակաշրջանը և դրանց ազդեցությունը նրա ստեղծագործության վրա: - **Կազմել** սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը: -**Ներկայացնել** Նար-Դոսի գրական կերպարը՝ ելնելով գրողի և նրա ստեղծագործության մասին նշանավոր մարդկանց ասույթներից ու կարծիքներից: -**Թվարկել** հեղինակի ստեղծագործությունները՝ նշելով թեման: -Ստեղծագործություններից ելնելով՝ **ներկայացնել** քաղաքային մանր ու միջին խավերի կյանքի պատկերը և այն ազդակները, որոնք պատճառ են դարձել նրանց կյանքի նոր փոփոխությունների համար:
«Սպանված աղավնին» վիպակը: Վեպի կառուցվածքը, սյուժեն և գաղափարը	1	-Նպաստել հասկանալու գրականության հասարակական դերը և բարձր գնահատել իրապաշտական մեթոդի կենսական ուժը կյանքը	-**Ներկայացնել** վիպակը գրելու շարժառիթը՝ հիմնավորելով: -**Բացատրել** վիպակի կառուցվածքային առանձնահատկությունները՝

		ճշմարտացի ներկայացնելու համար:	ներկայացնելով սյուժեի բաղկացուցիչ մասերը: -**Բացահայտել** վիպակի գաղափարական բովանդակությունը: -**Մեկնաբանել՝** քանի գաղափար է արտահայտում վիպակը: **Ձևակերպել** գաղափարը սեփական բառերով:
«Մեր թաղը» պատմվածաշարը	1	-Գաղափար տալ պատմվածաշարի մասին: -Ծանոթացնել «Մեր թաղը» պատմվածաշարին:	-**Ցույց տալ** և **բացատրել** պատմվածքների կերպարների զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, դրանց զարգացումը և համոզիչ կամ անհամոզիչ լուծումները: -**Ներկայացնել** պատմվածքների կառուցվածքը, դրանց մասերը: -**Հիմնավորել** կառուցվածքային մասերի փոխկապակցվածությունը, զարգացումը: -**Վերլուծել** տվյալ պատմվածքների կերպարների զարգացման քայլաշարերը: **Ուսումնասիրել** պատմվածքների լեզուն և ոճը, օրինակներով ցույց տալ գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու

			առումով, ինչպես նաև՝ հեղինակի՝ գրական կերպար կերտելու վարպետությունը և արդիական բնույթը: -**Մեկնաբանել** գրողի՝ կերպարի ընտրությունը, կերպարի արդիական բնույթը:
Վեպի կերպարները: Ռուբեն Թուսյան	1	-Կենցաղային-բարոյական երևույթների վերլուծության միջոցով ծանոթացնել հասարակության առջև ծառացած խնդիրներին:	-**Վերլուծել** Թուսյանի կերպարը՝ մեկնաբանելով նրա արարքների դրդապատճառները: -**Արդարացնել, մեղադրել** կամ **խղճալ** Ռուբեն Թուսյանին և Սառային՝ հիմնավորելով փաստերով: -**Մեկնաբանել՝** ինչու է Թուսյանը մարդու վարքին նայում սոսկ վայելքի տեսանկյունից՝ կյանքը համարելով «րոպեական հաճույք և հաճոյական րոպեների մի շարահար շղթա»: Բնագրից բերել ասածը հիմնավորող տողեր: -**Ստեղծել** գլխավոր հերոսների բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ: -Վեպից **բերել** տողեր, որոնք արտահայտում են մարդկային բարոյական արատավոր արարքներ: -Գլխավոր կերպարներին **համեմատել** այլ երկերի

			հերոսների հետ, **գտնել** նմանություններ, ընդհանրություններ և տարբերություններ: -**Ցույց տալ** և **բացատրել** գլխավոր կերպարների զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, դրանց զարգացումը և համոզիչ կամ անհամոզիչ լուծումները:
Ընտանիքի, կնոջ և բարոյականության խնդիրները վեպում: Սառայի կերպարը	1	-Ծանոթացնել հասարակական և բարոյական մթնոլորտում կործանվող հայ կնոջ ողբերգության պատճառներին:	-**Ներկայացնել** խաբված կնոջ ողբերգական կյանքի ծանր պատմությունը՝ արտահայտելով դիրքորոշում: -**Վերլուծել** վեպի կանանց կերպարները՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի կատարած արարքի պատճառա-հետևանքային կապերը: -Դիրքորոշում **արտահայտել,** դրսևորել սեր և հարգանք հեղինակի ապրումի և հույզի, ցավի վերաբերյալ: -**Բացատրել** և **հիմնավորել** բնագրի՝ քո սեփական մեկնաբանությունը: -**Նկարել** վիպակից որևէ հատված՝ ընտրելով համապատասխան խորհրդանիշ:
Թեմատիկ գրավոր աշխատանք 5	1		

Գրիգոր Զոհրապ Կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:	1	-Ծանոթացնել Գր. Զոհրապի կյանքին և ստեղծագոր-ծության ընդհանուր պատկերին:	-Ժամանակակիցների հուշերի հիման վրա **բնութագրել** Զոհրապին՝ որպես գրող: -**Վերարտադրել** գրողի կենսագրությունը, **ներկայացնել** ապրած ժամանակաշրջանը, միջավայրը և կապել նրա ստեղծագործության հետ: -Կենսագրությունից ելներով՝ **գնահատել** Գր. Զոհրապի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում: -**Գնահատել** գրող-քաղա-քացուն, նրա ծավալած գործունեությունը մեր ազգային արժեքների և գաղափարախոսության պահպանման, զարգացման և տարածման գործում:
Գրիգոր Զոհրապի նորա-վեպերը: Գաղափար նորավեպի մասին	1	-Նպաստել գաղափար ունենալու նորավեպի մասին:	-**Թվարկել** Զոհրապի հայտնի ստեղծագործությունները, նշել թեմատիկան: **-Ներկայացնել** Գր. Զոհրապի ստեղծագործության հակիրճ բնութագիրը: --**Տարբերել** պատմվածքը նորավեպից՝ թվարկելով դրանց տարբերակիչ հատկանիշները:
Սոցիալական թեման Զոհրապի	1	-Նպաստել բացահայտելու նորավեպերի թեման և	-**Բացահայտել** յուրաքանչյուր նորավեպի թեման և

նորավեպերում. «Ճիտին պարտքը», «Այրին», «Փոստալը»		գաղափարը:	գաղափարը: -**Ներկայացնել** նովելների սյուժեն, սյուժեի զարգացման բաղադրամասերը: -**Նշել** կոնֆլիկտը նորավեպերում, դրա սոցիալ-հոգեբանական բնույթը: -**Վերլուծել** կերպարները, նրանց զարգացման առանձնահատկությունները՝ մեկնաբանելով նրանց արարքների դրդապատճառները: -**Մեկնաբանել՝** արդյոք նորավեպերն ունե՞ն հոգեբանական հագեցվածություն՝ բացահայտելով հերոսների հոգեկան աշխարհի ինքնատիպությունը: Ի՞նչ տպավորություն է թողնում կերպարը իր վրա, համոզի՞չ է, թե՞ ոչ: -**Բացատրել՝** նորավեպի որ մասերն են ձեզ համար առանձնապես տպավորիչ և հուզական: Ասածը հաստատել համապատասխան հատվածներից ընտրված օրինակներով: -**Բացահայտել** և **մեկնաբանել** բնագրերում եղած անծանոթ անվանումները, բառերը, արտահայտությունները,

			հոմանիշների ընտրությունը:
Սիրո թեման Զոհրապի նորավեպերում. «Այինկա», «Զաբուղոն»	1	-Նպաստել ընկալելու խոսքի և պատկերի արժեքը, նրա դերը գեղագիտական ճաշակի և զգացմունքների դաստիարակության գործում:	-**Բացատրել,** թե Զոհրապը գրական որ ուղղության ներկայացուցիչ է: - Փաստերով **ցույց տալ** դրա բնորոշ գծերը նրա ստեղծագործություններում՝ բացատրելով նրա՝ կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ իր որդեգրած գրական ուղղության: -**Ներկայացնել** նշված նորավեպերի դիպաշարը, նշել գործողությունների հաջորդական ընթացքը: - Ցույց տալ դիպաշարի և երկի բովանդակության աղերսները: -**Մեկնաբանել** տվյալ նորավեպի բովանդակության հիմնական և հարակից գաղափարական հարցադրում-ները՝ բերելով համապատասխան օրինակներ և փաստեր տվյալ ստեղծագործություններից: -**Վերլուծել** կերպարները, նրանց զարգացման առանձնահատկությունները՝ մեկնաբանելով նրանց արարք-ների դրդապատճառները: -**Մեկնաբանել՝** արդյոք նորավեպերն ունեն հոգեբանական հագեցվածութ-

			յուն՝ բացահայտելով հերոսների հոգեկան աշխարհի ինքնատիպությունը: Ի՞նչ տպավորություն է թողնում կերպարն իր վրա, համոզի՞չ է, թե՞ ոչ: -**Բացատրել**՝ նորավեպի որ մասերն են իր համար առանձնապես տպավորիչ և հուզական: Ասածը հաստատել համապատասխան հատվածներից ընտրված օրինակներով: -**Ապացուցել** նորավեպերի արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր: -**Գնահատել** ստեղծագործության նշանակությունը և գաղափարական ազդեցությունը թե՛ անհատի, թե՛ հանրության կյանքում:
Զոհրապի երգիծական նորավեպերը	1	Նպաստել արժևորելու հայ գրականության դերը այլ ազգերի գրականությունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում:	**-Ներկայացնել** երգիծական նորավեպերի կառուցվածքը, դրա մասերը՝ հիմնավորելով կառուցվածքային մասերի փոխկապակցվածությունը, զարգացումը: -**Գտնել և մատնանշել** տվյալ երկերում կառուցվածքի խախտման դեպքերը: **Վերլուծել** տվյալ նորավեպի կերպարների զարգացման քայլաշարերը:

			-**Ցույց տալ** և **բացատրել** կերպարների զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, դրանց զարգացումը և համոզիչ կամ անհամոզիչ լուծումները: -**Ցույց տալ** և **բացատրել** կերպարների զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները, դրանց զարգացումը և համոզիչ կամ անհամոզիչ լուծումները: -**Ուսումնասիրել** նորավեպերի լեզուն և ոճը, օրինակներով **ցույց տալ** գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով, ինչպես նաև՝ գրական կերպարներ կերտելու վարպետությունը և արդիական բնույթը:
Զոհրապի վարպետությունը	1	-Ծանոթացնել գրողի վարպետությանը, որի շնորհիվ Զոհրապը վեր է հանում և բացում ժամանակի մարդկանց արարքներն ու ապրումները՝ բացահայտելով նրանց ներքին կապերը:	**-Ուսումնասիրել** նորավեպե-րում կիրառված ոճական հնարների բազմազանությունը և դրանց ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա: **- Մեկնաբանել** կամ **հիմնավորել** գրողի ոճական հնարների ընտրությունը (մեկնաբանել գրող-ընթերցող կապը, **բերել** համապատասխան օրինակներ՝ անդրադառնալով

			լեզվական, պատկերավորման, կերպավորման միջոցներին, նկարագրություններին, երկխոսություններին և այլն): -**Գրավոր** կամ **բանավոր ցույց տալ** նորավեպերի արդիականությունը, կապը կյանքի հետ՝ ներկայացնելով համապատասխան օրինակներով: -**Համեմատել** տարբեր ստեղծագործություններ՝ ըստ կերպարների ստեղծման, կառուցվածքային տարրերի փոխկապակցվածության, ոճական միջոցների կիրառության և այլն: -Առանձին հատվածների հիման վրա **ստեղծել** բեմագրեր: -**Առանձնացնել** կերպարներին բնութագրող հատվածներ, դրանք **կիրառել** սեփական բնութագրումների մեջ: -**Ստեղծել** տեքստեր, գովազդներ, սահիկաշարեր, պատրաստել ռադիո և տեսահաղորդումներ: -Նորավեպերի թեմաներով **գրել** նկարագրական, վերլուծական շարադրանքներ՝ հետևելով վերլուծական շարադրանքին հատուկ ձևաչափին:

Հովհաննես Թումանյան Կյանքը և գրական - հասարակական գործունեությունը	1	-Ծանոթացնել Հովհաննես Թումանյանի կյանքին և հասարակական գործունեությանը - Ծանոթացնել Թումանյանի կենսագրական փաստերի, նրա հայրենանվեր գործունեության, կերտած հայրենասեր, կամային հերոսների օրինակով զբաղվել ինքնադաստիարակությամբ. զարգացնել արդարամտություն, լայնախոհություն, համարձակություն, հավասարակշռվածություն, համառություն, լինել ցկյանս սովորող և զարգացող անհատականություն:	-**Ներկայացնել** Հովի. Թումանյանի կյանքից հետաքրքիր դրվագներ, ապրած ժամանակաշրջանը: -Մեծերի կարծիքների հիման վրա **բնութագրել** Հովհաննես Թումանյանին սեփական պատկերացմամբ: **-Կազմել** սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը: **-Պատմել** իր մանկության տարիներից հետաքրքիր պատմություններ՝ զուգորդելով Թումանյանի կյանքի հետ: -**Գնահատել** գրող-քաղաքացուն, նրա ծավալած գործունեությունը ազգային արժեքների և գաղափարախոսության պահպանման, զարգացման և տարածման գործում:
Ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	1	-Ծանոթացնել Թումանյանի ստեղծագործության ընդհանուր պատկերին:	**-Թվարկել** այն բոլոր ժանրերը, որոնցով ստեղծագործել է Թումանյանը: **-Թվարկել** այն բոլոր բանահյուսական ժանրերը, որոնք դարձել են Թումանյանի ստեղծագործությունների հիմնական աղբյուրը: -**Ներկայացնել** Թումանյանի ստեղծագործությունների թեմատիկան՝ նշելով դրանց

			առանձնահատկությունները: **-Ստեղծել** Թումանյանի ստեղծագործությունների թեմաներով գովազդներ, սահիկաշարեր, պատրաստել ռադիո և տեսահաղորդումներ:
Թումանյանի քնարերգությունը: Սոցիալական թեման նրա ստեղծագործություն-ներում: «Հին օրհնություն»	1	-Ծանոթացնել հին կյանքի իրական պատկերին և գյուղի սոցիալական անարդարության դեմ ուղղված բողոքին:	**-Արտահայտել** վերաբեր-մունքը, կարծիք «Հին օրհնություն» բանաստեղ-ծության մասին: **-Ներկայացնել** բնագրի դրական ու բացասական իմաստով (հակադիր) գործածված մակդիրները, մեկնաբանել դրանց կիրառման նշանակությունը: -Ստեղծագործաբար **վերարտադրել** բանաս-տեղծության բովանդակութ-յունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները: -Գրավոր կամ բանավոր **ցույց տալ** ստեղծագործության ար-դիականությունը, կապը կյան-քի հետ' ներկայացնելով հա-մապատասխան օրինակներ: **-Մեկնաբանել** գրողի կիրառած ոճական միջոցների ընտրության ազդեցությունը ընթերցողի զգացմունքների և մտածողության վրա:

			-**Նկարել** խորհրդանիշ՝ ելնելով բանաստեղծության բովանդակությունից:
Քաղաքական թեման Թումանյանի քնարերգության մեջ. «Հայոց լեռներում», «Բարձրից»	1	-Ծանոթացնել ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձին և դրա հետևանքով հայ ժողովրդին պատուհասած վշտին, աղետների բերանն ընկած սերունդների տառապանքին:	-Արձակ **վերարտադրել** բանաստեղծությունների բովանդակությունը և **մեկնաբանել** յուրաքանչյուրի կառուցվածքը: -Մեկ նախադասությամբ **ձևակերպել** բանաստեղծություններից յուրաքանչյուրի բովանդակությունը: -**Վերլուծել** բանաստեղծությունից ընտրված մեկ տունը ՝ բնութագրելով քնարական հերոսին: -**Արտահայտել** կարծիք և **հիմնավորել** ասածը բանաստեղծության քնարական հերոսի վերաբերյալ: -**Ներկայացնել** ժամանակաշրջանը և հայ ժողովրդի իրավիճակը և **կապել** այսօրվա իրականության հետ: -**Մեկնաբանել՝** ինչու է Հովի. Թումանյանն իր բանաստեղծությունները վերնագրել «Հայոց լեռներում»,

			«Բարձրից»: -**Գրել** շարադրանք՝ «Ինչի՞ շնորհիվ գոյատևեցինք, կանք. ի՞նչը մեզ պահեց հայ» թեմայով:
Թումանյանի պոեմները: «Անուշ» պոեմը: Գաղափար պոեմի մասին	1	-Նպաստել գիտակցելու հայկական և համաշխարհային համա-մշակութային արժեքների ժառանգորդի դերը, դրսևորելու պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման, զարգացման, արժևորման գործում: - Ծանոթացնել պոեմի ժանրին ու դրա տեսակներին:	-**Ներկայացնել** «Անուշ» պոեմի ժանրային առանձնահատկությունը: -**Մեկնաբանել**՝ ինչ դերն ունի նախերգանքը պոեմում և **ներկայացնել** նախերգանքի ու պոեմի բովանդակության կապը: -**Ուսումնասիրել և ճանաչել** գրողի ապրած ժամանակաշրջանը, տվյալ երկերի գրության շարժառիթները, **ներկայացնել** գրողի կենսագրությունը, հուշեր նրա մասին: -Գրքերից, համացանցից տեղեկություն **հավաքել** գրական այս ժանրի՝ պոեմի մասին և **ներկայացնել:**
Պոեմի կառուցվածքը, սյուժեն և գաղափարը	1	-Ծանոթացնել պոեմի կառուցվածքին և դիպաշարին (սյուժեին):	-**Բացատրել՝** ինչ է պոեմը: Որն է նախերգանքի դերը պոեմում: -**Ներկայացնել** պոեմի կառուցվածքը և սյուժեն, գաղափարական բովանդա-կությունը: -Բնագրում **գտնել** և

			բացատրել ժանրով պայմանավորված լեզվական իրողությունների կիրառումը (բառագործածություն, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքներ): -**Համեմատել, համադրել** և **հակադրել** գրական տարբեր տեքստեր, **մատնանշել** տարբեր հեղինակների գրելաոճերը, կերպար, պատկեր կերտելու հեղինակային առանձնահատ-կությունները: **-Մեկնաբանել** կամ **հիմնավորել** գրողի ոճական հնարների ընտրությունը (մեկնաբանել գրող-ընթերցող կապը, **բերել** համապատաս-խան օրինակներ՝ անդրադառ-նալով լեզվական, պատկերավորման, կերպավորման միջոցներին, նկարագրություններին, երկխոսություններին և այլն):
Պոեմի կերպարները: Անուշ և Սարո	1	-Ծանոթացնել նահա-պետական գյուղի բարդ հարաբերություններին, կոնֆլիկտի մեջ մտած հերոսների բնավորությանը, նրանց շրջապատող միջա-վայրին, կենցաղին և դրանց թողած ազդեցությանը նրանց ճակատագրի վրա:	**-Վերլուծել** Անուշի ու Սարոյի կերպարները՝ բացահայտելով նրանց արարքների պատճառահետևանքային կապերը: **-Առանձնացնել** կերպարներին բնութագրող հատվածներ, դրանք **կիրառել** սեփական բնութագրումների մեջ:

			-**Ցույց տալ** և **բացատրել** կերպարների զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները: **-Ստեղծել** թեմատիկ տեքստեր, գովազդներ, սահիկաշարեր, պատրաստել ռադիո և տեսահաղորդումներ: **-Գրել** նկարագրական, վերլուծական շարադրանքներ՝ հետևելով վերլուծական շարադրանքին հատուկ ձևաչափին: -Առանձին հատվածների հիման վրա **ստեղծել** բեմագրեր:
Մոսիի և հոր կերպարները	1	-Ծանոթացնել նահապետական հայ գյուղի բարքերին ու սովորույթներին և դրանց կործանարար ազդեցությանը մարդկային ճակատագրի վրա:	-**Բնութագրել** Մոսիին և նրա հորը՝ բնագրից ելնելով: Սեփական դիրքորոշում **արտահայտել** նրանց արարքների վերաբերյալ: **-Կատարել** Մոսիի և հոր կերպարների հոգեբանական վերլուծություն՝ նկատի ունենալով նրանց ապրած ժամանակաշրջանը **-Ներկայացնել** պոեմում արտահայտված հույզերն ու ապրումները և սեփական վերաբերմունք **արտահայտել**: **-Ներկայացնել** այն միջավայրը, որտեղ ապրում

			էին հերոսները՝ հիմնավորելով նրանց արարքների դրդապատճառները: -**Ներկայացնել** վերաբերմունք՝ արդարացնելով, մեղադրելով կամ խղճալով հերոսներին՝ ասածը հիմնավորելով: -**Գտնել** հատվածի պատկերավորման միջոցները՝ **մեկնաբանելով** կիրառման նպատակն ու անհրաժեշտությունը: -**Գրել** շարադրանք՝ «Մերօրյա Մոսիները» խորագրով:
Պոեմի բազմամարդ տեսարանները: Ժողովրդի կերպարը պոեմում: Պոեմի տաղաչափական արվեստը: Գրողի վարպետությունը	1	-Ծանոթացնել ժողովրդի հավաքական կերպարին՝ իր առօրյա կյանքով, ուրախությամբ ու վշտով, երազներով ու հավատա-լիքներով:	-**Ուսումնասիրել** պոեմի լեզուն և ոճը, օրինակներով ցույց տալ գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով: -**Գնահատել** գրողի՝ գրական կերպար կերտելու վարպետությունը և դրա արդիական բնույթը: -**Համեմատել** տարբեր ստեղծագործություններ՝ ըստ կերպարների ստեղծման, կառուցվածքային տարրերի փոխկապակցվածության, ոճական միջոցների կիրառության և այլն: **Համեմատել** պոեմի

			նախերգանքը վերջերգի հետ: **Գտնել** նմանություններ և տարբերություններ: **-Ուսումնասիրելով** պոեմը՝ օրինակներով ներկայացնել հեղինակի լեզվի և ոճի առանձնահատկությունները: **-Հետազոտել և ներկայացնել** պոեմի տաղաչափական բազմազանությունը:
Թումանյանի խոհական-փիլիսոփայական երգերը: Քառյակները	1	-Ծանոթացնել բանաստեղծի՝ կյանքի վերջին տարիներին ամբողջացրած և աշխարհից ստացած տպավորություն-ներին, հասարակության ու բնության մասին կուտակված խոհերին, սեփական կենսափորձին:	**-Մեկնաբանել** մարդու և ժողովրդի բախտի մասին հե-ղինակի հյուսած խոհական քառյակները՝ դրսևորելով վե-րաբերմունք: -**Մեկնաբանել** ու **բացատրել** քառյակներում արծարծված զգացումներն ու խոհերը՝ դրսևորելով սեփական վերա-բերմունք: **-Ուսումնասիրել** քառյակները, օրինակներով **ներկայացնել** հեղինակի մտքի, լեզվի և ոճի առանձնահատկությունները: -**Բացատրել** քառյակների՝ հե-ղինակի ընտրած ոճական մի-ջոցների բազմազանությունը: **-Մեկնաբանել** ժողովրդի ծանր կյանքի և քաղաքական անց-քերի բնութագրումը քառյակ-ներում, **ներկայացնել** դիրքո-րոշում՝ կապելով արդի օրերի

			անցուդարձի հետ: **Բացահայտել** քառյակներում հեղինակի արծարծած համա-մարդկային տրամադրու-թյունները՝ ներկայացված անձնական ապրումների դրսևորումով:
Թեմատիկ գրավոր 6	1		
Կրկնություն	3		

ԴԱՍԻ ՊԼԱՆՆԵՐ

ԴԱՍ 1

ԹԵՄԱՆ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՆՊԱՏԱԿԸ

- **Նպաստել ունենալու** որոշակի գիտելիքներ վեպի գաղափարի, բերած նորության մասին:
- **Գաղափար տալ** «Վերք Հայաստանի» վեպի, նրա գրության շարժառիթների, քննվող խնդիրների, պատկերվող դարաշրջանի, պատմական հիմքի մասին:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- **Ներկայացնել՝** ինչ ժանրերով է ստեղծագործել Աբովյանը:
- **Բացատրել՝** նրա ստեղծագործությամբ ինչ նոր ուղղություն սկզբնավորվեց հայ գրականության մեջ:
- **Պարզաբանել՝** հեղինակի որ երկերը հիմք դրեցին հայոց նոր մանկավարժությանը:
- **Ներկայացնել** Աբովյանի անհատականությունը՝ ելնելով նրա՝ գրականություն բերած նորություններից:
- **Ներկայացնել** հեղինակի ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, գաղափարների արդիականությունը և ժամանակագրությունը և համեմատել մեր օրերի հետ:
- **Մշակել** երևակայական հարցազրույց հեղինակի և պատմողի հետ:
- **Գնահատել** գրող-՝քաղաքացուն, նրա ծավալած գործունեությունը ազգային արժեքների և գաղափարախոսության պահպանման, զարգացման և տարածման գործում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Բազմանիստ», «ԳՈՒՍ», «Դասախոսություն», «Երկսյուն աղյուսակ»,

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ՏԻՊԸ: Նոր նյութի հաղորդման դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Դասի սկզբում տնային առաջադրանքի ստուգման ընթացքում, ուսուցիչը հարցերի միջոցով բացահայտում է աշակերտների գիտելիքների աստիճանը և ընդհանուր բացթողումները՝ վերացնելով բացահայտված թերությունների պատճառները, պարզաբանում տնային առաջադրանքի կատարման ճշտությունը՝ հանձնարարված նյութի իմացության մակարդակը ճշտելու նպատակով:

Նոր դասի նախապատրաստման փուլում կիրառում ենք «Բազմանիստ (պրիզմա)» մեթոդական հնարքը: Այս մեթոդը կիրառվում է բացառապես նյութի սկզբնական՝ խթան-

ման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև: Սրանով իսկ մեթոդի կիրառումն ապահովում է վերլուծման հաջող մեկնարկը: Մեթոդն արդյունավետ է այն դեպքերում, երբ պահանջվում են կարճ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումներ: Հնարը ենթադրում է արագություն և ա-րագ կողմնորոշում, ուշադրության կենտրոնացում և մասնակիցների՝ իրար հաջորդող ու համաձայնեցված գործողություններ:

Խմբային քննարկումների նման ձևով կազմակերպումն ապահովում է ակտիվություն, աշխուժություն, մտավոր շարժունակություն, թարմություն և հետաքրքրություն: Գրատախտակին գրում ենք մեկնաբառը և հանձնարարում են ինքնուրույն կառուցել «բազմանիստ»:

Մեկը կառուցում է հետևյալը.



Երբ աշխատանքին հատկացված ժամանակը լրանում է, սովորողներին հանձնարարում ենք հիմնաբառով (Աբովյան), վերջնաբառով (աշխարհաբար) և բազմանիստի շուրջը եղած կապերով կազմել մեկ նախադասություն:

Սովորողները կարդում են իրենց գրած նախադասությունները, պարզվում է, որ յուրաքանչյուրը յուրովի է կազմել այն:

Դասարանն արդեն տրամադրվում է դասին, անցնում ենք նոր նյութի ուսուցմանը:

Դասի այս փուլում կիրառում ենք ԳՈՒՍ մեթոդը (Գիտեմ – Ուզում եմ սովորել – Սովորել եմ):

Սա երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ է, որը կարող է դառնալ աշակերտների ուղեցույցը կարդալու ընթացքում: Կարելի է գծել մեծ թղթի վրա, գրատախտակին կամ պատրաստի գծապատկերներ բաժանել:

Սովորողներին մանրամասն բացատրում ենք՝ ինչպես պետք է աշխատեն:

1. Թեմայի վերնագիրը գրեն աղյուսակի վերևում, ապա նշեն՝ ինչ գիտեն կարդացած թեմայի մասին, իմացածը գրի առնեն աղյուսակի առաջին՝ «Գ – Ի՞նչ գիտենք արդեն» սյունակում:

2. Աշակերտներին հարցրեք, թե թեմայի հետ կապված ինչ հարցեր ունեն, և դրանք գրառեն աղյուսակի «Ու – Ի՞նչ ենք ուզում իմանալ» սյունակում:

3. Օգնեք աշակերտներին դասակարգելու իրենց գիտելիքներն ու հարցերը և առանձին ցուցակ կազմեն:

4. Աշակերտներին հանձնարարե՛ք կարդալ «Խ. Աբովյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը» դասանյութը և գտնել այն տեղեկությունները, որոնք պատասխանում են վերը նշված հարցերին:

5. Երբ սովորողները վերջացնեն կարդալը, նրանց ուշադրությունը հրավիրեք երրորդ սյունակի վրա՝ «Ս – Ի՞նչ ենք սովորել»: Առաջարկեք թվարկել թեմային վերաբերող այն նոր տեղեկությունները, որոնք գտել են կարդալու ընթացքում, և դրանք գրի առնեն երրորդ սյունակում:

Ավարտելով նյութի յուրացումը և պահանջները աղյուսակներում զետեղելուց հետո՝ խմբերը ներկայացնում են իրենց գրածները:

Ընթացքում կատարվում են լրացումներ, բացթողումները շտկվում, ապա գնահատում ենք, եթե քննարկման հարց կա, քննարկում ենք:

Ուսուցիչն ամփոփում է թեման՝ ասելով, որ Աբովյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, թեև իր կենդանության օրոք նա տպագրել է միայն «Նախաշավիղ կրթության» դասագիրքը, իսկ նրա ձեռագրերը երկար ժամանակ անհայտ են մնացել լայն ընթերցողների համար:

1858 թ. լույս է տեսնում նրա «Վերք Հայաստանի» պատմավեպը, իսկ խորհրդային տարիներին Գիտությունների ազգային ակադեմիան 1948-1961 թթ. Կազմում է Աբովյանի երկերի 10 հատորից բաղկացած ժողովածուն: Աբովյանի «Վերք Հայաստանի» (տարբեր բեմավորումներով՝ «Ասլան բալասի», «Աղասի» և այլն), «Ֆեոդորա կամ Որդիական սեր», «Խաղարկություն մանկանց» և այլ գործեր բեմադրվել են, իսկ նրա հեքիաթների մոտիվներով նկարահանվել է «Որսորդները» հայկական մուլտֆիլմը (1977 թվական):

Աբովյանի առաջին բանաստեղծությունները, որոնք գրված են գրաբարով, արտացոլել են նրա ռոմանտիկ աշխարհընկալումը («Կարօտութիւն նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց» (1824), «Սրբաճեմ ոտից տեառն գթութեանց» (1824) և այլն): Պարսկական բռնակալության մղձավանջն ապրած բանաստեղծը երազել է հայրենիքի անցած փառքը և կորցրած պետականությունը վերականգնելու մասին: 20-ական թթ. վերջերին Աբովյանը գրել է սիրո և կարոտի տաղեր, որոնք ուշ միջնադարի հայ տաղերգուների (Պաղտասար Դպիր, Պետրոս Ղափանցի, Սիմեոն Երևանցի, Ահարոն Վարդապետ) և ժողովրդական գուսանների ստեղծագործական փորձի յուրատեսակ համադրություն էին:

Դորպատյան տարիներին մտորել է գեղարվեստական գրականությունը համապատասխանեցնել նոր ժամանակի պահանջներին, ժողովրդին հասկանալի աշխարհաբարը դարձնել գրականության լեզու: «Սուգ հարազատ և ծնողասեր որդվո» (1835), «Տաղ հրաժարական» (1836) և այլ բանաստեղծություններ այդ ձգտումն իրականացնելու առաջին փորձերն էին: Աբովյանը հայ քնարերգությունը լիցքավորել է հասարակական-քաղաքական բարձր գաղափարներով, խոհականությամբ և դրամատիզմով: Նրան տանջել են անհատի և հայրենիքի ճակատագրերը, երազանքի ու աններդաշնակ իրականության հակադրությունները («Զգացմունք ցաւալից սրտիս...», «Զի՞նչ այս դառն հարուած...», «Երեկոյ», «Առ էմ. Կ.», «Գարուն», «Սէր առ հայրենիս», 1831-1835 թթ.):

Ետդորպատյան տարիների ստեղծագործությունները սերտորեն առնչվում են Աբովյանի լուսավորական նպատակներին: Առակների միջոցով նա ջանացել է բարոյապես ազնվացնել մարդկանց («Պարապ վախտի խաղալիք»): «Հազարփեշեն» պոեմում ծաղրել է ցարական պաշտոնեությանը, ձգտել ժողովուրդների փոխադարձ ճանաչման:

Իր «*Պարապ վախտի խաղալիք*» առակների չափածո ժողովածուով Մխիթար Գոշից և Վարդան Այգեկցուց հետո դարձավ երրորդ խոշոր առակագիրը մեր իրականության մեջ:

«Պարապ վախտի խաղալիքը», առակների ու զրույցների հավաքածու է, որ գրվել է 1838-1841 թթ., տպագրվել է 1864 թ.: Ժողովածուի առաջաբանում Աբովյանը, բարձր գնահատելով գրաբարը, առաջ է քաշել աշխարհաբարով ստեղծագործելու անհրաժեշտության հարցը: Ժողովածուն ընդգրկում է տարբեր առակներ, որոնց միջոցով հեղինակը բարոյական խրատներ է տալիս ընթերցողին («Էս գրքի ճամփի խրատը», «Հացակեր փոշը», «Լոռըցիք», «Երկաթակեր մուկը», «Ծառերն ու կացինը» և այլն):

Գրքի վերնագիրն արդեն իսկ հուշում է, որ հայ հեղինակը հետևում է եվրոպացի ռոմանտիկ գրողներին, մասնավորապես Բայրոնի «Պարապության ժամեր» ժողովածուին: Աբովյանի առականիում ամփոփված են թե՛ իր, թե՛ ժողովրդական և թե՛ թարգմանական առակներ, որոնք կոչված էին թեթևացնելու հասարակ մարդկանց աշխատանքը, կենցաղն ու առօրյան, մարդ արարածին դարձնելու ավելի բարի ու շրջահայաց: Ժողովածուում, ի տարբերություն միջնադարյան առակագիրների, գրողն ընդլայնում է հանրածանոթ ժանրի թեմատիկան. նրա երգիծանքի նետերն ուղղվում են արատավոր ամենատարբեր երևույթների դեմ՝ լինեն դրանք հանրային կյանքում, թե՛ կենցաղում, միջանձնային հարաբերություններում, թե՛ պարզապես մարդկային բնավորություններում:

Հետագա ստեղծագործություններում Աբովյանը երազել է բանական հասարակության մասին, որը, նրա համոզմամբ, պետք է ազատ լինի կրոնական կաշկանդումներից, մարդիկ պետք է թեթևացնեն միմյանց հոգսն ու ցավը, ճանաչեն միայն սիրո, եղբայրության ու բարեկամության կրոնը («Թուրքի աղջիկը»):

Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը հայ նոր գրականության պատմության շրջադարձային կետը դարձավ: Վեպում նկարագրված դեպքերն ու դեմքերը պատմական են: Աբովյանը հայրենիքի վերածնության հույսը կապել է ազգային համախմբման, պայքարի, կրթության և լուսավորության տարածման հետ:

Սրանից հետո կազմակերպում ենք դասի գործնական մասը՝ սովորածը կիրառելու: Կատարում են հետևյալ առաջադրանքը (խմբային աշխատանք).

Երկսյուն աղյուսակով ներկայացրե՛ք Խաչատուր Աբովյանի ապրած ժամանակաշրջանը և ստեղծագործության ընդհանուր պատկերը:

Աբովյանի ապրած ժամանակաշրջանը	**Ստեղծագործության ընդհանուր պատկերը՝ ըստ ժամանակագրության**

Ավարտելուց հետո խմբերը կարդում են իրենց գրառումները, շտկումնոր ենք անում, եթե կան, գնահատում ենք, ապա հանձնարարում ենք տնային աշխատանք:

Անդրադարձ ենք կատարում:

ԴԱՍ 2

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ «ՀԱՌԱՋԱԲԱՆԸ»: ՎԵՊԻ ՍՅՈՒԺԵՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՆՊԱՏԱԿԸ:

- Նպաստել գիտակցելու հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը:
- Ծանոթացնել վեպի կառուցվածքին, սյուժեին և բովանդակությանը, «Առաջաբանի» նշանակությունը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- **Ներկայացնել** հեղինակի ապրած ժամանակաշրջանը, տվյալ երկի գրության շարժառիթները:
- **Կարդալ** վեպի «Հառաջաբանը»՝ ընկալելով կարդացածի արտահայտած ենթատեքստը:
- **Նշել** հեղինակի և պատմողի տարբերությունը, վեպում արտահայտված հույզը, զգացմունքը:
- **Ներկայացնել** հեղինակի կյանքի, բնագրի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ունեցած ազդեցությունը:
- **Բացահայտել** վեպի բառապաշարի, ոճի, կառուցվածքի, ժանրային առանձնա-հատկությունն**ե**րի, ժամանակի ընթացքում ժանրի որոշակի ձևափոխությունների, պատկերի, կերպարի, կոնֆլիկտի, հեղինակի և պատմողի տարբերությունները:
- **Ներկայացնել** վեպի դիպաշարը, նշել գործողությունների հաջորդական ընթացքը՝ ցույց տալով դիպաշարի և երկի բովանդակության աղերսները:
- **Ընդգծել** գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը / **բանալի նախադասությունը**, **մեկնաբանել**:
- **Գտնել** տեքստում պատկերված խորհրդանիշները, **բացատրել** դրանց նշանակությունը:
- Կարդացած հատվածից **ընտրել** պատմողներ և **ստեղծել** վերջիններիս բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Հարց ու պատասխան», , «Ձնագնդի», «ԳՈՒՍ», «Կարճ դասախոսություն», «Ամփոփիչ հարցեր», «Կրկնակի գրառումների օրագիր»,

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, նշագրիչ, թուղթ, «Հարցման-հետազոտման աղյուսակ»:

ԴԱՍԻ ՏԻՊԸ: Նոր նյութի հաղորդման դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգում ենք հին նյութի յուրացումը և տնային աշխատանքը, կատարում ենք շտկումներ, եթե դրա անհրաժեշտությունը կա, գնահատում ենք ոմանց՝ հիմնավորելով այն:

«Հարց ու պատասխան» մեթոդով կազմակերպում ենք խթանման (թեմային վերաբերող հարցերով) փուլը:

1. Ի՞նչ եք կարդացել Աբովյանի ստեղծագործություններից:
2. Ի՞նչ գիտեք «Վերք Հայաստանի» վեպի մասին:
3. Քանի՞ մասից է բաղկացած վեպը:
4. Կարո՞ղ եք ներկայացնել վեպի կառուցվածքը:
5. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն եք սիրում:

Հարցերի պատասխանները լսելուց հետո դասարանը բաժանում ենք 7 խմբի և անցնում ենք դասի իմաստի ընկալման փուլին:

Ուսումնառության գործընթացում կարևորվում է տեքստի առնչությամբ հատուկ աշխատանք կազմակերպելը, ուստի ուսուցչի հարցերը նշանակալի դեր ունեն ուսումնական նյութի յուրացման գործում: Ուսուցիչը նախապես պատրաստում է դասի նյութին անմիջականորեն առնչվող հարցեր, որոնց պատասխանները զետեղված են դասի տեքստի մեջ**:**

Զարգացնող ուսումնառության մեջ հատուկ նշանակություն է տրվում աշակերտների ակտիվությանը: Շատ կարևոր է, թե որքանով է աշակերտը պատրաստ տեքստի հետ հաղորդակցվելու. կարո՞ղ է հարցերին պատասխանել, կարո՞ղ է հարցեր տալ տեքստի վերաբերյալ, կարո՞ղ է տեքստից առանձնացնել հիմնականը երկրորդականից:

Դասի նյութի հետ առնչվող հարցերը (ստորև) քարտերի ձևով տալիս ենք խմբերին և առաջարկում դրանց պատասխանները գտնել դասագրքում («Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը»: Վեպի սյուժեն և կառուցվածքը»):

Թեմայի իրենց հատվածը յուրացնելուց հետո սովորողները խումբ առ խումբ ներկայացնում են իրենց հատվածը:

1-ին խումբը պատմում է, որ «Վերք Հայաստանին...» ունի կուռ ***կառուցվածք***. բաղկացած է 6 հատվածներից՝ ընծայական, առաջաբան, երեք գլուխներ և «Զանգի» հավելված:

Աբովյանը վեպը ***ձոնել է*** Հայկական մարզի վերջին կառավարիչ գնդապետ Գևորգ Սմբատյանին՝ իր մանկության ու պատանեկության տարիների բարեկամներից մեկին: Ի դեպ, վեպը գրելու ընթացքում Սմբատյանն արդեն պաշտոնյա չէր և ցարական իշխանությունների կողմից հետո պիտի հանիրավի մեղադրվեր պաշտոնեական չարաշահումների համար և տարիներ անց միայն արդարացվեր: Գնդապետն առաջինն է ծանոթացել «Վերքի...» ձեռագրի սկզբնական էջերին, նա է, որ, Աբովյանին սեղմելով կրծքին, քաջալերել է ու ջերմորեն բացականչել. «Մեր հայ Լոմոնոսովը ծնվել է»: Նոր գրականության մայրուղին բացելու ընթացքում դեռ ինչ-որ կասկածներ ունեցող գրողն այդ խոսքից անմիջապես բոցավառվել է, ոգևորությունից լարվել են մտավոր ու հոգեկան ուժերը, և

արդյունքում վեպը գրել է կարճ ժամանակամիջոցում ու մի շնչով՝ 1841 թ. փետրվարից հոկտեմբեր ընկած շրջանում: «Վերքը...», ցավոք, լույս տեսավ բավական ուշ՝ հեղինակի անհետացումից 10 տարի հետո միայն՝ 1858-ին Թիֆլիսում:

Երկրորդ խումբը շարունակում է՝ բացատրելով, որ վեպի ***առաջաբանում*** Աբովյանը բարձրացնում է հարցադրումներ, որոնք պիտի կանխորոշեին գրականության հետագա ընթացքը: Դրանք հիմնականում չորսն են.

Առաջին՝ *լեզվի հարցը*: Լեզուն, ըստ Աբովյանի, մարդու ամենաբնորոշ հատկություններից է, որով նա տարբերվում է շնչավոր մյուս արարածներից: Բայց ո՞ր լեզուն. անպայման՝ կենդանի, գործածական լեզուն: Ավելին՝ լեզուն ազգային ինքնաճանաչման ու միասնականության հզոր գործոն է, և դրան անուշադրության մատնելը հավասարազոր է սեփական ազգին դավաճանելուն: Աբովյանը կարծում է, որ գրաբարը, ճիշտ է, կատարյալ է և բացառիկ հարուստ, բայց արդեն մեռած է ու անհասկանալի և չի կարող լինել կենսունակ, այլևս ի վիճակի չէ պատկերելու կենդանի իրականությունը: Եվ ահա հեղինակը, ընդգծելով աշխարհաբարի կարևորությունը նոր մշակույթի ու գեղարվեստական մտածողության մեջ և բացատրելով իր՝ այդ լեզվով ստեղծագործելու անհրաժեշտությունը, վեպի առաջաբանն սկսում է տպավորիչ այլաբանությամբ. նա օգտագործում է Ք. ա. 5-րդ դարում ապրած ու ստեղծագործած հույն պատմիչ Հերոդոտոսի «Պատմության» մի դրվագ՝ նվիրված Առաջավոր Ասիայի հնագույն պետություններից մեկի՝ Լիդիայի թագավոր Կրեսոսին և նրա համր որդուն: Երբ պարսից Կյուրոս II Մեծի և Կրեսոսի միջև ծայր առած պատերազմի ընթացքում մի պարսիկ զորական քիչ է մնում՝ սպաներ Կրեսոսին, վերջինիս համր որդին ահից ու վշտից հանկարծ լեզու է առնում և պարսիկի վրա գոռալով՝ հիշեցնում իր դեմ կանգնածի ով լինելն ու այդպես փրկում հորը: Ըստ Աբովյանի այլաբանության՝ Կրեսոսը հյուծված ու հոգեվարք ապրող Հայաստանն է, իսկ որդին՝ ինքը. ինչպես Կրեսոսի քսանամյա համր որդու լեզուն է բացվում հորն սպառնացող մահվան պահին, այնպես էլ կապանքից ազատվում է երեսուն տարեկան գրողի մունջ լեզուն. «Մեր ազգին պահողն էլ *լեզուն* ա ու *հավատը*, թե սրանց էլ կորցնենք, վա՛յն էկել ա մեր օրին: Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման. երեսուն տարվա փակ բերանս Աղասին բաց արեց»: Եվ ահա ինքը՝ կրակված հոգին, ևս պատրաստ է փրկելու իր երկիրը՝ բացականչելով. «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»:

Երրորդ խումբը շարունակում է ընկերներին՝ ասելով, որ հեղինակի առաջ քաշած խնդիրներից երկրորդը ***գրականության բովանդակության*** հարցն է: Աբովյանը ցավով էր նկատում, որ հայ գրականության մեջ ամեն ինչ «եկեղեցու վրա ա, աստծու ու սրբերի», և հայ մարդիկ ավելի հաճույքով կարդում են օտար գրքեր, քանի որ դրանք «սրտի բաներ էին»: «Ո՞վ չի՛ ուզիլ լսիլ, թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ի՞նչ զատ են,- հարցնում է նա ու շարունակում,- բայց մեր լեզվումը թե էսպես բաներ ըլին, թո՛ղ աչքս հանեն»: Եվ ահա Աբովյանը վեպ է գրում «աշխարհի բաներից» ու «հարիր հազարի համար»՝ կենտրոնանալով կենդանի կյանքի, հայրենիքի, մարդու սրտի ու զգացմունքի, ներաշխարհի և հարաբերությունների վրա:

Չորրորդ խումբը շարունակում է ներկայացնել հեղինակի երրորդ կարևոր խնդիրը՝ ***հերոսի ընտրությունը***: Աբովյանը գնում է դեպի ժողովուրդը՝ այնտեղից վերցնելով իրական հերոսներ. Աղասին ծագումով գյուղացի է, ավելին՝ իրական անձնավորություն: Նրա նախատիպը հավանաբար եղել է պատերազմի ժամանակ Պարսկաստանի Թավրիզ քաղաքում պարսիկների ձեռքով նահատակված ***Ռոստոմ Աբովյանը,*** որի հետ բազմիցս հանդիպել է գրողը և վեպում էլ ուղղակի հիշատակել այդ մասին. «Մեկ թղթի միջում ծալած՝ իրան ոսկորները, քսան անգամ հենց ինձ ա ցույց տվել, որը որ զանազան տեղ կռվըներումը կոտրել, հանել էին»:

Վիպական հերոսները պատկանում են ամենատարբեր խավերի. նրանք տանուտեր են կամ գզիր (կատարածու), գեղջուկ կամ քաղաքացի, տերտեր կամ բարձրաստիճան հոգևորական, տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ, աղա, խան, բեկ, գեներալ, զորավար, սովորական զինվոր... Նրանք բոլորն էլ ժողովուրդ են մարմնավորում, ոմանք էլ աչքի են ընկնում վառ անհատականությամբ:

Հինգերրորդ խումբն էլ եզրափակում է՝ ավելացնելով, որ չորրորդ՝ ***հեղինակի ստեղծագործական անկեղծությունը***: Ըստ Աբովյանի՝ գրողը պետք է լինի անաչառ, վեր կանգնի նեղ անձնական շահախնդրություններից, գերադասի ճշմարտությունը: Եվ ահա պատմական իրողությունը և գրական խիղճը հեղինակին տանում են սովորական մարդկանց միջավայր, ժողովրդի մարդու՝ աղքատ ու մեռած Աղասու մոտ: «Մեկ բարի-կենդանի,- գրում է վիպասանը,- աշակերտներս որ բաց թողի, սկսեցի, ինչ որ երեխությունիցս լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ: Վերջը իմ ջիվան *Աղասին* միտս ընկավ, նրա հետ հարիր քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին, ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ: Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլա սաղ-սալամաթ, փառք աստուծո, Աղասին՝ աղքատ ու մեռած, նրա սո՛ւրբ գերեզմանին ղուրբան: Ասեցի՝ կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի»:

Ուսուցիչն էլ ավելացնում է, որ հեղինակը, ներկայացնելով իր հերոսի ընտրության «պատմությունը», ցույց է տալիս, որ հետագա պատումը լինելու է ոչ թե մտացածին, այլ հիմնվելու է իրական, հոգեբանական փաստերի վրա: Ուրիշ խոսքով՝ գրողը կերպարաստեղծման այսպիսի մոտեցմամբ որոշակի փոփոխություն է մտցնում հայ գրականության մեջ:

Կշռադատման փուլում, երբ թեման արդեն յուրացրել են, աշակերտներին բաժանում ենք **6 խմբի** և «Հառաջաբանի» պատճենած թերթիկները բաժանում ենք սովորողներին, որ ծանոթանան բնագրին: Աշխատանքին հատկացված ժամանակը սպառվելուց հետո սովորողները, մեկը մյուսին շարունակելով, պատմում են, որ «Հառաջաբանը» մի փոքրիկ ներածություն է, որն օգնում է հասկանալ Խաչատուր Աբովյանին տանջող մտքերը, նրա երազանքներն ու հույզերը՝ կապված հայրենիքի և իր սիրելի ժողովրդի հետ, ժողովուրդ, որը հեռացել է իր լեզվից և այլևս հասու չէ նրա գիր ու գրականությանը: Առօրյա խոսքում առաջացած տարալեզու տարրերը խոչընդոտում են հային հասկանալ գրաբարը: Միաժամանակ նա փորձ է անում ստեղծել գրականություն, որը հասանելի կլինի հայ ժողովրդին, և փորձում է ցույց տալ, թե ինչպես է եկել այդ գաղափարին:

Իր ասածը հասկանալի դարձնելու համար Աբովյանը ներկայացնում է Լիդացվոց Կրեսոս թագավորին, որն իրեն աշխարհի ամենաբախտավոր մարդն էր համարում, սակայն ահա պատերազմում հայտնվում է Կյուրոս զորականի առջև:

Արդեն, ուր որ է, պետք է իր թուրն իր սիրտը խրեր, որ պարսիկն իրեն չսպանի, հանկարծ թագավորի միամոր որդին, որ քսան տարի չէր խոսել, ասում է Կյուրոսին. «Անօրե՛ն, էդ ո՞ւմ ես սպանում, քաշի՛ր թուրդ ետ, չե՞ս տեսնում, որ առաջիդ Կրեսոսն ա, աշխարքիի տե՞րն ա»: Զորականի ձեռքերը թուլանում են, և թագավորն իր գլուխն ազատում է: Քսան տարեկան լալ (մունջ) որդին հորը փրկում է: Այսպես որդիական սերը ջարդում ու փշրում է բնության դրած կապանքը:

Հեղինակն ամեն օր մտածում է ազգի կորցրած փառքի ու մեծության, առաջին հիանալի
թագավորների, իշխանների գործի ու կյանքի, ընտիր ազգի աննման բնության ու քաջությունների մասին: Հայկը, Տրդատը, Լուսավորիչը քնած տեղն իրեն ասում են, որ ինքը նրանց որդին է: Եվրոպա, թե Ասիա իրեն անդադար ձայն են տալիս, թե Հայկա զավակն է, Նոյան թոռը, Էջմիածնա որդին, դրախտի բնակիչը: Սիրտը ցավում է, չգիտի՝ ինչ անել. գանձ չունի, որ գործով ցույց տա իր ուզածը, անունն էլ մեծ չէ, որ ասածը տեղ հասնի: Գրքերը գրաբար են, նոր լեզուն՝ անպատիվ, սրտի եղածը չի կարող խոսքով ասել: Ինչ գիրք ասես, որ չի սկսել թարգմանել ու կիսատ թողել, այնքան է գրաբար գլխից դուրս տվել, որ մի մեծ գիրք էլ դա կդառնա: Երեխաներ ունի: Բայց նրանք էլ հայերեն չեն հասկանում, թեև սիրում են կարդալ ռուսերեն, գերմաներեն ու ֆրանսերեն: Ցավ է զգում, որ նրանց օտար լեզուն ավելի է դուր գալիս, բայց մյուս կողմից դա բնական է, քանզի կարդում են այնպիսի երևելի մարդկանց գործերը, որոնք գրավում են մարդու սիրտը:

Հեղինակը ցավ է զգում, որ եվրոպացիները մտածում են, թե հայը երևի սիրտ չունի, որ այդքան բաներ են գլխով անցել ու մի մարդ դուրս չի եկել, որ մի սրտի բան գրի, ինչ կա՝ եկեղեցու վրա է, աստծու ու սրբերի: Իսկ հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի և Սոֆոկլեսի գրքերը երեխաների գլխների տակ է, քանի որ դրանք բոլոր աշխարհի բաներ են: Զարմանում է, թե Նարեկին թողած, ինչպե՞ս են այլ գրքեր հավանում: Գիտի, որ այս ազգն այն չէ, ինչ ասում են, միայն թե ինչպե՞ս դա հասկացնել: Լավ գիտի, որ թե՛ օսմանցվի, թե՛ ղզլբաշի երկրի հունարեն իմացող խելոք մարդիկ, աշուղներն ու ոտանավոր գրողները հայ են եղել: Քեշիշ օղլին ու Քյոռ օղլին բավական են: Նաև Գիրգոր Թարխանովին, որի նմանը նույնիսկ Եվրոպայում չկա: Եթե գրի ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ անգամ գրաբար, տասը մարդ հազիվ հասկանա: Մտածում է մի կողմ թողնել քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ու աշուղ դառնալ: Մտքին է գալիս ջիվան Աղասին, նրան է ընտրում իր վեպի հերոս:

Հայոց լեզուն փախչում է, ինչպես Կրեսոսը. Աղասին բացում է հեղինակի 30 տարվա փակ բերանը: Զրուցում է դոկտոր Աղաֆոն Սմբատյանի հետ՝ նրան կարդալու տալով իր գրածը: Սմբատյանը հորդորում է Աբովյանին շարունակել աշխատանքը:

Հեղինակը նկարագրում է, որ Հայաստան հրեշտակի պես կանգնել է առաջը, իրեն թև է տալիս: Ողջ գիշերը նրան թվում է, թե նստած գրում է, երանի է տալիս, թե այդ մտքերը ցերեկն էլ միտը ընկնեն, ու շարունակի գրել այդ ոգով :

Հայրենասեր գրողը բացականչում է՝ քանի դեռ բերանում լեզու կա, փորում՝ սիրտ, լեղապատառ ձայն կտա. «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»: Ու հստակ որոշում է իր թոթով նոր հայերենով գրի վեպի հերոսի՝ Աղասու մոտ:

Թեման լիարժեք յուրացնելուց հետո հանձնարարում ենք խմբերին կատարել հետևյալ առաջադրանքներց մեկը.

I ԽՈՒՄԲ

Կարդացե՛ք «Հառաջաբանը» և փորձե՛ք բացատրել՝ ինչ է նշանակում ՝ «Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման, երեսուն տարվա փակ բերանս Աղասին բացեց»:

II ԽՈՒՄԲ

Թվարկե՛ք՝ ինչ խնդիրներ է առաջ քաշում Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում»:

III ԽՈՒՄԲ

Ներկայացրե՛ք «Հառաջաբանում» դեպքերի հաջորդական ընթացքը և դրանց պատճառահետևանքային կապերը:

IV ԽՈՒՄԲ

Դո՛ւրս գրեք հատվածի հիմնական բովանդակությունն արտահայտող երեք բանալի նախադասությունները:

V ԽՈՒՄԲ

Ներկայացրե՛ք՝ պատմական ինչ իրադարձություններ էին նկարագրված «Հառաջաբանում»:

VI ԽՈՒՄԲ

Գրե՛ք, թե կարդալիս ինչ զգացիք, ինչո՞ւ. ի՞նչը դրդեց ձեզ այդպիսի զգացողություն ունենալ:

VII ԽՈՒՄԲ

Գրե՛ք՝ ի՞նչ վտանգներ և մարտահրավերներ տեսաք, ինչո՞ւ: Հիմնավորե՛ք ձեր կարծիքը:

Ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց գրառումները, լրացնում միմյանց, գնահատում ենք և անդրադարձ կատարում օրվա դասին:

ԴԱՍ 3

ԹԵՄԱՆ՝ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՄՈՒՐԱՑԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ

ՆՊԱՏԱԿԸ՝

- **Ծանոթացնել** Մուրացանի կյանքին ու գործունեությանը:
- **Ծանոթացնել** հեղինակի ստեղծագործության ընդհանուր պատկերին:
- **Ծանոթացնել** Մուրացանի պատմագեղարվեստական երկերին:
- **Նպաստել ունենալ** որոշակի գիտելիքներ պատմավեպի ժանրի և հեղինակի գրական հայացքների մասին:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

- **Բնութագրել** Մուրացանին՝ նրա կենսագրականում եղած տեղեկությունների հիման վրա:
- **Պատմել** մանկության տարիներից հետաքրքիր պատմություններ, դրանք զուգորդել Մուրացանի կյանքի հետ:
- **Ուսումնասիրել և ճանաչել** գրողի ապրած ժամանակաշրջանը, **ներկայացնել** գրողի կենսագրությունը, հուշեր նրա մասին:
- **Կազմել** սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը:
- **Հորինել** մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց գրողի հետ:
- Կենսագրությունից ելներով՝ **գնահատել** հեղինակի կյանքն ու ստեղծագործությունը նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:
- **Թվարկել** Մուրացանի հայտնի ստեղծագործությունները և ներկայացնել դրանց ժանրային առանձնահատկությունները՝ ներկայացնելով դրանցից յուրաքանչյուրի բնորոշ գծերը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Ներածական զրույց», «Հարցերի քարտարան», «10-րոպեանոց շարադրանք», «Քառաբաժան», «Երկսյուն աղյուսակ», «Եռասյուն աղյուսակ», «Քառասյուն աղյուսակ»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, **«Գևորգ Մարզպետունի»** պատմավեպը, նշագրիչ, թուղթ, «Քառաբաժան», «Երկսյուն աղյուսակ», «Եռասյուն աղյուսակ», «Քառասյուն աղյուսակ»:

ԴԱՍԻ ՏԻՊԸ: Նոր նյութի հաղորդման դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Կարճ հարցման միջոցով ստուգում ենք հին դասի յուրացումը և տնային աշխատանքը, շտկումներ ենք կատարում, եթե դրա կարիքը կա, ամփոփում ենք թեման, միավորային գնահատում կատարում և անցնում նոր նյութի ուսուցմանը:

«Ներածական զրույցի» միջոցով տեղեկություն ենք տալիս սովորողներին Մուրացանի ապրած ժամանակաշրջանի մասին՝ ասելով, որ 19-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականությունն ընթացել է ռոմանտիզմի և ռեալիզմի գեղարվեստական փորձի նոր

յուրացումներով: Հասարակության զարգացումն ուղեկցվել է ազգային ինքնագիտակցության վերելքով՝ օրակարգի խնդիր առաջադրելով ազատագրության գաղափարը, որն առավել նպատակային է դարձել 1875-1878 թվականների Բալկանյան և ռուս-թուրքական պատերազմների ընթացքում: Գեղագիտական միտքը մերժել է «արվեստը արվեստի համար» տեսությունը և ռոմանտիկ ու ռեալիստական ուղղությունների միաբանությամբ հաստատել է գրականության օգտակարության սկզբունքը: Ազգի գոյության հիմքերի վերաբերյալ մամուլում ծավալվել է 2 ազդեցիկ հոսանքների բանավեճը: Ազատամտականները («Մշակ») ազգի գոյության հիմքը համարել են «նյութական հարստությունը», ազգային պահպանողականները («Մեղու Հայաստանի», «Նոր Դար») դրան հակադրել են «բարոյական հարստությունը»՝ եկեղեցին, մշակութը, ընտանիքը և ազգային ավանդույթները:

Մուրացանը 19-րդ դարի հայ գրականության նշանավոր դեմքերից մեկն է, որի կյանքն ու գործը ժողովրդասիրության վառ օրինակ եղան թե՛ իր ժամանակակիցների, թե՛ հետագա սերունդների համար: Ինչպես ասել է Իսահակյանը. «Մուրացանի տաղանդը լրիվ ընդգրկել է հայ ժողովրդի կյանքը: Ռեալիստական ճշտությամբ նա պատկերել է չունևորների, ընչազուրկների ծանր վիճակը, կապիտալիստների շահագործումները, կեղեքումները՝ նա գրել է սրտի ցավով, սրտի արյունով, համոզմունքով, վառ հավատով: Նա խորունկ հայրենասեր էր և ժողովրդասեր»:

Մուրացանն ասել է. «Երբեք չեմ սպասել և սպասում, որ մարդիկ փառաբանեն ինձ, ես ոչ բանաստեղծ եմ երևակայում ինձ և ոչ էլ պսակներ եմ որոնում, ով որ յուր ներքին դատարկությունը լցնելու կարիք է զգում, թող նա իրեն հռչակել տա, պսակներ որոնե, հոբելյաններ մուրա»:

Մուրացանի դերը նշանակալից է նաև հայ գրական լեզվի զարգացման մեջ:

Գրողն իր ստեղծագործություններում պատկերում է ինչպես գյուղական կյանքը, այնպես էլ՝ քաղաքի: Նրա որոշ ստեղծագործություններ էլ պատկերում են հայ ժողովրդի պատմությունը:

Հոգեմաշ հաշվապահական աշխատանքին զուգընթաց՝ նա կարողանում է մի փոքր ժամանակ գտնել և իրեն նվիրել գրականությանը: 1881 թվականին նա գրում է իր առաջին գեղարվեստական լուրջ երկը՝ «Ռուզան» պատմական դրաման, և «Մուրացան» կեղծանունով ներկայացնում Հայ թատրոնի վարչությանը: Դրաման անսպասելի հաջողություն է բերում հեղինակին: Ամենուրեք խոսում են նոր տաղանդի մասին: Հայ հարուստները խոստանում են միջոցներ տալ գրողին՝ արտասահման գնալու և կրթությունը շարունակելու: Սակայն խոստումները շուտով մոռացվում են, և Մուրացանը մինչև կյանքի վերջը ստիպված է լինում հաշվապահի պաշտոնը համատեղել գրական աշխատանքի հետ: Կենսագրական այդ դառը փաստից նա ստեղծում է «Հասարակաց որդեգիրը» ազդեցիկ պատմվածքը:

1889 թ. «Նոր դար» լրագրում տպագրվում է «Խորհրդավոր միանձնուհին» վիպակը: 1896 թվականին «Արձագանքում» տպագրվում է «Գևորգ Մարզպետունի» վեպը: «Լումա» ամսագրում լույս են տեսնում «Նոյի ագռավը» պատմվածքը (1899 թ.) և «Առաքյալը» վիպակը (1902 թ.):

Մուրացանի անունը հռչակվում է, բայց ծանր աշխատանքը խոր ազդեցություն է թողնում նրա հոգեկան աշխարհի վրա. 1908 թվականին երևան են գալիս հոգեկան խանգարման նշաններ: Մուրացանը վախճանվում է 1908 թվականի օգոստոսի 30-ին՝ 54 տարեկան հասակում՝ անավարտ թողնելով իր ստեղծագործական մտահղացումները:

Մեր ժողովրդի պատմությունն ամբողջությամբ առաջնային տեղ էր գրավում Մուրացանի աշխարհայացքում: Նրա առաջին պատմական երկը «Ռուզան» դրաման է: Այստեղ դրվագներ են նկարագրվում 13-րդ դարի թաթար-մոնղոլական արշավանքների պատմությունից, և հայ կնոջ նահատակության մեջ ամփոփվում են հայրենասիրությունը, ազգային հավատը:

«Անդրեաս երեց» վեպը լույս է տեսել 1897 թվականին: Այստեղ դրվագներ են նկարագրվում Նախիջևանի Ագուլիս աշխարհի 17-րդ դարի պատմությունից: Վեպի գլխավոր հերոսը նահատակվում է հանուն դավանանքի՝ ազգի մեջ ազգապահպանություն սերմանելու առաքելությամբ:

«Գևորգ Մարզպետունի» պատմավեպը լույս է տեսել 1912 թվականին, այն հայ պատմավեպի մնայուն արժեքներից է: Վեպում նկարագրվում է 10-րդ դարի Հայաստանը Բագրատունիների օրոք: Գևորգ Մարզպետունու կերպարի միջոցով Մուրացանը ուզում է հասկացնել, թե ինչ է իսկական հայրենասիրությունը, և միայն հայրենասեր մարդկանցով կարելի է փրկել հայրենիքը մոտալուտ կործանումից:

Դասախոսությունն ավարտելուց հետո սովորողներին անհատական աշխատանք ենք տալիս կատարելու. յուրաքանչյուրին բաժանում ենք քարտեր՝ հետևյալ բովանդակությամբ և առաջադրանքով.

Ներկայացրո՛ւ Մուրացանի գրական կերպարը՝ ելնելով գրողի և նրա ստեղծագործության մասին նշանավոր մարդկանց ասույթներից ու կարծիքներից:

«Մուրացանի հետ ծանոթացա միայն 1902-1903 թվականներին, Հովհաննես Թումանյանի մոտ, մեր Վերնատանը: Երբեմնակի գալիս էր նա Թումանյանի մոտ: Շատ հարգալից էինք նրա հանդեպ: Նստում էր Թումանյանի կողքին և լուռ լսում էր մեզ: Վերնատան նահապետը՝ Ղազարոս Աղայանը, բարձր ու հզոր ձայնով խոսում էր. Թումանյանը ուրախ բաներ էր պատմում, ու Մուրացանի աչքերը ժպտում էին մեղմորեն: Թվում էր, թե հաճելի էր նրան մեր շրջանը: Հաճախ մասնակցում էր մեր խոսակցություններին, զրույցին, հարցերին, սակայն սովորաբար սակավախոս էր: Եվ երբեք չէր խոսում իր մասին, իր գործերի մասին: Առհասարակ հեզ, համեստ բնավորության տեր մարդ էր: Ես զգում էի, որ նա մի վիշտ ուներ իր սրտի խորքում, որ գաղտնի մաշում էր նրան, մի վիշտ՝ ոչ մեկին հաղորդած: Մեր մեջ նստած' միտքը ուրիշ բանի հետ էր, հայացքը մի հեռավոր կետի հառած»:

«Մուրացանի լեզուն, նրա ճշգրիտ հայերենը՝ գեղեցիկ բառերի ընտրությամբ, պատկերավոր ոճով մեզ համար ուսանելի դպրոց էր»:

Ավետիք Իսահակյան

«...Մուրացանը նախքան որևէ երկ գրելը, գերազանցորեն ուսումնասիրում է իր նյութը. նա այնպես է որոշ առկա իրականություն հետազոտում, ինչպես պատմական վեպ գրողը՝ պատմական անցյալը... Այդ բոլոր հատկություններով Մուրացանը, հարկավ, չէր դառնում ռեալիստ, քանի որ նա երբեք չի փվել «կյանքը ինչպես որ է», այլ այն խմբագրել է իր կանխակալ հայացքի ոգով. նա վերաստեղծել է իր դիտած իրականությունը սեփական իդեալների համաձայն»:

Արսեն Տերտերյան

«Մուրացանը պատկանում է իրապաշտ դպրոցին՝ ռոմանտիզմի թեթև խառնուրդով»:

Հարություն Սուրխաթյան

«Ե՛վ ժամանակակից, և՛ պատմական թեմայով գրված գեղարվեստական երկերի ռեալիզմը որոշվում է մի հիմնական հատկանիշով, թե գրողը որքան ճշմարտացի ու խորն է արտացոլում նկարագրված ժամանակաշրջանը, կարողանո՞ւմ է պատկերել բնորոշ և տիպական հանգամանքները»:

Վաչե Պարտիզունի

«Պետք է ենթադրել, որ Կանտի նկատմամբ Մուրացանն առանձնահատուկ նախասիրություն ուներ և ծանոթ էր նրա «Մաքուր բանականության քննադատությունը» և «Փորձնական բանականության քննադատությունը» տրակտատներին, երբ գրում էր իր ստեղծագործությունները»:

Սերգեյ Սարինյան

«Մուրացանի ստեղծագործության մեջ արծածվում են և՛ առաքելության, և՛ ազգային միաբանության, և՛ սիրո, և՛ բնության, և՛ մարդասիրության, և՛ մյուս բոլոր գաղափարները: Բնության օրենքի ու տարերքների հետ «հաշվի նստող» Մուրացանը հենց այս կետում է խիզախում բարձր մնալ նախաստեղծից՝ հանուն այդ նախաստեղծի, մոտենալ արարչությունը չավարտած ու հավերժ արարագործող Աստծուն, իր ստեղծած գաղափարատիպերով՝ նրան հուշելով մարդու նոր տեսակ՝ Ռուզան, Գևորգ Մարզպետունի, Գոռ, Սողոմոն, Աննա... Եվ միանգամայն ճիշտ է նկատված, որ Մուրացանի հերոսներն իրենց «ներարժեք ունակությունը ստուգում» են միայն ու միայն «հասարակական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններից դուրս», իրենց անհատական փորձի կամայնությամբ»:

Վարդան Հակոբյան

Հանձնարարում ենք ուշադիր կարդալ և կազմել գրողի գրական դիմանկարը:

Ժամանակը լրանալուց հետո սովորողները կարդում են իրենց շարադրանքները, գնահատում են միմյանց փոխադարձ գնահատումով՝ հիմնավորելով այն:

Այնուհետև թեման ամրապնդելու նպատակով հանձնարարում ենք կշռադատման փուլում կատարել խմբային աշխատանք:

1. Ներկայացրե՛ք հեղինակի կենսագրության հիմնական փաստերն ու ապրած ժամանակաշրջանը և դրանց ազդեցությունը նրա ստեղծագործության վրա:

Փաստեր	Ժամանակաշրջան	Ստեղծագործություն

1. **Նկարագրի՛ր Մուրացանին՝ ըստ իր դիմանկարի** (անհատական աշխատանք):



2. **Թեմայից ելնելով՝ դիրքորոշում արտահայտի՛ր, դրսևորի՛ր սեր և հարգանք հեղինակի ապրումի և հույզի, ցավի նկատմամբ (անհատական աշխատանք):**

«ՔԱՌԱԲԱԺԱՆ»

1. Ինչ զգացում ապրեցիր ընթերցելիս: ա) բ) գ)	3. Ինչ գույնի է ստեղծագործությունը: ա) բ) գ)
2. Ինչ մեղեդի հիշեցիր ընթերցելիս: ա) բ) գ)	4. Ինչը կփոխեիր ստեղծագործության մեջ: ա) բ) գ)

3. **Կենսագրությունից ելներով՝ գնահատի՛ր Մուրացանի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:**

4. **Վերարտադրի՛ր գրողի կենսագրությունը, ներկայացրո՛ւ ապրած ժամանակաշրջանը, միջավայրը և կապի՛ր նրա ստեղծագործության հետ** (անհատական աշխատանք):

Կյանքը	**Ապրած ժամանակաշրջանը**	**Միջավայրը**	**Կապը ստեղծագործության հետ**

Ավարտելուց հետո սովորողները կարդում են իրենց գրառումները, կատարում ենք լրացումներ, եթե կան, քննարկում ենք անցկացնում, ապա միավորային գնահատում իրականացնում:

Տնային աշխատանք ենք հանձնարարում:

Կատարում ենք անդրադարձ:

ԴԱՍ 4

ԹԵՄԱՆ՝ «ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՎԵՊԸ, ԳՐԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ: «ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՊԱՏՄԱՎԵՊԻ ՍՅՈՒԺԵՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՆՊԱՏԱԿԸ՝

- **Գաղափար տալ** «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի, նրա գրության շարժառիթ-ների, պատկերվող ժամանակաշրջանի, պատմական հիմքի մասին:
- **Նպաստել** զանազանելու վեպի կառուցվածքը, սյուժեն, հերոսներին, գաղափարը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

- **Ուսումնասիրել** և **ճանաչել** գրողի ապրած ժամանակաշրջանը:
- **Վերաշարադրել** գրական երկի բովանդակությունը՝ որպես ականատես:
- **Ներկայացնել** վեպի կառուցվածքը, նրա մասերը:
- **Մեկնաբանել** «Գևորգ Մարզպետունի» վեպի պատմական հիմքերը՝ բերելով համապատասխան փաստեր:
- **Ներկայացնել** «Գևորգ Մարզպետունի» վեպի գլխավոր գաղափարը/գաղափարները:
- **Ներկայացնել** վեպի դիպաշարը, **նշել** գործողությունների հաջորդական ընթացքը:
- **Ցույց տալ** վեպի դիպաշարի և երկի բովանդակության աղերսները:
- **Բացատրել** «Գևորգ Մարզպետունի» վեպի բովանդակության հիմնական և հարակից գաղափարական հարցադրումները՝ բերելով համապատասխան օրինակներ և փաստեր տվյալ ստեղծագործությունից:
- **Ապացուցել** վեպի արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր:
- **Բացատրել** Մուրացանի՝ կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ այս վեպի և գրական ուղղության:
- **Ներկայացնել** հերոսի ապրած հոգեբանական դրաման՝ հիմնավորելով բնագրից բերված օրինակներով:
- **Մեկնաբանել** վեպի պատմական հիմքերը՝ բերելով համապատասխան փաստեր:
- **Հասկանալով՝** ընկալելով կարդացածի ենթատեքստը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Դասախոսություն», «Խճանկար», «Հարցերի քար-տարան»,

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, ««Գևորգ Մարզպետունի» պատմավեպը, նշագրիչ, թուղթ:

ԴԱՍԻ ՏԻՊԸ: Կարողությունների ու հմտությունների զարգացման դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Կարճ հարցման միջոցով ստուգում ենք հին դասի յուրացումը և տնային աշխատանքը, շտկումներ կատարում, եթե դրա կարիքը կա, ամփոփում ենք թեման, միավորային գնահատում կատարում և անցնում նոր նյութի ուսուցմանը:

Ուսուցիչը նախնական տեղեկություն է հաղորդում վեպի ստեղծման պատմության վերաբերյալ՝ ասելով, որ նախքան գիրքը գրելը Մուրացանը քրտնաջան ուսումնասիրել է վեպում ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող հիմնական պատմական աղբյուրները: Հեղինակի նպատակն էր, որ վեպը հնարավորինս հիմնված լիներ իրական պատմական փաստերի վրա: Միաժամանակ Մուրացանը ցանկանում էր ընթերցողին փոխանցել «իր մտքերը, բարոյականությունը, համոզմունքները և կարծիքը»:

Արդյունքում Մուրացանին հաջողվում է ստեղծագործությունը դարձնել հայրենասիրական և հերոսական պատմական վեպ, որն իր մեջ ռոմանտիզմի մասնիկներ է պարունակում: Մուրացանը ցանկանում էր Գևորգ Մարզպետունու կերպարի միջոցով ժողովրդին փոխանցել իր սերը հայրենիքի նկատմամբ: Շատ քննադատներ կարծում են, որ Գևորգ Մարզպետունու շուրթերով խոսում է ինքը՝ հեղինակը: Այս ստեղծագործությամբ Մուրացանը ցուցադրեց հայ ժողովրդի հայրենասիրական ծրագրերը:

Հեղինակը նշում է. «Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առաջ ունեցել եմ հայ ժողովուրդը, նրա անցյալը, նրա պատմությունը, նրա տխուր ներկան: Լավ եմ գրել, թե վատ, նրա համար եմ գրել, նրան եմ կամեցել իմ մտքերն ու զգացմունքները հաղորդել…»:

«Թշնամու դեմ կռվելը, հայրենիքի ազատության համար մեռնելը սրբազան պարտք է, այդ պարտքից ոչ ոք չպիտի փախչի: Հարկավոր է միայն անկեղծությամբ սիրել հայրենիքը, անձնվիրաբար գործել և վտանգներն արհամարհել»:

Բնական է, որ հայ ժողովրդի պատմությունը պատկերող գրվածքներից իր ուրույն տեղն ունի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը: Պետք է իմանալ, որ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի շարժառիթը հայ ժողովրդի միասնության գաղափարն է՝ օտար բռնակալության դեմ պայքարը կազմակերպելու և հայ ժողովրդի ազատագրության խնդիրը հրահրելու նոր՝ իր ապրած ժամանակներում:

Վեպի հիմքում ընկած են 10-րդ դարի պատմական իրադարձությունները: Այդ դարաշրջանում հայ ժողովուրդը վերջին հաղթական կռիվներն էր մղում արաբական զավթիչների դեմ: Վեպի պատմական աղբյուրները 10-րդ դարի պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմություն հայոց» և Թովմա Արծրունու «Պատմությունն տանն Արծրունյաց» գրքերն են:

«Գևորգ Մարզպետունի» վեպի գաղափարը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարն է արաբական զավթիչների դեմ: Գևորգ Մարզպետունու նպատակն էր հայոց կենտրոնախույս պետությունը դարձնել կենտրոնաձիգ պետություն և վերջին հագարացուն դուրս շպրտել հայրենիքի սահմաններից:

Մուրացանը նկարագրում է Հայաստանը 10-րդ դարում: Երկիրը կառավարում է «հաղթանդամ» արքա Աշոտ Բ Երկաթը՝ Բագրատունիների արքայատոհմի ներկայացուցիչը: Ժողովրդի մեջ նա անմահացավ այն ժամանակ, երբ ակտիվ զինված պայքար սկսեց երկար տարիներ Հայաստանը ասպատակող արաբների դեմ: Պատերազմում հաղթում է Յուսուֆ ամիրային: Աշոտ Բ-ն կարողացավ վրեժխնդիր լինել որոշ «հագարացի» (արաբ) զորապետներից, որոնք մասնակցել էին իր հոր՝ Սմբատ Ա-ի սպանությանը: Վրեժը չի կարողանում դեռևս լուծել միայն դավաճան Գագիկ Արծրունուց, դրան օգնությամբ «հագարացիք» մահապատժի ենթարկեցին Սմբատ Բագրատունուն: Արծրունին, որի վերջիվերջո Վասպուրականի թագավոր է հռչակվում:

Սակայն խաղաղ կյանքը երկար չի տևում: Դարձյալ սկսվում են արաբ ժողովրդի ասպատակությունները հայկական հողեր վրա: Հայաստանը նորից ընկնում է արաբական լծի տակ: Երկրի ներսում թշնամական իրավիճակ է տիրում: Իշխաններ Սահակ Սևադան և Ցլիկ Ամրամը, անձնական տարաձայնություններից ելնելով, ապստամբություն են բարձրացնում արքայի դեմ: Համարյա բոլոր իշխաններն ու նախարարները փակվում են իրենց ամրոցներում և սպասում, թե ինչով կավարտվի ընդվզումը:

Այս ամենը տեսնելով՝ ոտքի է ելնում խիզախ ու հայրենասեր իշխան Գևորգ Մարզպետունին: Մարտնչելով թշնամիների դեմ՝ նա միաժամանակ փորձում է խելքի բերել ապստամբներին, փորձում է համախմբել բոլոր հայ զորապետներին, նախարարներին: Մարզպետունին ոգևորում է արքա Աշոտ Երկաթին, երբ մարտի դաշտ է իջնում ընդամենը քսան հոգով և խորամանկությամբ կարողանում է հաղթել թշնամուն: Դրանից հետո Աշոտը, որ առաջ հոգեպես ծանր վիճակում էր գտնվում, կազմակերպում է հայտնի Սևանի ճակատամարտը:

Աստիճանաբար երկրում ազատության և խաղաղ կյանքի հույսեր են հայտնվում:

Այսքանը ներկայացնելուց հետո ուսուցիչը «Խճանկար» մեթոդով սովորողներին հանձնարարում է ներկայացնել վեպի սյուժեն և կառուցվածքը:

Խմբերից մեկը ներկայացնում է, որ վեպը բաղկացած է 3 մասից: Վեպում նկարագրվում է 10-րդ դարի Հայաստանը, երբ երկրում պատերազմ է ընթանում հայերի և արաբների (հագարացիների) միջև: Շարունակվում է հագարացիների զավթողական քաղաքականությունը Հայաստանում: Իսկ երկրի ներսում թշնամական մթնոլորտ է տիրում հայ իշխանական տոհմերի միջև: Արքա Աշոտ Բ Երկաթի դեմ ապստամբություն են բարձրացրել արքայի աներ՝ Գարդմանի իշխան Սահակ Սևադան և Ուտիքի իշխան Ցլիկ Ամրամը:

Գառնու ամրոցում բնակվում է Հայաստանի թագուհին՝ Սահականույշը: Այստեղ բնակվում են նաև իշխան Գևորգ Մարզպետունու կինն ու որդին՝ իշխան Գոռը: Սահականույշը շատ է սիրում իր դայակին՝ Սեդային: Մի օր նա Սեդային խնդրում է պատմել անցած տարիների իրադարձությունների ու Աշոտ Բագրատունու երիտասարդության մասին: Դայակը պատմում է անցած տարիների նշանավոր դեպքերի մասին, թե ինչպես է նախկին արքա Սմբատ Ա-ն պայքարել արաբների, Յուսուֆ

ամիրայի դեմ, թե ինչպես են հագարացիները մահապատժի ենթարկել Սմբատ Բագրատունուն, ինչպես է Աշոտ Բ-ն վրեժխնդիր լինում արաբ զորապետներից իր հոր համար և ինչպես է վաստակել «Երկաթ» անվանումը, ինչպես է որոշում ամուսնանալ Սահականույշի հետ և այլն: Հետո Սեդան խոստովանում է նաև, որ Աշոտը երկար տարիներ շարունակ դավաճանել ու թաքուն սիրել է իշխան Ցլիկ Ամրամի կնոջը՝ Ասպրամին: Պարզվում է, որ թագուհին տեղյակ էր դրա մասի, և նույնիսկ մի անգամ տեսել էր Աշոտին Ասպրամի հետ համբուրվելիս:

Հաջորդ խումբը շարունակում է ներկայացնել թեման՝ ասելով, որ իշխան և զորապետ Գևորգ Մարզպետունին այցելում է ապստամբ, կույր Սահակ Սևադային: Վերջինիս և նրա որդուն կուրացրել էր արքա Աշոտ Երկաթը նրանց կազմակերպած առաջին ապստամբության պատճառով: Այդ օրվանից նա միայն նպատակ էր դրել հաշվեհարդար տեսնել արքայի հետ: Իշխան Մարզպետունին ցանկանում է ամեն գնով մտափոխել Սևադային, որովհետև, ըստ իր խոսքերի, այս դժվար տարիներին ապստամբությունը և ներքին պառակտումները միայն մեծ չարիքի, ողբերգության ու կործանման կհասցնեն: Նա համարյա թե ծնկաչոք համոզում է Սևադային՝ հրաժարվել ապստամբությանից ու ներել արքային: Սևադան հասկանում է իշխանին, համաձայնում է և ներում Աշոտին: Ոգևորված Մարզպետունին բազմաթիվ անգամ շնորհակալություն է հայտնում Սահակ Սևադային և ուղևորվում Ցլիկ Ամրամի մոտ, որպեսզի նրան էլ մտափոխի:

Ցլիկ Ամրամը շատ է զարմանում և հիասթափվում, երբ իմանում է Սահակ Սևադայի որոշման մասին: Ամրամի կինը՝ Ասպրամը, դավաճանել էր ամուսնուն Աշոտ Երկաթի հետ: Այդ հանգամանքը պատճառ էր դարձել Ամրամի կազմակերպած ապստամբությանը: Նա երազում էր ամեն գնով ոչնչացնել արքային ու վրեժ լուծել իր ընտանիքը քանդելու համար:

Մարզպետունու աղերսական խնդրանքները չեն ազդում Ցլիկ Ամրամի վրա: Նա շատ էր հարգում իշխան Մարզպետունուն, սակայն չի համաձայնում: Դրանից հետո Գևորգ Մարզպետունին գնում է արքայի մոտ: Ճանապարհին նա հանդիպում է աբխազաց իշխան Բերին, որը եկել էր Ցլիկ Ամրամին օժանդակելու համար: Նրանց նպատակները նույնն էին: Այս ամենի մասին Աշոտ Բ-ին է տեղեկացնում Մարզպետունին: Արքան որոշում է զորք հավաքել և մարտի դաշտ իջնել ապստամբների դեմ:

Նրանք զորք են հավաքում ու ճամփա ընկնում: Աշոտն ու իր կողմնակիցները չեն հանդիպում ոչ մի ապստամբի: Նրանք փակվում են Ավերակ բերդում, այնտեղ գիշերելու համար, սակայն գիշերը բերդը հանկարծակի շրջապատում են Ցլիկ Ամրամն ու Բերը: Մարզպետունին և ուրիշ քաջեր հերոսաբար դիմադրում են ապստամբներին: Աշոտ Երկաթը մի խորամանկ քայլի է դիմում. նա իր ձիով և երկու ձիավորով անսպասելիորեն առաջ է սլանում խավարի միջով՝ դիմադրելով դիմացը հայտնվող ապստամբներին ու կարողանում է դուրս պրծնել շրջապատումից: Իսկ Ցլիկ Ամրամը առանց դժվարության բերդ է խուժում և իմանալով, որ Աշոտը փախել է, սաստիկ զայրանում է, սակայն բաց է թողնում Մարզպետունուն և նրա զինվորներին:

Խմբերից մյուսն էլ պատմում է, որ **երկրորդ մասը** սկսվում է՝ Այրիվանք բերդի իրադարձություններով: Այստեղ իր կողմնակիցների հետ ապաստան է գտել Հայաստանի կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցին: Նա փախել է մայրաքաղաք Դվինից՝ արաբ ոստիկան Նսերից՝ թողնելով իր կաթողիկոսական գահը: Այրիվանքում կաթողիկոսն ու մնացած հոգևորականները շարունակում են իրենց եկեղեցական կյանքը:

Մի օր լուր է հասնում, որ արաբ զորապետ Բեշիրն իր զորքի հետ մոտենում է Այրիվանքին: Կաթողիկոս Հովհաննեսը որոշում է փախչել Գառնի: Որոշ հոգևորականներ հեռանում են նրա հետ, մյուսները մնում են՝ իբր պատվով ընդունելու թշնամուն: Նրանք թաքցնում են բերդի բոլոր հարստություններն ու գանձերը և առանց որևէ դիմադրության ներս թողնում զորապետ Բեշիրին: Վերջինս ծանր տանջանքների է ենթարկում հոգևորականներին՝ պահանջելով, որ նրանք խոստովանեն գանձերի տեղը: Սակայն նրանք կտրուկ հրաժարվում են, ինչից հետո Բեշիրը հրամայում է մահապատժի ենթարկել բոլորին: Ողջ են թողնում միայն ոմն վարդապետ Մովսեսի, ով պետք է գնար կաթողիկոսի մոտ և ցույց տար իր վերքերը:

Գևորգ Մարզպետունին ժամանում է Գառնի: Նա պատմում է թագուհի Սահականույշին Ավերակ բերդում կատարվածի մասին և հայտնում, որ արքան որոշ ժամանակով մեկնել է Կաքավաբերդ:

Գառնի է այցելում նաև կաթողիկոս Հովհաննեսը Մովսես վարդապետի և եպիսկոպոս Սահակի հետ: Նրանք պատմում են, թե ինչ է կատարվել Այրիվանքում: Մարզպետունին կշտամբում է կաթողիկոսին նրա փախուստի համար և խորհուրդ է տալիս վերադառնալ Դվին ու չվախենալ ոստիկան Նսերից: Կաթողիկոսը սկզբում համաձայնում է, սակայն մի քանի օր անց փոշմանում է ու մեկնում Սևանա կղզի: Դրանից հետո նա ուղևորվում է Բյուրական:

Աշոտ Երկաթը նույնպես Սևանա կղզի է հեռանում: Հոգեկան ծանր ցնցումների մեջ նա որոշում է մշտապես այնտեղ մնալ: Արքան ծանր է տանում բերդի մոտ իր կրած պարտությունը, իսկ Սահականույշին դավաճանելու փաստը նրան հանգիստ չի տալիս: Վերջինս իմանալով, որ Աշոտը Սևանում է գտնվում, ուղևորվում է ամուսնու մոտ:

Բյուրականում խաղաղ կյանք է տիրում: Կաթողիկոս Հովհաննեսը գոհ է տեղի իրավիճակից: Սակայն շատ շուտով լուր է հասնում, որ արաբ զորապետ Բեշիրն իր զորքերի հետ մոտենում է քաղաքին:

Կաթողիկոսը այս անգամ էլ որոշում է փախուստի դիմել: Այդ փաստը պետք է թաքուն պահվեր քաղաքի բնակիչներից: Քաղաքում մնում են կաթողիկոսի մտերիմներ Մովսես վարդապետը և եպիսկոպոս Սահակը:

Բյուրականի բոլոր բնակիչները դիմադրության են պատրաստվում: Նրանց է միանում դրսից եկած Սողոմոն ճգնավորի զորքը:

Խմբերից հաջորդն էլ շարունակելով ընկերներին՝ պատմում է, որ Բեշիրի զինվորները հարձակվում են Բյուրականի պարիսպների վրա: Երկար օրեր կատաղի

մարտեր են ընթանում: Քաղաքի բնակիչները դիմադրություն են ցույց տալիս, և արաբների ճիգերը, ապարդյուն են անցնում: Հաղթանակը հայերի կողմն էր:

Մի օր ծեծկռտուք է տեղի ունենում Սողոմոն ճգնավորի, երկու զինվորի և Բյուրականի մի քանի բնակիչների միջև: Երկու զինվորները որոշում են բողոքել կաթողիկոսին, սակայն իմանալով, որ վերջինս երկչոտորեն փախել է՝ հիասթափվում են ու շատ զայրանում: Նրանք որոշում են դավաճանել իրենց հավատարիմներին և Բեշիրի հետ թաքուն գործարք են կնքում: Գիշերով երկու զինվորները բացում են քաղաքի դարպասներն ու ներս թողնում թշնամիներին: Արաբները սպանում են քաղաքում գտնվող բոլոր մարդկանց և ոչնչացնում Բյուրականը: Սպանվածների շարքում էին նաև Մովսես վարդապետը, եպիսկոպոս Սահակը, Սողոմոն ճգնավորը, հերոս հոգևորականներ Դավիթն ու Մովսեսը, նրանց եղբայր Սահակը և այլն... Այս դեպքը տեղի ունեցավ 924 թվականի ապրիլի 17-ին:

Այն երկու հայ դավաճաններին Բեշիրն ուղեկցում է ոստիկան Նսերի մոտ: Վերջինս հրամայում է գլխատել երկուսին էլ՝ ասելով, որ եթե նրանք կարողացան դավաճանել հայրենակիցներին, ապա հագարացիներին առավել ևս հավատարիմ չեն մնա:

Գևորգ Մարզպետունին, իմանալով Բյուրականի ողբերգական դեպքի մասին, լրջորեն մտածում է նոր ազատական տարբերակների մասին: Իշխանը հավաքում է Գառնո ամրոցի բոլոր բնակիչներին և կոչ է անում ժողովրդին իր հետ կռվի դաշտ իջնել, սակայն նրան է միանում միայն տասնինը զինվոր: Նրանց շարքում էին Մարզպետունու մոտիկ ընկեր Վահրամ Սեպուհը և որդին՝ Գոռը: Նրանք հանդիսավոր երդվում են Մաշտոցի գերեզմանի մոտ, որ կպայքարեն մինչև վերջ: Մարզպետունին երդվում է, որ չի վերադառնալու Գառնի, մինչև երկրում մնա թեկուզ մեկ հագարացի:

Դրանից հետո Մարզպետունին ու իր քաջերը մեկնում են Սևանա կղզի, որպեսզի Աշոտ Երկաթի օրհնությունը ստանան:

Նրանք որոշում են գիշերն անցկացնել Գեղի ամրոցում: Մարզպետունին նկատում է, որ կողքի լեռան լանջերին գիշերում է արաբ զորապետ Բեշիրի բանակը: Իշխանը ցանկանում է սկսել ճակատամարտը և կոչ է անում Գեղիի բնակիչներին շարվել լեռան տակ ու կատաղի գոռոցներ արձակել, որպեսզի արաբները մտածեն, թե հայ զինվորների քանակը մեծ է: Իսկ Մարզպետունին իր տասնինը քաջերի հետ թշնամու ճամբար է ներխուժում ու թաքուն հրկիզում այն: Քնից հենց նոր արթնացած հագարացիք խուճապահար սկսում են այս ու այն կողմ փախչել: Մարզպետունին ու իր զինվորները հասցնում են բազմաթիվ թշնամիների ոչնչացնել: Բեշիրը փախչում է: Սա փառահեղ հաղթանակ էր:

Աշոտ Երկաթը, իմանալով Մարզպետունու հերոսությունների մասին, ոգևորվում է և որոշում ոտքի ելնել:

Ընկերներին շարունակելով՝ պատմում են, որ կատաղած Բեշիրը որոշում է սպանել Հայոց արքային: Նա իր նոր բանակի հետ գալիս է Սևան:

Աշոտ Երկաթը, ըմբռնելով իրավիճակի լրջությունն ու վտանգը, գնում է կտրուկ քայլերի: Իր հարյուր զինվորներից նա առանձնացնում է յոթանասունին և նրանց տասը

լաստերի մեջ տեղավորում՝ ամեն լաստի մեջ յոթ զինվոր: Ինքը՝ Աշոտը, գտնվում էր մի փոքր լաստի վրա՝ իր մի քանի թիկնապահների հետ: Այդպես նրանք թիավարում են դեպի հագարացիները և Աշոտի հրամանով սկսում նետահարել թշնամիներին: Հագարացիք նույնպես սկսում են նետեր արձակել, բայց ապարդյուն, որովհետև նրանց խանգարում էին հայերի լաստերի ետևից կուրացնող վառ արևի շողքերը: Բեշիրի բանակի մոտ կեսը զոհվում է, մնացածը փախուստի են դիմում զորապետի հետ միասին: Հաղթանակը Աշոտ Երկաթի կողմն էր: Դա հայտնի՝ **Սևանի ճակատամարտն** էր:

Մարտի ժամանակ Աշոտ Երկաթին խոցում է նետը, որը, ըստ բժշկի, թունավորված էր, և Աշոտի կյանքին վտանգ էր սպառնում:

Բեշիրի փախչող զորքին է դիմավորում Գևորգ Մարզպետունու նոր կազմավորած հազարանոց բանակը, և նրանք ևս մեկ անգամ պարտության են մատնում հագարացիներին, սակայն Բեշիրին այս անգամ էլ է հաջողվում փախչել: Նա հրաշքով փրկվում է:

Մյուս խումբն էլ ավելացնում է, որ գրքի երրորդ մասում Գևորգ Մարզպետունին գալիս է Բագարան, ուր թագավորում է Աշոտ Երկաթի հորեղբայրը՝ Աշոտ Բռնավորը: Այստեղ է ապաստան գտել հայոց կաթողիկոսը: Վերջինիս իշխան Մարզպետունին համոզում է վերադառնալ Դվին և երաշխավորում է, որ ոստիկան Նսերը չի համարձակվի վնաս պատճառել հայոց Վեհափառ տիրոջը, քանի դեռ հայ զինվորները կանգնած կլինեն Դվինի պարիսպների տակ: Կաթողիկոս Հովհաննեսը համաձայնում է, սակայն Մարզպետունու հեռանալուց հետո նրան մտափոխում է Աշոտ Բռնավորը, որն իրականում իր խարդախ ծրագրերն ու նպատակներն ուներ: Աշոտ սպարապետը թաքուն գործարք էր կնքել ոստիկան Նսերի հետ: Աշոտը խորամանկության է դիմում, և արդյունքում կաթողիկոսը մեկնում է Վասպուրական՝ Գագիկ Արծրունու մոտ:

Դրանից հետո Գևորգ Մարզպետունին ուղևորվում է Երազգավորս, որտեղ բնակվում էր արքայի հարազատ եղբայրը՝ Աբասը: Եղբայրներն արդեն երկար տարիներ գժտված էին և չէին շփվում միմյանց հետ: Իշխան Մարզպետունին խնդրում ու համոզում է Աբասին ներել եղբորն ու հաշտվել նրա հետ: Ըստ իշխանի՝ այդ հանգամանքը կստիպի Աշոտին լքել Սևանը և վերադառնալ նախկին գործերին: Աբասը համաձայնում է, և նրանք երկուսով ուղևորվում են Սևան: Արքան ընդունում է ու հաշտվում եղբոր հետ: Աշոտ Բ-ն արդեն համարյա ապաքինվել է թունավոր նետի ազդեցությունից:

Նրանք բոլորով մեկնում են Երազգավորս և մի քանի օր ճոխ խնջույքի են մասնակցում: Հանկարծ ժամանում է ոստիկան Նսերի սուրհանդակը: Նրա հետ է լինում իշխան Բաբկենը, որին հագարացիք բանտից ազատ են արձակել: Ազատել են նաև Բաբկենի երկրորդ եղբորը, իսկ երրորդ եղբորը՝ Սահակին՝ ըստ սուրհանդակի խոսքերի, պահում են Դվինի ամրոցներից մեկում: Սուրհանդակը փոխանցում է, որ Նսերը ցանկանում է հաշտության պայմանագիր կնքել: Աշոտը ստորագրում է պայմանագիրը, իսկ ավելի ուշ խոստանում է Բաբկենին, որ կազատի նրա եղբորը, որին, ըստ հավանակության, իրականում սովորական պատանդի պես են պահում:

Արդեն ավարտվում էր 925 թվականը: Երկրում դեռ խաղաղ կյանք էր տիրում, սակայն Գևորգ Մարզպետունին, միևնույն է, չէր կարող հարազատ տուն վերադառնալ, որովհետև հավատարիմ էր մնում իր տված երդումին:

Մարզպետունին և Աշոտ Երկաթը որոշում են ստիպել Հովհաննես կաթողիկոսին վերադառնալ Դվին ու տիրել կաթողիկոսական գահը: Սակայն, երբ իշխանը ճամփա է ընկնում Վեհափառ տիրոջ մոտ, լուր է հասնում, որ կաթողիկոսը հանկարծամահ է եղել՝ Վասպուրականում:

Որոշ ժամանակ անց՝ բոլորին հայտնի է դառնում, որ Ցլիկ Ամրամը հանձնել է Գուգարքը, Տայքը և Ուտիքը աբխազաց իշխան Բերին:

Մարզպետունին հասկանում է Ցլիկ Ամրամին պատուհասած ամբողջ ցավը:

Լուր է հասնում, որ արքան ծանր հիվանդ է: Թունավոր նետից խոցված մարմինը տեղի է տալիս:

Մարզպետունին արագորեն Երազգավորս է մեկնում և վերջին անգամ զրուցում է արքայի հետ: Շուտով Աշոտ Երկաթը վախճանվում է: Գահը է բարձրանում Աշոտի եղբայր Աբաս Ա-ն:

Բագարանի թագավոր Աշոտ Բռնավորը օգտագործում է Աշոտի հուղարկավորությունն իր մութ ու դաժան նպատակների համար: Նա որոշում է պատանդ վերցնել Գևորգ Մարզպետունուն, Աբաս Ա-ին, որպեսզի հետագայում ոստիկան Նսերի օգնությամբ Հայաստանի արքա հռչակվի:

Հուղարկավորությունից հետո Բռնավորը հրամայում է իր զինվորներին հարձակվել և գերեվարել Մարզպետունուն ու Աբասին: Վերջիններս սկսում են հերոսաբար դիմադրել, մինչև նրանց է միանում իշխանի որդին՝ Գոռը իր մարտիկներով: Աշոտ Բռնավորի նպատակը ձախողվում է, և նա փախուստի է դիմում:

Անցնում են տարիներ, Գևորգ Մարզպետունին վախճանվում է: «Հայրենիքի բարերարին» հուղարկավորում են Բագարանի մոտակայքում:

Սյուժեն վերարտադրելուց հետո **ուսուցիչն ամփոփում** է դասը՝ ավելացնելով, որ «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում առկա է հայրենասիրական մեծ ոգի և շունչ: Գրքի հեղինակը՝ Մուրացանը, իր ընթերցողներին հայրենասիրություն ու խիզախություն է ուսուցանում: Հենց դա է ստեղծագործության հիմնական գաղափարն ու իմաստը: Բացի այդ, հեղինակը վեպի միջոցով հաղորդում է իր անծայրածիր սերը հայրենիքի նկատմամբ: Գրքի բովանդակությունը կարծես յուրօրինակ պատգամ լինի երիտասարդ սերունդներին, որոնք պետք է դաստիարակվեն գրքի դրական հերոսների նման:

Վեպում շատ կան հայրենասիրական ու հերոսական տեսարաններ: Օրինակ՝ այն տեսարանը, երբ Գևորգ Մարզպետունին կույր իշխան ու ապստամբ Սահակ Սևադային համոզում է հրաժարվել ապստամբությունից և Աշոտ Երկաթից վրեժ լուծելու մտքից՝ հանուն հայրենիքի, հարազատ ժողովրդի և սուրբ հավատքի: Սևադան ներում է վերջինիս՝ իր և իր որդու դեմ կատարած ոճրագործությունը: Այդ քայլի համար Մարզպետունին Սահակ Սևադային «մեծ հայրենասեր» է կոչում:

Մեծ հայրենասիրական շունչ է պարունակում նաև այն տեսարանը, երբ Գևորգ Մարզպետունին երդվում է Մաշտոցի գերեզմանի մոտ, որ չի վերադառնա հարազատ օջախ, եթե երկրում մնա գոնե մեկ հագարացի: Մինչև իր կյանքի վերջը նա այդպես էլ տուն չի վերադառնում, որովհետև երկրում դեռ բնակվում էին հագարացիներ:

Կամ տեսարանը, որտեղ Գևորգ Մարզպետունին կռվի դաշտ է իջնում տասնինը զինվորներով: Չվախենալով մահից՝ հայ քաջերը պատրաստ էին զոհաբերել սեփական կյանքը հանուն հայրենիքի փրկության: Արդյունքում նրանց խիզախությունը պսակվում է հաղթանակով:

Այսինքն՝ երդումն ու հայրենիքն իր համար միշտ մնում են առաջին տեղում, իսկ մնացած ամեն ինչը երկրորդական է: Ըստ Մարզպետունու՝ հայրենիքը սրբությունների սրբությունն է: Հանուն նրա չի կարելի խնայել բացարձակապես ոչ մի բան: Զուր չէ, որ Մարզպետունու հայրենասիրական ու հերոսական կերպարն անմահացել է հայ ժողովրդի հոգում :

Հանձնարարում ենք տնային աշխատանք.

Մեկնաբանի՛ր ստեղծագործության սիրված հերոսների զգայական վիճակը, գնահատի՛ր մարդկային հարաբերությունները, գեղեցիկ արարքները՝ բերելով բնագրային համապատասխան օրինակներ:

Հերոսը	Հերոսի զգայական վիճակը	Մարդկային հարաբերությունները	Գեղեցիկ արարքները

ԴԱՍ 5

ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ՌԵԱԼԻԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՌԵԱԼԻԶՄԸ

ՆՊԱՏԱԿԸ՝

- **Ծանոթացնել** հեղինակի տեղին ու դերին հայ գրականության մեջ:
- **Ծանոթացնել** Շիրվանզադեի կենսագրության հիմնական դրվագներին, ստեղծագործական ուղուն և ստեղծագործության համառոտ բնութագրին:
- **Տալ** որոշակի գիտելիքներ ռեսալիզմի առանձնահատկությունների և հեղինակի որդեգրած գրական ուղղության մասին:
- **Նպաստել** տիրապետելու կենսագրական նյութի ճանաչողական և դաստիարակչական նշանակությանը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

- **Ներկայացնել** Շիրվանզադեի ապրած ժամանակաշրջանը և ստեղծագործության ընդհանուր պատկերը:
- **Կազմել** սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը:
- **Ներկայացնել** հեղինակի կենսագրության հիմնական փաստերն ու ապրած ժամանակաշրջանը և դրանց ազդեցությունը նրա ստեղծագործության վրա:
- **Ցույց տալ** Շիրվանզադեի գրական կերպարները՝ ելնելով գրողի և նրա ստեղծագործության մասին նշանավոր մարդկանց ասույթներից ու կարծիքներից:
- **Նշել գրողի** ստեղծագործություններից մի քանիսի վերնագրերը:
- Կարդացած նյութը ավելի լավ գիտակցելու նպատակով **կատարել** կարճ գրառումներ:
- **Ներկայացնել** հեղինակի ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, գաղափարների արդիականությունը և համեմատել մեր օրերի հետ:
- **Թվարկել** հեղինակի ստեղծագործությունները և **նշել** թեմատիկան:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Ներածական զրույց», «Խթանող հարցեր», «Հարցու-պատասխան», «Փոխներգործուն գրառումների համակարգ արդյունավետ կարդալու և մտածելու համար (ՓԳՀԱԿՄՀ)», «Հարցերի քարտարան»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, Շիրվանզադեի դիմանկարը, մեծերի կարծիքները նրա մասին, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ՏԻՊԸ: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դասի ժամանակ ուսուցիչը պետք է հետաքրքիր կազմակերպի դասի սկիզբը, ներկայացնի դասի թեման և խնդիրները, աշակերտներին մղի կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ նոր գիտելիքների ուսումնասիրման, նրանց մեջ ձևավորի նախնական կարողություններ, ամրապնդի և համանման ձևաչափով իրավիճակներում դրանք կիրառելու հնարավորություն ընձեռի, կատարել տա գիտելիքների և կարողությունների կիրառման վարժություններ, ստեղծագործաբար կիրառել տա ստացված գիտելիքներն ու

կարողությունները, կատարի հմտությունների փորձարկման վարժանքներ, հանձնարարի տնային առաջադրանք, ամփոփի դասը, աշակերտների կատարած աշխատանքի գնահատում կատարի:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Տնային աշխատանքի ստուգում ենք իրականացնում: Դասի այս փուլում, դրական արդյունքների հասնելու համար, պետք է կարողանանք ծավալել այնպիսի գործողություն, որը հնարավորություն կընձեռի բարձրացնելու դասի նպատակաուղղվածությունը և արդյունավետությունը՝ համակարգված հնարքների կիրառման միջոցով հնարավորինս արագ ստուգելու դասարանի բոլոր աշակերտների տնային աշխատանքները: Սա ենթադրում է, որ ուսուցիչը հնարավորություն կստանա կարճ ժամանակահատվածում (5-7 րոպե) բացահայտել աշակերտների մեծամասնության գիտելիքների աստիճանը և ընդհանուր բացթողումները:

Տնային աշխատանքի հանգամանալից ստուգման ընթացքում կբացահայտվեն թերությունների պատճառները՝ նպաստելով նյութի իմացության որակի բարելավմանը:

Տնային աշխատանքները ստուգելուց և բացթողումները շտկելուց հետո որոշ աշակերտների գնահատում ենք և անցնում դասի հաջորդ փուլին:

«Ներածական զրույցի» միջոցով ուսուցիչը սովորողներին բացատրում է, որ Շիրվանզադեն նոր որակ հաղորդում հայ գրականությանը՝ այն բարձրացնելով ժամանակի եվրոպական արվեստի **չափանիշներին:** Գեղարվեստական ինքնատիպ մտածողությամբ, իրական կյանքի ու երևույթների համակողմանի և խոր պատկերմամբ, մարդու հոգեբանության ներքին շերտերի բացահայտմամբ մեծ գրողը բացառիկ ներդրում ունեցավ *ռեալիստական արձակի ու դրամատուրգիայի զարգացման ասպարեզում*: Նրա ստեղծագործությունը 19-րդ դարի երկրորդ կեսի և հաջորդ դարասկզբի մի ամբողջ երկրամասի՝ Անդրկովկասի ազգային, սոցիալ-քաղաքական ու հանրային կյանքի հավաստի պատմությունն է՝ մարմնավորված գեղարվեստական տպավորիչ պատկերներով ու բնավորություններով:

Այնուհետև աշակերտներին հանձնարարում ենք համագործակցային աշխատանք՝ ուսումնասիրել «Շիրվանզադեի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Ռեալիզմի առանձնահատկությունները. Շիրվանզադեի ռեալիզմը» թեման և ներկայացնել «Փոխներգործուն գրառումների համակարգ արդյունավետ կարդալու և մտածելու համար (ՓԳՀԱԿՄՀ)» մեթոդի կիրառմամբ. այս մեթոդի կիրառությանը սովորողներն արդեն ծանոթ են:

ՓԳՀԱԿՄՀ-ի աղյուսակը լրցնելուց հետո աշակերտները խմբերով ներկայացնում են իրենց թեման:

Նրանք բացատրում են, որ Շիրվանզադեն (*Ալեքսանդր Մովսիսյան*) ծնվել է 1858 թ. գարնանային մի գիշեր՝ ապրիլի 7-ին, Անդրկովկասի Շիրվան պատմական երկրամասի հայաշատ Շամախի քաղաքում: «Այնտեղ երկինքը կապույտ էր, ինչպես փիրուզա, երկիրը՝ բույսերով, ծաղիկներով փարթամ, ինչպես մի սքանչելի պարտեզ: Այնտեղ ձմեռը եղանակը մեղմ է, դուրեկան. ո՛չ քամի, ո՛չ փոթորիկ: Իսկ գարնանը և ամռանը բարձրագագաթ ծառերի վրա գիշեր-ցերեկ երգում են անթիվ սոխակներ: Եվ ի՞նչ համեղ մրգեր կան այնտեղ..., ի՞նչ հոտավետ պտուղներ»,- այսպես է Ալեքսանդրը ներկայացնում իր ծննդավայրի գեղեցկությունը: Իսկ հետագայում էլ՝ գրական գործունեության գրեթե սկզբից, նախընտրում է սիրելի տեղանքի անվանը կցել պարսկերեն ***զադե*** (որդի) բառը՝ հանդես գալով **Շիրվանզադե** (Շիրվանի որդի) գրական **կեղծանվամբ :**

Ընկերները շարունակում են՝ բացատրելով, որ անուրախ մանկության ու պատանեկության տառապանքների բուն աղբյուրը ընտանիքի ներսում էր: Ալեքսանդրն ուներ մի երիտասարդ հորեղբայր՝ Հարություն անունով, որը շարունակ խաթարում էր նրա ծնողների հոգեկան հանգստությունը: «Այդ մարդը մեր գերդաստանի չար ոգին էր, մի անվերջ սպառնալիք իր մերձավորների նկատմամբ,- պատմում է Շիրվանզադեն:- Որքան հայրս աշխատասեր էր, ժուժկալ (զուսպ), ամոթխած և հավատարիմ նամուսի (պատվի) պահանջներին, նույնքան նրա կրտսեր եղբայրը խռովարար էր և ենթակա իր անձնական կրքերին: Ատելով աշխատանքը՝ նա սիրում էր վայելել կյանքի հաճույքները...»: Հարությունը հարբեցող էր, խաղամոլ. թե՛ դրսում և թե՛ տանը շարունակ տուրուդմբոցների մեջ էր: Երեխան հաճախ էր տեսնում հոր ու հորեղբոր կռիվները, լսում վերջինիս հայհոյանքները ծնողների հասցեին: Փողոցային հերթական կռիվներից մեկի ժամանակ դաշույնի հարվածից մահացու վիրավորվում է Հարությունը և մի քանի օր տանջվելուց հետո վախճանվում:

Իր աղքատիկ կրթության համար Ալեքսանդրը պարտական էր մեղմաբնույթ ու քնքշասիրտ մորը, երբ վեց տարեկանում, հետևելով ընկերների օրինակին, ինքնակամ մտնում է Սարգիս վարժապետի ուսումնարանը:

Ապա **մյուս խումբն** է պատմում, որ Ալեքսանդրը երկու տարի այնտեղ սովորելուց հետո տեղափոխվում է տեր Ավանեսի ուսումնարանը: Կիսագրագետ մարդ էր այս վարժապետը: Նրա բնութագիրը շատ դիպուկ ու համառոտ ներկայացրել է հենց ինքը՝ Շիրվանզադեն. «Երկու բանում նա շատ եռանդուն էր՝ ուտելում և ծեծելում»: Եվ ի՞նչ գիտելիք պիտի տար տեր Ավանեսը երեխաներին, երբ նրա աշակերտները շարունակաբար իրենց կրունկներին զգում էին «կրթության» սթափեցնող անողոք հարվածները: Իսկ ամենից շատ ծեծվում էին այն աշակերտները, որոնց «ծնողները չէին կարողանում խնձորի տոլմա կամ ընկույզի հալվա ուղարկել նրա համար»:

Ալեքսանդրն այստեղ էլ երկար չի մնում, և մայրը նրան տեղափոխում է հայոց թեմական դպրոց, այնտեղից էլ՝ հոր պահանջով՝ գավառական երկդասյա ռուսական դպրոց, քանի որ Մինաս աղան նպատակ ուներ որդուն հետագայում ներգրավել իր առևտրական գործերի մեջ: Այդ դպրոցում սովորում էին տարբեր ազգերի երեխաներ, և պատանին, շփվելով նոր ընկերների հետ, ծանոթանում է նրանց նիստուկացին, սովորույթներին ու հոգեբանությանը: Գրողն այդ ամենը հետագայում շատ տպավորիչ պիտի պատկերեր իր «*Վարդան Միրումյան*» վեպում: Ալեքսանդրն այնտեղ սովորում է վեց տարի (1866-1872), ռուսերենից ձեռք է բերում անհրաժեշտ գիտելիքներ, հասկանում ուսման արժեքն ու երազում բարձր կրթության մասին: Սակայն ցավալի հանգամանքների բերումով այսքանով էլ ավարտվում է նրա ուսումնառությունը:

Ուսուցիչն է շարունակում՝ ասելով, որ հորեղբոր մահից հետո գալիս են նորանոր աղետներ քաղաքի, նաև ընտանիքի գլխին: 1872 թ. սոսկալի երկրաշարժը Շամախին վերածում է փլատակների, գրեթե հիմնահատակ կործանում Մովսիսյանների տունը: Այդ բոլորին հետևում է հոր անսպասելի սնանկացումը, որովհետև հայտնաբերվում է արհեստական ճանապարհով ստացվող առաջին ներկանյութը՝ տորոնից անհամեմատ էժան ալիզարինը: Ընտանիքը հայտնվում է կատարյալ չքավորության մեջ: Եվ ահա պատվախնդիր Մինաս աղան նորից ձեռքն է վերցնում դերձակի ասեղը, երդվում Ղուբայից տուն չվերադառնալ, մինչև չհարստանա. տասնհինգ տարի մնալով այնտեղ՝ նա այդպես էլ չի հարստանում:

Պատանին այս պայմաններում ստիպված է լինում իր մեջ խեղդել ուսման ծարավը: «Միակ փափագս՝ շարունակել ուսումս,- գրում է Շիրվանզադեն,- արդեն մեռել էր այն օրը, երբ հայրս ասաց. «Որդի՛, ուսումը հարուստների որդկերանց համար է. քո հայրն այժմ ոչինչ չունի»»: Ալեքսանդրը փորձում է աշխատել: Բայց ի՞նչ գործ կարող էր գտնել մի կիսավեր քաղաքում, որը ո՛չ արդյունաբերություն ուներ և ո՛չ էլ քիչ թե շատ խոշոր վաճառականություն: Նա մի ամբողջ տարի աղ կշռող է աշխատում իրենց հարևանի աղի պահեստում, բայց չի վարձատրվում: Այնուհետև գրագրություն է անում տեղի ոստիկանությունում՝ դարձյալ առանց ամսականի: Պատանին 1875-ին մեկնում է Բաքու՝ օրվա հաց հայթայթելու նպատակով: Սկզբում ապրում է մորաքրոջ՝ Մարիամի ընտանիքում, ուր հասակ էին առնում ապագա նշանավոր Աբեյյան եղբայրները՝ դերասան Հովհաննեսը, հրապարակախոս Ներսեսը և դրամատուրգ Ալեքսանդրը: Բարի ու ազնիվ մորաքույրը զարմիկին վերաբերվում է իբրև հարազատ մայր, և Շիրվանզադեն էլ իր հերթին նրան համարում է իր երկրորդ մայրը, «մի քնքուշ, հոգատար մայր, որ երկար տարիներ ինձ պահել է իր գրկում, սիրել ու փաղաքշել է անսահման մայրական սիրով՝

հավասար իր զավակներին»: Աբելյան ընտանիքը չափազանց ընթերցասեր էր, խաղաղ, և Ալեքսանդրն այնտեղ է առաջին անգամ ծանոթանում հայկական պարբերականներին, կարդում Աբովյանի «Վերքը...», Ռաֆֆու «Ոսկի աքաղաղը», Սունդուկյանի կատակերգությունները և ուրիշ շատ գործեր:

Պատանու համար հեշտ չէր գործ գտնել նաև Բաքվում. մեծ դժվարությամբ նրան հաջողվում է գրագրի պաշտոն ստանալ նահանգական վարչության գրասենյակում: Սակայն ձանձրալի, միապաղաղ ու անիմաստ աշխատանքը, որ տևում է երեք տարի (1875-78), հիասթափեցնում է Ալեքսանդրին, և նա հաշվապահի օգնականի, հետո հաշվապահի պաշտոնով աշխատում է նավթային մի գրասենյակում: Երբ փոքրիշատե բարելավվում է նրա նյութական վիճակը, Բաքու են տեղափոխվում նաև մայրն ու փոքր քույրը:

19-ամյա Ալեքսանդրը դառնում է գրադարանի վարիչ ու սկսում անհագորեն կարդալ ռուս և եվրոպական գրականությունը:

Շիրվանզադեն ամուսնացել է 27 տարեկանում. նրա կինը՝ Նինան, գնդապետ Զաքարիա Լոռիս-Մելիքյանի դուստրն էր: Ինչպես հավաստում են ժամանակակիցները, նա օժտված էր «աստվածային համբերությամբ» և ամուսնու հավատարիմ նեցուկն էր կյանքի դժվար պահերին, նրա վշտերի և ուրախությունների վկան ու աջակիցը: Այդ ամուսնությունից ծնվում են երեք երեխաներ՝ Ռուբենը, Արմենը և Մարգարիտը: Շիրվանզադեն 1905 թ. ընտանիքով տեղափոխվում է արտասահման, հաստատվում Փարիզում, իսկ զավակներին էլ հետագայում բարձրագույն կրթության տալիս եվրոպական համալսարաններում:

Փարիզը՝ համաշխարհային քաղաքակրթության այդ գլխավոր կենտրոնը, ընդլայնում է Շիրվանզադեի աշխարհայացքը: Գրողն այնտեղ այցելում է Սորբոնի նշանավոր համալսարան, երեք տարի շարունակ սիրողաբար լսում լրջմիտ գիտնականների դասախոսությունները գրականության, պատմության և հոգեբանության մասին: Նրան հատկապես գրավում են երկու դասախոսներ՝ գրաքննադատ Էմիլ Ֆագիեն և պատմաբան Ֆրանսուա Օլարը: Փարիզում բնակվելու հինգ տարիների ընթացքում գրում է «*Ջհուդի ականջը*» պատմվածքը և մի քանի պիեսներ՝ «*Ավերակների վրա*», «*Կործանվածը*», «*Արմենուհի*» և «*Շառլատանը*»: Ֆրանսերեն են թարգմանվում նրա որոշ երկեր, որոնք շարժում են ֆրանսիացի ընթերցողների և գրական շրջանների հետաքրքրությունը:

Շիրվանզադեն 1910-ին վերադառնում է Թիֆլիս ու եռանդագին արձագանքում համաշխարհային և ազգային դրամատիկ իրադարձություններին՝ Առաջին աշխարհամարտ, ռուսական հեղափոխություններ, Հայոց մեծ եղեռն... Նա 1919 թվականին նորից մեկնում է Փարիզ, որտեղից վերադառնում է յոթ տարի անց՝ 1926-ին, և վերջնականապես հաստատվում արդեն Խորհրդային Հայաստանում: Վաստակաշատ գրողը, որին մայր հայրենիքն ընդունում է առանձնակի ջերմությամբ ու կարոտով, զգաստ հայացքով կազմակերպում է թե՛ հանրային-քաղաքական նոր իրավիճակում հայտնված երկրի գրական-մշակութային կյանքը, խրախուսում աչքի ընկնող տաղանդներին, թե՛ նոր եռանդով շարունակում ստեղծագործական իմաստալից ուղին՝ գրելով դեռևս արտասահմանում ծրագրած «*Մորգանի խնամին*» կատակերգությունը և ավարտելով «*Կյանքի բովից*» հուշագրության երկու հատորը:

Շիրվանզադեն վախճանվեց 1935 թվականի օգոստոսի 7-ին: 77-ամյա պատկառելի վիպասանը մեծ շուքով հուղարկավորվեց Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում:

Շիրվանզադեն իր ստեղծագործությունների մեջ պատկերում է հայ իրականությունը, որքան էլ հայ կյանքը և գրականությունը առաջ գնալու լիներ, այնուամենայնիվ մեծ դեր են ունեցել նաև Շիրվանզադեի այնպիսի գլուխգործոցները, ինչպես, օրինակ, «Քաոս» վեպը, «Պատվի համար» դրաման: Նշանավոր գործեր են նաև «Նամուս » վեպը և «Արտիստը» պատմվածքը:

Շիրվանզադեն հասնում է ռեալիստական արվեստի խոր ըմբռման, որը նրան բարձրացնում է իր ժամանակի գրական մեծությունների և առաջավոր մտածողների շարքը: Նա գտավ այն նոր խոսքը, որ ճշմարիտ տաղանդի ու ստեղծագործության պայմանն է՝ բացելով բոլորովին նոր, ընթերցողի համար անհայտ աշխարհ, ստեղծեց դարաշրջանի մի նոր պատկեր:

Որքան մեծ է արվեստագետը, այնքան մեծ է նրա ընդգրկումների շրջանը, այնքան ավելի լայն ու խորն է վերցնում իր ժամանակի կյանքը: Հենց այս իմաստով Շիրվանզադեն մեծություն է հայ և անդրկովկասյան ժողովուրդների գրականության մեջ: Նա դուրս գալով հայկական կյանքի սահմանից, ընդհանրապես անդրկովկասյան կյանքի նորագույն դարաշրջանն է նկարագրել: Շիրվանզադեն տեսնում է նոր հասարակության բոլոր կողմերը՝ համեմատելով հին կենսաձևը նորի հետ: Նա չէր կարող չհիշել ֆեոդալական անցյալը և չէր կարող չտեսնել կյանքի որոշակի առաջընթացը: Բայց Շիրվանզադեի ռեալիզմի կարևորագույն հատկանիշն այն է, որ նա կարողանում է տեսնել նաև նոր հասարակության արատները: Հեռու մնալով անցյալի մեծարման պատրանքից, ավելի ճիշտ՝ դատապարտելով հետամնաց անցյալը գրողը իդեալներ չի փնտրում ներկայի մեջ: Ներկան նրա մեջ առաջացնում է խոր դժգոհություն ու անբավականություն: Ժխտելով անցյալը՝ նա բացասական դիրք է ընդունում նաև ներկայի նկատմամբ՝ դրական շատ բաներ տեսնելով մեծ քաղաքներում, այնտեղ որոնելով իր սիրած հերոսներին՝ աշխատանքի մարդկանց, ժողովրդին նվիրված մտավորականներին, ժամանակաշրջանի զոհերին:

Գրողը մարդկային կյանքի ողբերգությունը և հոգեբանական երևույթները բացատրում է շրջապատող կյանքի փաստերով, հասարակական և սոցիալական միջավայրով: Մեծ դարաշրջանը պատկերելիս Շիրվանզադեն հիմք է ընդունել տիպական արվեստը, այսինքն՝ իրականության տված փաստերի գեղարվեստական ընդհանրացումը: Նա կատարելության հասցրեց հոգեբանական-սոցիալական վեպը՝ հաղթահարելով նախորդ շրջանի հայ արձակի զարգացման դժվարությունները: Շիրվանզադեն գրում է հստակ և տեսանելի, առանց ավելորդության ու առանց պաճուճանքի, պարզ, բայց ոչ պարզունակ, ճշգրիտ, բայց ոչ չոր, նրա ոճին բնորոշ է չափի արտակարգ զգացումը: Գրողը շատ հարցեր է առաջ քաշել, կյանքի շատ հարցեր է երևան հանել: Մեծ քաղաքում նա ականատես է եղել շատ երևույթների, որոնք ուղղակի կամ անուղղակի բացահայտում են կյանքի հակասությունները, նկարագրել է ժամանակի իրականության սոցիալական-բարոյական ախտերը՝ մի դեպքում հիմք ունենալով ընտանեկան հարաբերությունները, մի այլ դեպքում՝ հասարակական հարաբերությունները: Մի դեպքում նրա հերոսն ընտանեկան հարկի տակ տառապող

կինն է, մի այլ դեպքում՝ ծանր ողբերգություն ապրող դեմոկրատ ինտելիգենտը: Շիրվանզադեն ձգտում է ցույց տալ այն պայմանները, որոնցից սկիզբ է առնում ողբերգությունը: Նա մեծ ուշադրություն է դարձրել նաև մտավորականությանը՝ ներկայացնելով նրա ընդհանուր կյանքի ու սոցիալական հարաբերությունների մի կողմը: Ռեալիզմն իր բովանդակությամբ շատ ավելի համապարփակ է, միշտ էլ ունեցել է սոցիալական բովանդակություն և կապված է իրականության արտացոլման հետ: Շիրվանզադեն միշտ ձգտել է արտացոլել դարաշրջանի աչքի ընկնող հակասությունները: Առանձնակի ուշադրություն է դարձրել մտավորականության և հասարակության խնդիրներին:

Շիրվանզադեի ստեղծագործությունները մեծ ազդեցություն են թողել հայ գրականության վրա: Նա մեծ ուսուցիչ է տիպեր ու կոնֆլիկտներ ստեղծելու՝ կյանքը իր բոլոր կողմերով նկարագրելու արվեստով և չափի զգացումով:

Ուսուցիչն ամփոփում է թեման՝ ավելացնելով, որ Շիրվանզադեի ստեղծագործությունը հայկական ռեալիզմի բարձրագույն արտահայտություններից է: Առաջնորդվելով իրական կյանքի ճշմարիտ պատկերման սկզբունքով՝ գրողն ստեղծել է գեղարվեստական այնպիսի պատկերներ ու կերպարներ, որոնք ձևավորվում են իրականության բնորոշ հանգամանքների ու մարդկային արարքների միջոցով: Նա խորապես հասկացել է ոչ միայն նոր՝ դրամատիրական հասարակարգի առաջավոր բնույթը, այլև բերած արատներն ու աղետները և տպավորիչ մարմնավորումներով բացահայտել դրանք: Դուրս գալով հայկական կյանքի շրջանակներից՝ իրապաշտ արվեստագետը գեղարվեստական ինքնատիպ կերպավորումներով ներկայացրել է սոցիալ-հոգեբանական այնպիսի իրավիճակներ, որոնք համամարդկային են և արդիական բոլոր ժամանակների համար:

Բավական լայն է Շիրվանզադեի երկերի ընդգրկումների շրջանակը՝ գավառական պատկերներից մինչև արդյունաբերական մեծ քաղաքի բազմադեմ կյանքի ու միջանձնային հարաբերությունների նկարագրություն, պատվի յուրատեսակ ըմբռնման պայքար, կնոջ, ընտանիքի ու բարոյականության արծարծումներ, մտավորականության ամենատարբեր շերտերի աշխարհընկալման բացահայտումներ և ուրիշ բազմաթիվ խնդիրներ: Արհեստավոր ու առևտրական, բանվոր և գործարանատեր, գյուղացի ու քաղաքացի, բուրժուա և մտավորական, հոգևորական ու ինժեներ, ուսանող ու արվեստասեր, տարբեր ազգերի ներկայացուցիչներ. ահա մարդկանց ոչ ամբողջական այն թվարկումը, որոնք նրա երկերի մասնակիցն են և ստեղծում են բազմաշերտ ու գունագեղ միջավայր: Նրանք՝ այդ բազմաքանակ կերպարները և բնավորությունները, իրենց հետ բերում են նաև լեզվաոճական աննախադեպ հարստություն, մեծացնում հայերենի ուժն ու հմայքը:

Շիրվանզադեն բազմաժանր հեղինակ է. գրել է բազմաթիվ վեպեր և վիպակներ, պատմվածքներ ու դրամատիկական երկեր, հրապարակախոսական և հուշագրական էջեր:

Արձակագրի մանկության ու պատանեկության շրջանի տպավորությունները հիմնականում մարմնավորվել են *գավառական քաղաքի պատկերներում*: «*Ֆաթման և Ասադը*», «*Տասնհինգ տարի անց*«, «*Չար ոգի*» («*Ցավագարը*»), «*Վարդան Ահրումյան*» երկերում

ներկայացվում են գրողի հայրենի քաղաքի նահապետական կյանքի և սնոտիապաշտության տխուր ու արատավոր կողմերը: Հնի ու նորի սահմանագծին հայտնված շփոթահար մարդիկ ապրում են խոր ողբերգություն. ավանդական բարքերի և միջանձնային երբեմնի մաքուր ու ազնիվ հարաբերությունների մեջ ներխուժել են նոր ժամանակների բերած զանազան արատներ՝ չոր, կանխիկ հաշիվ ու խաբեություն, և ակամա մեղավոր դարձած անմեղ մարդիկ, ապրելով բարոյահոգեբանական ցավալի փլուզումներ, զոհ են գնում կարծրացած բարքերին:

Շիրվանզադեի ստեղծագործության մեջ այնուհետև աստիճանաբար ուրվագծվում, հետո մեծ տեղ է զբաղեցնում *արդյունաբերական քաղաքի պատկերումը*: Բազմաթիվ վեպերում, վիպակներում, պատմվածքներում ու դրամաներում («*Հրդեհ նավթագործարանում*», «*Գործակատարի հիշատակարանից*», «*Քաոս*», «*Պատվի համար*»...) հայ գրականության մեջ առաջին անգամ նոր դիտանկյունից են երևում կյանքի տերերն ու սոցիալական անարդարության զոհերը, «սև ոսկու»՝ նավթի համար սկզբնավորված անզուսպ մրցավազքն ու պայքարը: Գործարանատերը բանվորին կարող է վերաբերվել իբրև ստրուկի՝ փոքր-ինչ չմտածելով նրա կյանքի ապահովության մասին, բնավ չկարեկցելով նրան մեծ դժբախտության պահին, և կործանվող սեփականությունը պահպանելու խելագար կրքով համակված՝ պահանջել հրդեհի ճանկերից փրկել ամենից առաջ նյութական արժեքը: Մի ուրիշ դեպքում նախկին գործակատարը խաբելու, թալանելու, իր տերերից գողանալու ստորագույն միջոցներով արդյունաբերական քաղաքում կարող է հասնել սոցիալական բարձր դիրքի՝ «առանց դիմելու իր խղճին և նրանից թույլտվություն խնդրելու»: Կամ դրամատիրական հարաբերություններն ունակ են այնքան ամայացնելու մարդկային հոգին, որ միլիոնատեր հայրը հասարակության մեջ սեփական վարկը բարձր պահելու համար «այրի իր դստեր պատիվը»...

Արվեստագետն անդրադարձել է նաև *կնոջ, ընտանիքի և բարոյականության խնդիրներին.* «*Արամբին*», «*Օրիորդ Լիզա*», «*Մելանիա*» արձակ երկերն ու մի շարք դրամաներ («*Եվգինե*», «*Ունե՞ր իրավունք*» և այլն) ներկայացնում են միշտ արդիական այդ թեմաները: Նրա հայացքից այնուհետև չեն վրիպել հայ մտավորականը («*Ջուր հույսեր*», «*Արսեն Դիմաքսյան*») և «նորածնի պես ազնիվ» ու «քնարի լարի նման զգայուն» արվեստասեր պատանին, որի գեղեցիկ երազները խորտակվում են կյանքի արշալույսին («Արտիստը»):

Շիրվանզադեն նոր հասարակության սոցիալ-հոգեբանական երևույթների *համապատկերը*, այնուամենայնիվ, ներկայացրել է հատկապես երկու երկերում՝ «*Պատվի համար*»-ում, որը մեր գրականության լավագույն դրաման է, և «*Քաոս*»-ում՝ հայ ռեալիստական վեպի գլուխգործոցում:

Շիրվանզադեն արժանացել է Հայաստանի և Ադրբեջանի ժողովրդական գրողի (1930 թ.), Անդրկովկասի մշակույթի վաստակավոր գործչի կոչումների:

Գրողի բազմաթիվ ստեղծագործություններ բեմադրվել են հայ թատրոնում, նրա երկերի հիման վրա «Հայֆիլմում» նկարահանվել են «Նամուս» (1925 թ.), «Չար ոգի» (1927 թ.), «Պատվի համար» (1956 թ.), «Մորգանի խնամին» (1970 թ.), «Քաոս» (1973 թ.) կինոնկարները:

Երևանում և ՀՀ այլ քաղաքներում Շիրվանզադեի անունով կոչվել են դպրոցներ և փողոցներ, Կապանի պետական թատրոնը:

Թեմայի ներկայացումն ավարտելուց հետո ամփոփիչ հարցերով ամրապնդում ենք դասը և անցնում ենք կշռադատման փուլին: Խմբերին հանձնարարում ենք կատարել հետևյալ առաջադրանքները.

1. **Երկսյուն աղյուսակով ներկայացրե՛ք Ալեքսանդր Շիրվանզադեի ապրած ժամանակաշրջանը և ստեղծագործության ընդհանուր պատկերը:**

2. **Մեծերի կարծիքների հիման վրա բնութագրե՛ք Շիրվանզադեին ձեր պատկերացմամբ:**

3. **Կազմե՛ք սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը:**

4. **Պատմի՛ր քո մանկության տարիներից հետաքրքիր պատմություններ, զուգորդի՛ր Շիրվանզադեի կյանքի հետ (անհատական կամ խմբային աշխատանք**):

Շիրվանզադեի ապրած ժամանակաշրջանը, կենսագրական տվյալներ	**Ստեղծագործության ընդհանուր պատկերն ըստ ժամանակագրության**

5. **Նկարագրե՛ք Շիրվանզադեի գրական կերպարը՝ ելնելով գրողի և նրա ստեղծագործության մասին նշանավոր մարդկանց ասույթներից ու կարծիքներից:**

Իրենց առաջադրանքներն ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց գրառումները, գնահատվում, և կատարում ենք անդրադարձ: Եթե հանձնարարության կատարման համար ժամանակ չի մնացել, կարելի է հանձնարարել տնային աշխատանք:

ԴԱՍ 6

ԹԵՄԱՆ՝ ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ. «ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ»

ՆՊԱՏԱԿԸ՝

- Ծանոթանալ դրամատուրգիայի ժանրային առանձնահատկություններին:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

- **Ներկայացնել** դրամատուրգիայի ժանրային առանձնահատկությունները:
- **Ներկայացնել** և **ճանաչել** դրամայի կառուցվածքը և սյուժեն, դրա բաղկացուցիչ մասերը:
- **Վերլուծել** կերպարները՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի կատարած արարքի դրդապատճառները և ներքին դրաման:
- **Մեկնաբանել** «Պատվի համար» դրամայում արտահայտված սոցիալական և գեղագիտական արժանիքները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «5-րոպեանոց շարադրանք», «Դերային կամ կերպարային ներկայացում», «Խթանող հարցեր», «Հարցուպատասխան», «Հարցերի քարտարան»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, «Պատվի համար», դրաման, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ՏԻՊԸ: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Տնային աշխատանքի հանգամանալից ստուգման ընթացքում կբացահայտվեն թերությունների պատճառները, որն էլ հնարավորություն կընձեռի ապահովելու նյութի ամբողջական յուրացումը:

Տնային աշխատանքները ստուգելուց և բացթողումները շտկելուց հետո որոշ աշակերտների գնահատում ենք և անցում կատարում դասի հաջորդ փուլին:

Խթանման փուլում հանձնարարում ենք գրել 5-րոպեանոց շարադրանք՝ «Ինչ ենք հասկանում պատիվ ասելով» թեմայով:

Ըստ Հանրակրթության պետական չափորոշչի (հաստատված՝ 09.02. 2021)՝ կրթության բովանդակության հիմքում դրված է կարողունակահեն մոտեցումը, ըստ որի՝ ուսումնական գործընթացը պետք է կազմակերպել այնպես, որ ուսումնառության գործընթացում ձեռք բերված գիտելիքները, ձևավորված կարողությունները, հմտությունները, արժեքներն ու դիրքորոշումները հնարավորինս կիրառվեն առօրյա կյանքում, տարբեր իրավիճակներում սովորողները կարողանան արագ և արդյունավետ կողմնորոշվել, արձագանքել, առաջարկել համապատասխան լուծումներ: Ուսումնառության գործընթացում սովորողների վերոնշյալ կարողունակությունները կարող են ձևավորվել ու զարգանալ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, գործունեության տեսակների, տեխնոլոգիաների, մեթոդների կիրառման արդյունքում:

Լայն հնարավորություններ ունեցող մեթոդներից մեկն էլ **դերային խաղն** է, որը կարող է նպաստել բազմաթիվ կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Դերային խաղերն օժանդակում են առարկայական չափորոշիչներով սահմանված ծրագրային բովանդակության համակարգված յուրացմանը, զարգացնում են երևակայությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման հմտությունները, մարզում են հիշողությունը: Դրանք նաև էապես նպաստում են սովորողների մայրենի լեզվով գրագետ հաղորդակցվելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, ինքնադրսևորվելու, գործելու, գնահատելու, թիմային աշխատանքի, հուզակամային որակների դրսևորման ու հղկման, ինչպես նաև Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված սոցիալական բազմաթիվ կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Դերային խաղերի ընթացքում ձևավորված կարողունակությունները կարող են հաջողությամբ կիրառվել ուսուցման գործընթացում և առօրյա կյանքում: Որպես դերային խաղեր՝ ուսուցման գործընթացում հաճախ կիրառվում են բանավեճերի, պատմական կոնկրետ իրավիճակների, առօրյա կյանքից վերցված տարբեր դրվագների ներկայացումներ և այլն: Դերային խաղերի ընթացքում սովորողը ակտիվ փոխազդեցության մեջ է մտնում իր կողմից մարմնավորվող կերպարի հետ, ինչն էլ հնարավորություն է տալիս սեփական փորձառության միջոցով հասկանալ դրված խնդիրը, համակարգված գիտելիքներ ձեռք բերել ոչ միայն տվյալ հերոսի կամ սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների, այլև ժամանակաշրջանի կամ կոնկրետ իրավիճակի վերաբերյալ: Կախված դասի նպատակից, մարմնավորելով իրեն հատկացված դերը, սովորողը դերախաղի ժամանակ կարող է արտահայտել սեփական մոտեցումները, առաջարկել տարբեր լուծումներ, սեփական կարծիք ու տեսակետ ձևավորել, թե ինչպես կվարվեր տվյալ դերում կամ իրավիճակում հայտնվելու դեպքում:

Ստորև ներկայացնում ենք դերային խաղի մեթոդի կիրառման ժամանակ ուսուցչի և սովորողների գործողություններն ըստ փուլերի:

«Դերային ներկայացում» մեթոդի կիրառման համար դասի պլանավորման ժամանակ ուսուցչից պահանջվում է լուրջ նախապատրաստական աշխատանք: Նա պետք է իրականացնի հետևյալ քայլերը.

Նախապես պետք է կարդալ տալ ստեղծագործությունը. կոնկրետ դեպքում՝ «Պատվի համար» դրաման, ընտրել հատվածը, որը պետք է ներկայացնեն դերախաղով: Պետք է ընտրել այնպիսի դասանյութեր (թեմաներ), որոնք ընդգրկում են տիպական կերպարներով և իրադարձություններով հարուստ ժամանակաշրջան: Դա թույլ կտա բազմակողմանիորեն բացահայտել և վերլուծել ժամանակաշրջանի առանձնահատկությունները:

Շատ կարևոր է հիմնախնդրի ճիշտ ձևակերպումը: Պետք է ընտրել այնպիսի հիմնախնդիր կամ ձևակերպել այնպիսի հիմնահարց, որը թույլ կտա տարբեր դիրքերից, տարբեր կերպարների գործունեության միջոցով հանգամանորեն վերլուծել տվյալ ժամանակաշրջանին բնորոշ իրադարձությունները:

«Պատվի համար» դրամայի հիմնախնդիրը բոլոր կողմերից դիտարկելու նպատակով պետք է սահմանել այնպիսի ուղղություններ, որոնք հնարավորություն կընձեռեն բացահայտել, թե ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ժամանակահատվածում, կոնկրետ իրավիճակում կամ կոնկրետ իրադարձության ժամանակ տվյալ կերպարները ինչ նպատակներ, շահեր, ցանկություններ, զգացողություններ, մտադրություններ, կողմնորոշումներ ունեին, նրանց գործունեության արդյունքում ինչ հաջողություններ, ձեռքբերումներ են արձանագրվել, նրանք ինչ անհաջողություններ, սխալներ և բացթողումներ են ունեցել, այլ գործիչների գործունեությունը ինչ ազդեցություն է ունեցել նրանց վրա, և հակառակը՝ նրանց գործունեությունը ինչ ազդեցություն է թողել տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող բարքերի, սովորությունների վրա, ընդհանրապես՝ հայոց պատմության մեջ և այլն:

«Դերային ներկայացում» մեթոդը, կախված ուսուցչի դրած նպատակից, կարելի է կիրառել ինչպես օրվա դասի վերջում, այնպես էլ՝ թեման ավարտելուց հետո կամ թեմայի ամփոփման ժամանակ: Եթե ուսուցիչը պլանավորել է դերային խաղը կիրառել *մեկ դասանյութի բովանդակության շրջանակներում,* այդ դեպքում տարբեր առանձնահատկություններով (պատմական ժամանակաշրջանի առանձնահատկություններ, առանցքային կերպարներ, կերպարների քանակ և այլն) պայմանավորված՝ դերային ներկայացումը կարելի է իրականացնել դասի վերջին փուլում՝ հետադարձ կապի ժամանակ՝ դրան հատկացնելով 5-10, առավելագույնը՝ 15 րոպե: Թեպետ, տարբեր առանձնահատկություններով պայմանավորված, ուսուցիչը կարող է այնպես պլանավորել, որ մեկ դասանյութի շրջանակներում իրականացվող դերային ներկայացմանը ևս հատկացվի մեկ դասաժամ (թեմայի ամփոփման ժամանակ). այդ դեպքում կարելի է դրան հատկացնել մեկ դասաժամ (40-45 րոպե):

Ընդհանրապես դերերի բաժանման տարբեր մոտեցումներ կան: Կարելի է կատարել պատահական դերաբաշխում՝

- վիճակահանության միջոցով, սկզբում բաժանել գլխավոր դերերը, իսկ մնացածը բաժանել սովորողներին՝ ըստ նրանց ցանկությունների և նախասիրությունների:
- դերերը բաժանել մասնակիցներին ըստ նրանց հետաքրքրությունների, կարողությունների և այլն,
- ընտրությունը թողնել մասնակիցներին և այլն:

Եթե «Դերային ներկայացում» մեթոդը ուսուցիչը պլանավորել է իրականացնել մեկ դասանյութի շրջանակներում, խորհուրդ է տրվում դերերը բաժանել վիճակահանության միջոցով, իսկ թեմայի ամփոփման համար կիրառելու դեպքում խորհուրդ է տրվում դերերը բաժանել ըստ մասնակիցների կարողությունների, հետաքրքրությունների, կամ սկզբում բաժանել գլխավոր դերերը, իսկ մնացածը՝ ըստ սովորողների ցանկության:

Այս դեպքում կարելի է դրամայի գործող անձանց դերերը բաժանել նախապես, որ սովորողները հնարավորություն ունենան սովորել իրենց դերերը, որ սովորողները առավել բազմակողմանիորեն և խորությամբ ուսումնասիրեն իրենց բաժին ընկած կերպարը կամ սոցիալական դերը:

Դասարանի այն աշակերտները, որոնք չեն մասնակցելու դերային ներկայացմանը, պետք է դիտորդի և գնահատողի դեր կատարեն: Նրանք, ըստ ուսուցչի կազմած գնահատման չափանիշների (տե՛ս 8-րդ կետ), պետք է հետևեն խաղի ընթացքին և կատարեն համապատասխան նշումներ:

Ստորև ներկայացնենք գնահատման այն չափանիշները, որոնք պետք է հաշվի առնվեն ուսուցչի կողմից.

- բովանդակության համապատասխանություն թեմային, հիմնախնդրին և սահմանված ուղղություններին,
- խոսքի կիրթ և գրագետ ձևակերպում,
- խոսքի արտահայտման (ձայնի տոնայնություն, հնչերանգ, բարձրություն, արագություն և այլն) և բառապաշարի համապատասխանություն իր կողմից մարմնավորվող դերին,
- կեցվածքի, քայլվածքի, հայացքի, դիմախաղի, համապատասխան ժեստերի, արտահայտչական միջոցների (հոգոց, հազ, հեգնանք, ծիծաղ, թփթփոց, ձեռքսեղմում և այլն) հնարավոր համապատասխանություն իր կողմից մարմնավորվող դերին,
- դերը սկսելու, շարունակելու, տարբեր պատճառներով ընդհատվելու դեպքում՝ այն կրկին շարունակելու ունակություն,
- դերային ներկայացման ընթացքում բարոյականության սկզբունքների և քաղաքավարության կանոնների պահպանում (պահպանել խոսելու հերթը, մինչև վերջ լսել մյուս դերակատարների խոսքը, չմիջամտել դասընկերոջը դերի ժամանակ, չծաղրել, չվիրավորել, չարհամարհել զրուցակցին և այլն):

Ելնելով դրված նպատակից՝ ուսուցիչը կարող է սահմանել այլ չափանիշներ ևս. հնարավորության դեպքում ապահովել դերերին համապատասխան հագուստ, կենցաղին բնորոշ տարբեր պարագաներ, ինչպես նաև համապատասխան դիտողական նյութեր:

Ներկայացումն առավել տպավորիչ դարձնելու համար ցանկալի է.

- դերը ներկայացնելու ժամանակ սովորողները կրեն տվյալ ժամանակաշրջանի գործիչների, սոցիալական դերերի համապատասխան հագուստ, լրացնող որոշ պարագաներ և այլն,
- լսարանը կահավորված լինի ժամանակաշրջանին և դերերի կենցաղին բնորոշ որոշ պարագաներով,
- դերային ներկայացման ժամանակ հնչի համապատասխան երաժշտություն (տվյալ ժամանակաշրջանի համար գրված կամ դերային ներկայացման ոճին համապատասխան),
- դասարանում ներկայացման համար լինեն համապատասխան պաստառներ,
- սահիկահանդեսով ներկայացված լինեն դերային ներկայացման մասնակից առանցքային կերպարների նկարներ կամ այդ դերերն իրականացրած դերասանների նկարներ, տվյալ ժամանակաշրջանի քաղաքը, որտեղ կատարվում են գործողությունները, պատմաճարտարապետական կառույցների (կտավներ, մանրանկարներ,

որմնանկարներ, խճանկարներ և այլն) լուսանկարներ և այլն:

Ուսուցիչը ներկայացնում է թեման ընդհանուր գծերով՝ ասելով, որ դրաման առաջին անգամ բեմադրվել է Բաքվում՝ 1904 թվականի դեկտեմբերի 10-ին: «Կյանքի բովից»-ում Շիրվանզադեն գրել է. «1904 թվականի ամռանը «Կոջոր» ամառանոցում գրեցի «Պատվի համար»-ը: Այս անգամ որոշեցի պիեսը տանել Բաքու և առաջին անգամ այնտեղ ներկայացնել»: 1905 թվականի հունվարի 3-ին դրաման բեմադրվեց նաև Թբիլիսի Արտիստական ընկերության թատրոնում: Բաքվում և Թբիլիսիում դրաման ջերմ ընդունելություն գտավ: Թերթերը գրում էին. «Պիեսի ֆաբուլան վերցված է իրական կյանքից, գործող անձինք այնպիսի մարդիկ են, որոնց մենք հանդիպում ենք ամեն քայլափոխի», «...տիպերը գծված են, վառ և կենդանի»:

1905 թվականին դրաման լույս տեսավ առանձին գրքով: Կարճ ժամանակում դրաման լայն մասայականություն ձեռք բերեց հայության բոլոր հատվածներում: : «Պատվի համար» դրաման թարգմանվել է բազմաթիվ լեզուներով՝ ռուսերեն, վրացերեն, պարսկերեն, ֆրանսերեն, էստոներեն, թուրքերեն:

Ապա բացատրում ենք, որ դրաման ունի հետևյալ բովանդակությունը. Էլիզբարովն ընկերոջ մահից հետո յուրացրել է նրա ունեցվածքը՝ բախտի քմահաճույքին թողնելով իր ընկերոջ ընտանիքը: Սակայն Օթարյանն ուսումն ավարտելուց հետո պահանջում է իրենց հասանելիքը՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր: Էլիզբարովի կրտսեր դուստրը՝ Մարգարիտը, ցանկանում է վերականգնել արդարությունը, սակայն ինքն իրեն և իր «պատիվը» պաշտպանելու համար Էլիզբարովը պատրաստ է ամեն ստորության: Նա կրակն է նետում Օթարյանի փաստաթղթերը, որոնք Մարգարիտի մոտ էին:

Մարգարիտն Օթարյանին խոստացել էր վերադարձնել փաստաթղթերը, սակայն դրանք այրվում են: Հայրն այրում է իր աղջկա պատիվը. այսպես է մտածում Մարգարիտն ու ինքնասպանություն է գործում՝ չցանկանալով ապրել առանց պատվի:

Այդ ընտանիքում յուրաքանչյուրը պատիվ կոչվածը յուրովի է ընկալում: Էլիզբարյանի համար պատիվ է համարվում իր անունը. նա չի ուզում բոլորին հայտնի դառնա, որ ինքը խաբեությամբ է հարստություն դիզել: Բագրատը երազում է հզոր ֆինանսական սյուն դառնալ, Ռոզալիան անխնա վատնում է հոր փողերը: Նրա համար կարևոր է միշտ լավ տեսք ունենալը: Մարգարիտի համար կարևոր է ազնվությունը: Նա ինքը ազնիվ անձնավորություն է և անհրաժեշտ է համարում փաստաթղթերը հետ վերադարձնել, քանի որ դրանք միակ ապացույցն են, որ ունի Օթարյանը:

Մարգարիտը ստիպված ասում է, որ իբր փաստաթղթերն ինքն է այրել, կամենալով փրկել հոր պատիվը, և անգամ այդ պահին՝ մահից րոպեներ առաջ, պաշտպանում է հորը: Մեկ անգամ ևս հիշեցնելով դրամայի սյուժեն՝ ուսուցիչը խթանում է երեխաներին՝ հետագա գործողություններում նրանց ակտիվացնելու նպատակով:

Անդրադարձ կատարելով Շիրվանզադեի ցանկացած ստեղծագործության՝ միանշանակ կարող ենք ասել, որ նա ռեալիստ գրող է, քանի որ պատկերում է այն, ինչն ակտուալ է մեր կյանքում, առաջ է քաշում այն խնդիրները, որոնցից յուրաքանչյուրին էլ կարող ենք բախվել իրական կյանքում: Այլ կերպ ասած՝ Շիրվանզադեն պատկերում է

կյանքը՝ ինչպես որ կա: Նույնն է նաև նրա «Պատվի համար» դրամայում: Ընտանիքի հայրը՝ Անդրեաս Էլիզբարյանը, հարստացել էր ընկերոջը՝ Օթարյանին, թալանելով և նրա ընտանիքին բախտի քմահաճույքին թողնելով: Նրա ամբողջ կյանքն էր ստի ու կեղծիքի վրա հիմնված: Իսկ նրա ընտանիքի անդամները շահամոլ ու եսասեր էին, ապրում էին մեկը մյուսի մասին չմտածելով, անձնական շահերից գործելով: Միայն Մարգարիտը՝ Էլիզբարյանի դուստրը, այդ «սև թագավորության» մեջ միակ լուսավոր կետն էր, որին սիրահարված էր Օթարյանի որդին՝ Արտաշեսը: Նա այնքան էր սիրում և վստահում Մարգարիտին, որ նրա մոտ է թողնում այն կարևոր փաստաթղթերը, որոնցով ապացուցվում էր Էլիզբարովի «գողությունը»: Իսկ այդ թղթերը Էլիզբարովին պատվազրկում էին: Ի վերջո, «Պատվի համար»... , Ո՞րն էր այդ Պատիվը:

Ամեն մեկն իր պատվի տերն էր, և բոլորի համար այդ պատիվը նույնը չէր: Էլիզբարովի համար այդ պատիվն իր փողերն էին, իր տարիներ առաջ կատարած «գողությունը» քողարկելն էր: Նա եսասեր էր, շահամոլ, կեղծ ու դավաճան և իր պատիվը փրկելու համար գետնով է տալիս աղջկա պատիվը, որի համար պատիվը սերը, արդարությունն ու վստահությունն էր: Էլիզբարովը հանցանք էր գործել՝ թալանելով ընկերոջը, կառուցել էր իր համար մի պատ սեփական ես-ի և հանրության միջև: Որքան ստոր, ագահ մարդ էր նա իրականում, որ ինքախաբեությամբ փորձում էր խաբել նաև շրջապատին:

Ցանկացած ոք ի վերջո պատասխան է տալիս իր գործած սխալների համար: Անդրեաս Էլիզբարյանն էլ պատասխան տվեց, պատասխան տվեց աղջկա մահով:

ԴԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Դասանյութ՝ Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման

Ժամանակաշրջան՝ XIX դարի վերջ

Դերային ներկայացման հիմնական հարցը

XIX դարի վերջ հայ ընտանիքի անդամների հակամարտությունն ի՞նչ ազդեցություն ունեցավ ընտանիքի վրա:

Դերային ներկայացման հիմնական ուղղությունները

Դերերի՝

- ցանկությունները, նպատակներն ու շահերը,
- իրականացրած քայլերը,
- ձեռքբերումները,
- անհաջողություններն ու սխալները,
- գործունեության ազդեցությունը ընտանիքի, անհատի վրա:

Դերեր

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՆԴՐԵԱՍ ԷԼԻԶԲԱՐՅԱՆ–Տեղական հայտնի հարուստներից մեկը: 55 տարեկան, առույգ և ամրակազմ տղամարդ, կարճ խուզած ալեխառն մազերով, ցանցառ մորուքով և կարմիր այտերով:

ԵՐԱՆՈՒՀԻ–Նրա ամուսինը: Քահանայի դուստր, 46 տարեկան, ժամանակից առաջ թառամած, դժգույն, նիհար կին, համակրելի և գեղեցիկ:

ԲԱԳՐԱՏ–Էլիզբարյանների ավագ որդին: Ժամանակակից գործնական երիտասարդ, 27 տարեկան, եռանդուն դեմքով: Ձևերն ու շարժումներն արագ են, ոճը՝ կտրուկ և գրական:

ՍՈՒՐԵՆ–Էլիզբարյանների երկրորդ որդին, 23 տարեկան կենսախինդ երիտասարդ, որի դեմքը կրում է շվայտ կենցաղի վաղաժամ հետքերը, բայց համակրելի է: Հագնվում է վերջին տարազով:

ՌՈԶԱԼԻԱ–Էլիզբարյանների մեծ աղջիկը: 24 տարեկան, բավական գեղեցիկ, բայց չափազանց ինքնագոհ դեմքով օրիորդ: Հագնվում է միշտ շքեղ, առանց գույների խտրության:

ՄԱՐԳԱՐԻՏ–Էլիզբարյանների երկրորդ աղջիկը: 22 տարեկան, մտախոհ դեմքով, արտահայտիչ աչքերով օրիորդ՝ մի քիչ մորը նման, բայց ավելի գեղեցիկ: Հագնվում է համեստ, ճաշակով:

ԱՐՏԱՇԵՍ ՕԹԱՐՅԱՆ–Անդրեասի հանգուցյալ ընկերոջ որդին և նախկին որդեգիրը: 26-27 տարեկան, խոհուն դեմքով, նյարդային շարժումներով: Հագնվում է միշտ սև:

ՍԱՂԱԹԵԼ–Երանուհու եղբայրը և Անդրեասի հավատարիմ աջակիցը: Մոտ 50 տարեկան, անվրդով, բայց խորամանկ դեմքով: Երեսը սափրում է, քունքերի մոտ փոքրիկ մորուսհատներ թողնելով: Հագնվում է միշտ միատեսակ՝ լայն վարտիք, սև ատլասի արխալուղ, վրեն երկարավուն, լայն պիջակ: Վզովը գցած ժամացույցի ոսկե շղթա: Մեջքին կապած ոսկե քամար: Միշտ գործ է ածում դեղին սաթի տերողորմյա խոշոր հատիկներով: Կոշիկների տակերը մի մատնաչափ հաստ են:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ – Անդրեասի հաշվապահը: Ժամանակից շուտ ծերացած, 42 տարեկան տղամարդ: Սովորական ծառայողի միջին տիպար:

ՎԱՐԴԱՆ – Սպասավոր Էլիզբարյանների գրասենյակում: Երիտասարդ: Խոսում է Շամախու բարբառով:

ԶԱՐՈՒՀԻ – Երիտասարդ աղախին:

Միջավայրը

- Բաքվի նահանգ
- Բաքու քաղաք
- Անդրեաս Էլիզբարյանի ընտանիքը

Իրական առանցքային հերոսների, սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների և նրանց գործունեության վերաբերյալ անհատական մեկնաբանություններն ու վերաբերմունքն արտահայտելու համար ուսուցիչի հարցադրումներն հիմնականում օժանդակում են սովորողների արժեքների ու դիրքորոշումների ձևավորմանն ու զարգացմանը:

Դերային ներկայացման ծրագրային շրջանակները՝

1. «Պատվի համար»-ի թեմայի՝ «Ներքին և արտաքին մարտահրավերներ» դասանյութի շրջանակներում:

Նախապես ուսուցիչն ու աշակերտներն ընտրում են դրամայի համապատասխան արարը, որը պետք է բեմականացվի, դերերը բաժանված են արդեն, սովորողները սկսում են իրենց ներկայացումը:

Ինչպես ցանկացած ուսումնական գործընթաց, դերային ներկայացման ավարտին պետք է ավարտվի ամփոփումը, որը կարելի է իրականացնել տարբեր ձևերով.

- զույգային կամ փոքր ենթախմբերով աշխատանքի,
- համախմբային քննարկման,
- համանուն կինոնկարը դիտելու,
- մի քանի սովորողների կողմից վերլուծության,
- ուսուցչի ամփոփիչ խոսքի կամ այլ միջոցներով:

Դերային ներկայացման ավարտին ուսուցիչն իր և դիտորդ սովորողների դիտարկումների հիման վրա իրականացնում է գնահատում:

«Դերային ներկայացում» մեթոդի կիրառմամբ դասը պլանավորելիս խորհուրդ է տրվում սովորողներին հնարավորություն ընձեռել արտահայտելու իրենց անհատական մեկնաբանություններն ու վերաբերմունքը գործող անձանց, սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների և նրանց գործունեության վերաբերյալ:

Դա կարելի է իրականացնել տարբեր ձևերով.

1. Սովորողն իր դերի ներկայացման վերջում կամ դերային ներկայացման ավարտին՝ անդրադարձի փուլում, արտահայտում է իր անհատական մեկնաբանություններն ու վերաբերմունքը՝ իր իսկ մարմնավորած կերպարի և նրա գործունեության վերաբերյալ:
2. Դերային ներկայացման վերջում ուսուցիչը կազմակերպում է համախմբային քննարկում, որին կարող է նաև նախորդել անհատական, զույգային կամ փոքր ենթախմբերով աշխատանք: Այդ աշխատանքի ընթացքում սովորողները, անկախ իրենց կողմից մարմնավորվող դերի, քննարկում են հարցեր, որոնք հիմնականում

ուղղված են սովորողների վերաբերմունքի և արժեհամակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

Ներկայացնենք նման հարցերի նմուշներ:

- Քեզ դո՞ւր եկան կոնկրետ իրավիճակում տվյալ հերոսի կողմից առաջարկված լուծումները, ինչո՞ւ:
- Եթե դու լինեիր տվյալ հերոսի փոխարեն, ինչ քայլեր կձեռնարկեիր, ինչո՞ւ:
- Ի՞նչ արդյունավետ լուծում կառաջարկեիր դու տվյալ իրավիճակում:
- Ի՞նչ հետևանքներ ունեցավ այս կամ այն կերպարի սխալը, բացթողումը տվյալ իրադարձության և հետագա ընթացքի վրա:
- Առանցքային հերոսների փոխհարաբերություններում ի՞նչն ես կարևորում, ինչո՞ւ:
- Ըստ քեզ՝ գլխավոր հերոսների փոխհարաբերություններն ի՞նչ ազդեցություն ունեցան տվյալ իրավիճակի վրա:
- Ո՞ր հերոսին կուզեիր նմանվել, ինչո՞ւ:
- Ի՞նչ կապեր ես տեսնում տվյալ ժամանակաշրջանի, իրավիճակի և արդի ժամանակաշրջանի գործընթացների միջև:
- Ի՞նչ կլիներ, եթե...
- Համեմատի՛ր հերոսների գործունեությունը, վերլուծի՛ր դրանց արդյունքներն ու հետևանքները:
- Գնահատի՛ր տվյալ հերոսի դերը հայ և համաշխարհային գրականության մեջ և այլն:

Նման բնույթի հարցերն ու առաջադրանքները նպաստում են սովորողների համեմատելու, հակադրելու, վերլուծելու, կարծիք հայտնելու, փաստարկելու և հիմնավորելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու, գնահատելու և արժևորելու և այլ կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև օգնում են կապեր գտնելու տվյալ ժամանակաշրջանի և արդի իրողությունների ու իր կյանքի միջև:

Թեմայի դերային ներկայացման ավարտելուց հետո կատարում ենք քննարկում և մտքերի փոխանակություն:

Կատարում ենք դասին անդրադարձ.

Ի՞նչն էր ամենալավը դերային ներկայացման աշխատանքում:	
Ի՞նչ հիմնախնդիր ուներ խումբը:	
Ինչպե՞ս վճռվեց այն:	
Ի՞նչը կարող էին ավելի լավ անել:	
Ի՞նչը կարելի էր բարելավել:	

ԴԱՍ 7

ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ «ՔԱՈՍ» ՎԵՊՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԻ, ԿՆՈՋ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ: ՎԵՊԻ ՄՅՈՒՍ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿԸ՝

- Նպաստել գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը:
- «Քաոս»-ի ուսումնասիրության ընթացքում շեշտադրել սովորողի մարդկային և ազգային նկարագրի՝ հայրենասիրության, պատասխանատվության, լայնախոհության, մեծահոգության, բարության զարգացումը:
- Ծանոթացնել վեպի կանանց կերպարներին:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

- **Վերլուծել** վեպի կանանց կերպարները՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի կատարած արարքի պատճառահետևանքային կապերը:
- Դիրքորոշում **արտահայտել, դրսևորել** սեր և հարգանք հեղինակի ապրումի և հույզի, ցավի վերաբերյալ:
- Վեպից **բերել** տողեր, որոնք արտահայտում են մարդկային բարոյական վեհ արարքներ:
- Վեպից **բերել** տողեր, որոնք արտահայտում են մարդկային բարոյական անկման արարքներ:
- **Բացատրել** և **հիմնավորել** վեպի արտահայտած գաղափարը՝ սեփական մեկնաբանությամբ:
- **Վերլուծել** վեպի մյուս կերպարները՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի կատարած արարքի պատճառահետևանքային կապերը:
- Դիրքորոշում **արտահայտել, դրսևորել** վերաբերմունք հեղինակի ստեղծած կերպարների վերաբերյալ:
- **Արդարացնել, մեղադրել կամ խղճալ** Մարթային, Ոսկեհատին՝ ասածը հիմնավորելով փաստերով:
- **Ներկայացնել** վեպի կանանց բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ՝ հիմնավորելով բնագրից բերված օրինակներով:
- **Թվարկել ու զանազանել** կանանց դրական ու բացասական կերպարները՝ հիմնավորելով իրենց կատարած արարքներով:
- **Վերլուծել** Շուշանիկի կերպարը՝ ներկայացնելով նրա արարքների դրդապատճառները:
- **Վերլուծել** Անտոնինա Իվանովնայի կերպարի զարգացման քայլաշարը:
- **Նկարել** վեպից որևէ հատված՝ ընտրելով համապատասխան խորհրդանիշ:

- **Վերլուծել** հեղինակի գրելաոճը, կերպար, պատկեր կերտելու հեղինակային առանձնահատկությունները:
- **Արժևորել** հայ գրականության դերը այլ ազգերի գրականությունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում:
- **Պարզաբանել,** որ ինքը հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդն է, դրսևորել պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման, զարգացման, արժևորման գործում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Խթանող հարցեր», «Խռնված հերթականություն», «3-րոպեանոց շարադրանք», «Հարցերի քարտարան»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, «Քաոս» վեպը, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ՏԻՊԸ: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս:

Նմանատիպ դասի ժամանակ պետք է աշակերտներին հոգեբանորեն ճիշտ նախապատրաստել ուսուցման այս փուլին՝ դասի սկիզբը ճիշտ կազմակերպելով: Երբ սովորողներն արդեն պատրաստ են դասին, հաղորդել դասի թեման և դրա հետ կապված առկա խնդիրները: Դա, անշուշտ, կնպաստի աշակերտներին մղելու կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ նոր գիտելիքների ուսումնասիրմանը, որը կզարգացնի նախնական կարողությունները ամրապնդելու և համանման ձևաչափով իրավիճակներում դրանք կիրառելու հմտությունը: Այստեղ կարելի է կիրառել գիտելիքների և կարողությունների զարգացմանն ուղղված վարժություններ: Ստեղծագործաբար կիրառել ստացված գիտելիքներն ու կարողությունները՝ կատարելով հմտությունների փորձարկման վարժանքներ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Տնային աշխատանքի ստուգում ենք իրականացնում, ապա կարճ հարցման միջոցով տեղեկություն ենք հավաքում հին դասի յուրացման վերաբերյալ, գնախատում ենք ոմանց:

Մինչև նոր թեմային անցնելը, աշակերտներին առաջարկում ենք վերհիշել իրենց հետ կատարված մի դեպք (նոր նյութի հետ կապված): Դրա նպատակն է՝ շահագրգռել, ակտիվացնել նրանց մասնակցությունը դասին, բացահայտել կապեր դասի և իրական կյանքի միջև: Դա հող է նախապատրաստում կարդացածն ավելի լավ ընկալելու համար:

Գրածները կարդալուց կամ սովորողների բանավոր շարադրանքները լսելուց հետո կիրառում ենք «Խռնված հերթականություն» մեթոդը:

Մի քանի սովորողի հարցնելուց հետո ամբողջ խմբի հետ փոխգործուն եղանակով աշխատելու նպատակով ուսուցիչը կարող է վեպի իրադարձություններից հինգը կամ վեցը գրառել առանձին թղթերի վրա (A4): Թղթերը խառնում է և դնում գրատախտակի ներքևում: Դասարանին առաջարկվում է որոշել ճիշտ հերթականությունը: Աշակերտները մեկ–մեկ մոտենում են և թղթերից մեկը դնում են իրենց համապատասխան տեղում: Երբ բոլորը համաձայնության են գալիս, ուսուցիչը հանձնարարում է բնագրի համապատասխան հատվածն ընթերցելիս ուշադիր զննել բնագիրն ու տեսնել, թե

արդյոք իրենց դասավորությունը համապատասխանո՞ւմ է տեքստի դասավորությանը: Այս մեթոդը կարելի է օգտագործել բոլոր փուլերում:

Ուսուցման կազմակերպման ընթացքում փորձառու ուսուցչի դերը շատ կարևոր է: Դասը հետաքրքիր անցկացնելու համար նա պետք է ընտրի դասի ու սովորողների կարիքներին համապատասխան մեթոդներ՝ ուսուցման ակտիվությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Պետք է իմանալ, որ աշակերտներն ամենից արդյունավետ սովորում են այն ժամանակ, երբ թեմայի մասին որոշակի նախնական գիտելիքներ են ունենում: Եթե ուսուցիչն օգնի աշակերտին պատկերացնելու այն գաղափարներն ու հասկացությունները, որոնց մասին կարդալու են, ընթերցանությունն ավելի հետաքրքիր կլինի: Ուսուցիչը կարող է պարզել աշակերտների գիտելիքները թեմայի մասին՝ անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով այն աշակերտների համար, որոնք ոչ բավարար գիտելիքներով են սկսում ընթերցանությունը: Կարելի է նաև աշակերտների ուշադրությունը հրավիրել առանցքային բառերի վրա և շարժել նրանց հետաքրքրությունը, ինչպես վերևում արդեն արեցինք:

Սովորողների հետազոտական աշխատանքի հմտությունները զարգացնելու նպատակով կիրառում ենք «Նախագծի» մեթոդը:

Դասարանը բաժանում ենք 5 խմբի: Յուրաքանչյուր խմբի հանձնարարում ենք նախագծի թեմաներից որևէ մեկը:

Ուսուցչիչը պետք է իմանա, թե որոնք են նախագծի մեթոդի կիրառման նպատակները: Ստորև ներկայացնում ենք գծակարգ, որը տեղեկություն է տալիս այդ մասին:



ԽՈՒՄԲ I

Հիմնվելով գրողի ապրած ժամանակաշրջանի և կենսագրական փաստերի վրա՝ «Քաոս»-ի կանանց խնդիրները դիտարկել տարածության և ժամանակի համատեքստում:

ԽՈՒՄԲ II

Քննարկել «Քաոս»-ի կանանց տեսակետների փոփոխությունները և դրանց առաջացման պատճառները (մշակույթ, մտածողություն, արժեհամակարգ, ազգային պատկանելություն և այլն), դիտարկել ժամանակավրեպ կամ արդիական մոտեցումները:

ԽՈՒՄԲ III

Ուսումնասիրել «Քաոս» վեպում կիրառված ոճական հնարների բազմազանությունը և դրանց ազդեցությունը սեփական զգացմունքների վրա:

ԽՈՒՄԲ IV

Հետազոտել և քննարկել հեղինակի արծարծած խնդիրների տարբեր ընկալումներն ու բազմակողմանի մեկնաբանությունները «Քաոս»-ում՝ դիրքորոշում արտահայտելով:

ԽՈՒՄԲ V

Գնահատել «Քաոս» վեպում ներկայացված անհատի, ընտանիքի, հասարակության ժառանգած ավանդույթները, դիտարկել դրանց զարգացումները որպես հայ մարդու ընդհանրական նկարագրի արտահայտություններ:

Թեմաները խմբերին բաժանելուց հետո ուսուցիչը նշում է աշխատանքների ներկայացման ժամկետը, ձևաչափը և կառուցվածքը:

Աշխատանքների ներկայացման ժամանակահատվածը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հետազոտական աշխատանքները, անում մեկնաբանություններ՝ միմյանց լրացնելով:

Այս փուլում գրավոր աշխատանքի միջոցով աշակերտներն ամփոփում են հետազոտվող թեմայի վերաբերյալ իրենց մտքերը, ընկալումներն ու պատկերացումները: Ուսուցչի համար տեսանելի է դառնում աշակերտների կողմից նյութի ընկալման աստիճանը: Խմբերին հանձնարարվում է կատարել դասի յուրացմանն ուղղված ամփոփիչ աշխատանք:

Երեխաները ակտիվ քննարկում ու մտքեր են փոխանակում, ապա խմբային աշխատանքի գնահատում ենք կատարում:

Թեման ամփոփում է ուսուցիչը՝ ներկայացնելով վեպի կանանց վերլուծությունը:

Դասի ավարտին հանձնարարում ենք տնային աշխատանք՝ գրել շարադրություն՝ «Մարդու փառամոլությունը նրա մեծագույն թշվառությունների աղբյուրն է» վերնագրով:

ԴԱՍ 8

ԹԵՄԱՆ՝ «ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ» ՎԻՊԱԿԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ: ԱԲԻՍՈՂՈՄ ԱՂԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ

ՆՊԱՏԱԿԸ՝

- **Գաղափար տալ** երգիծանքի և «Մեծապատիվ մուրացկանները» երգիծական վիպակի մասին:
- **Նպաստել** վիպակի կառուցվածքը, գաղափարը, սյուժեն, բովանդակությունը, հերոսների արարքները ընկալելուն**:**
- **Ծանոթանալ** Պարոնյանի երգիծանքի ժանրային տարբերակներին՝ ըստ առարկայի և երևույթի հանդեպ հեղինակի ունեցած դիրքորոշման:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

- **Բնութագրել** Աբիսողոմ աղային, նրա արարքները, մեկնաբանել սոցիալ-հոգեբանական տեսանկյունից:
- **Ներկայացնել** Աբիսողոմ աղային որպես միջոց՝ ցուցադրելու ազգի մտավոր ու բարոյական կացությունը՝ բնագրից բերելով համապատասխան օրինակներ:
- Ստեղծագործաբար **վերաշարադրել** վեպի բովանդակությունը՝ կիրառելով բնագրից սովորած նոր բառեր և պատկերավոր արտահայտություններ:
- **Մեկնաբանել** հեղինակի հույզերն ու ապրումները և դրանց ազդեցությունը անձի վրա:
- **Բնութագրել** հերոսներին՝ օգտվելով հեղինակային բառապաշարից:
- **Բացատրել՝** ժամանակը, միջավայրը ինչ կերպ են ազդել հերոսի հոգեբանության վրա:
- **Գնահատել** հեղինակի վարքագիծը և **արտահայտել** վերաբերմունք նրա հանդեպ:
- **Բնութագրել** Աբիսողոմ աղային, նրա արարքները, մեկնաբանել սոցիալ-հոգեբանական տեսանկյունից:
- Ստեղծագործաբար **վերարտադրել** գրական երկի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները:
- **Թվարկել** մեծապատիվ մուրացկաններին, մեկնաբանել նրանց արարքները՝ հիմնավորելով բնագրից բերած օրինակներով:
- **Հիմնավորել՝** ինչու է Պարոնյանը վեպը վերնագրել «Մեծապատիվ մուրացկանները» և ոչ թե այլ վերնագրով: Սա պատահակա՞ն է արդյոք, թե՞ մտացածին:
- Ձեր կարծիքով այս երկը քանի՞ գաղափար է արտահայտում: Խմբով **քննարկել,** թե ինչու եք այդպես մտածում: **Ձևակերպել** գաղափարը ձեր բառերով:
- **Բնութագրել** վեպի երկրորդական կերպարները առանձին-առանձին՝ ապացուցելով նրանց «մեծապատիվ մուրացկան» լինելը:
- **Ներկայացնել** վեպում արտահայտված հույզերն ու ապրումները:

- **Մեկնաբանել կամ հիմնավորել** գրողի ոճական հնարների ընտրությունը (մեկնաբանել գրող- ընթերցող կապը, բերել համապատասխան օրինակներ՝ անդրադառնալով լեզվական, պատկերավորման, կերպավորման միջոցներին, նկարագրություններին, երկխոսություններին և այլն):
- **Հորինել** պատում՝ որպես վերնագիր կամ բնաբան ընտրելով գրական երկից:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: «Կարճ դասախոսություն», «Մտագրոհ», «Հարցերի քարտարան»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ: Դասագիրք, «Մեծապատիվ մուրացկանները» վիպակը, նշագրիչ, թուղթ:

ԴԱՍԻ ՏԻՊԸ: Նոր նյութի հաղորդման դաս

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Կարճ հարցման միջոցով ստուգում ենք հին դասի յուրացումը և տնային աշխատանքը, շտկումներ ենք կատարում, եթե դրա կարիքը կա: Ամփոփում ենք թեման, միավորային գնահատում կատարում և անցնում նոր նյութի ուսուցմանը:

Դասի խթանման փուլում մտագրոհ ենք անում «մեծապատիվ մուրացկաններ» բառակապակցությամբ: Այնուհետև հիմնաբառի շուրջը եղած բառերով կազմել ենք տալիս նախադասություն, որը բնորոշի՝ ինչ է նշանակում «մեծապատիվ մուրացկաններ» արտահայտությունը:



Սովորողները կարդում են իրենց կազմած նախադասությունները, ապա անցնում ենք նոր թեմայի ուսուցմանը:

Ուսուցիչը կարճ դասախոսության միջոցով բացատրում է, որ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վիպակը գրվել է 1887 թվականին: Այն հայ գեղարվեստական արձակի դասական երկերից է: Դեպքերի հանգուցակետում Աբիսողոմ աղան է՝ ամուսնանալու նպատակով Տրապիզոնից Կոստանդնուպոլիս եկած մի մեծահարուստ, որը զուրկ է հոգեկան ու մտավոր հետաքրքրություններից, անտարբեր՝ ազգի և մարդկության ճակատագրի հանդեպ: Նրան հետաքրքրում են միայն իր կենսաբանական պետքերը: Եվ այս սահմանափակ անձնավորությանը սպասարկելու են գալիս «մեծապատիվ մուրացկանները»՝ կյանքի սոցիալ-հասարակական պայմանների բերումով իրենց անհատականությունը կորցրած ու հոգեպես սնանկ, գումար վաստակելու համար ամեն ինչի ընդունակ հայ «մտավորականության» ներկայացուցիչները՝ թերթի

խմբագիրը, քահանան, բանաստեղծը, լուսանկարիչը, բժիշկը, ուսուցիչը, փաստաբանը, դերասանը:

Վեպի առերևույթ կենցաղային երգիծանքը հասարակական շատ ավելի ընդգրկուն խնդիրներ է արծարծում. հանձինս Աբիսողոմ աղայի և մյուս հերոսների՝ Պարոնյանը ներկայացնում է իրականության համապատկերը՝ մասնավոր անձերի ճակատագրում վեր հանելով հայության հիվանդագին կացությունը Թուրքիայի տիրապետության տակ:

Այնուհետև սովորողներին խմբերի ենք բաժանում և նրանց տալիս ենք բնագրային հատվածներ՝ կարդալու ու վերլուծելու, ապա ամբողջացնելու Աբիսողոմ աղայի կերպարը:

Ի ԽՈՒՄԲ

Հազար ութը հարյուր յոթանասուն... չեմ հիշեր՝ քանիին, սեպտեմբերի երեսունը մեկին,– ներեցեք, երեսունին պիտի ըսեի, վասնզի սեպտեմբերն երեսուն օր միայն ունի,– երկար և ընդարձակ թիկնոցի մը մեջ փաթաթված միջահասակ և գիրուկ մարդ մը, որ Տրապիզոնի շոգենավեն նոր ելած էր, Ղալաթիո նավամատույցին վրա կայնած՝ նավակե մը յուր սնդուկները հանել կաշխատեր:

Կը տեսնեք՝ որչափ պարզությամբ սկսա: Պատմությունս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարյուր օրինակ ավելի ծախելու համար չըսի, թե նույն օրն սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև կուգար, թե խառն բազմություն մը հետաքրքրությամբ դեպի Ղալաթիո հրապարակը կը վազեր, թե ոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր և այլն խոսքեր, որովք վիպասաններն կսկսին միշտ իրենց վեպերը: Ես ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, որովհետև նույն օրն ոչ հով կար, ոչ անձրև, ոչ խուռն բազմություն և ոչ ձերբակալված աղջիկ մը:

Արդ, առանց կասկածելու հավատացեք պատմությանս, որ ժամանակակից դեպք մ' է:

II ԽՈՒՄԲ

- Կուզեմ, որ պատկերս փառավոր կերպով քաշվի: Կուզեմ թիկնաթոռի մը վրա նստիլ, առջևս ունենալ երկու սպասավոր, մեկ աղախին. այնպես ըրեք, որպես թե ագարակի մը մեջ ըլլամ, ասդին վարուցան, անդին կովերեն կաթ կթեն, ասդին ոչխարներն արածեն, ասդին ցանեն՝ անդին քաղեն, ասդին հերկեն, անդին մածուն շինեն, ասդին ձմերուկ փրցունեն, անդին կարագ շինեն, ասդին սագերը ծովու մեջ լողան, անդին անտառին մեջ փայտ կտրեն, ասդին սայլերով ցորեն փոխադրեն, անդին վերջապես ինչ որ կըլլա ագարակի մը մեջ, տեսնվի պատկերիս մեջ:

III ԽՈՒՄԲ

Աբիսողոմ աղան առանձին մնալով սկսավ ճամփան շարունակել՝ ինքն իրեն հետևյալ խորհրդածություններն ընելով.

«Ես ինքզինքս չէի կարծեր այն չափ մեծ մարդ, որչափ որ կը կարծե այս խմբագիրն. բայց հարկավ այն ինձմե աղեկ գիտե իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ՚ է և ուսումնական է...: Վաղը լրագրի մեջ իմ անունս տեսնողները անշուշտ իրար պիտի անցնին և հետաքրքրություն պիտի ունենան ինծի հետ տեսնվելու. վաղը պետք է որ կիրակի օրվան հագուստներս հագնիմ և ոսկիե ժամացույցս ու շղթաս ալ դնեմ. սպասավորներս ալ հետս բերելու էի. ո՞վ գիտեր...: Ամեն մարդ պիտի իմանա վաղը, որ մեծ մարդ մը եկած է Կ. Պոլիս. ազնվախոհ, ազնվասիրտ, լեզվագետ, ուսումնական, դաստիարակյալ, կրթյալ և այլն մեկը, և՛ յուրաքանչյուր կնիկ պիտի ըսե իր էրկանը. «Մեր աղջիկը սա Աբիսողոմ աղային տանք»: Էրիկն ալ պիտի պատասխանե կնկանը. «Նայինք՝ Աբիսողոմ աղան մեր աղջիկը կառնե՞, անիկա հարուստ տեղե մը աղջիկ առնել կուզե հարկավ»: Այս պատասխանին վրա էրկան և կնկան մեջ վեճ մը պիտի ծագի և իրարու գլուխ պիտի պատռեն. որո՞ւ հոգ...: Անունիս լրագրին մեջ անցնիլն սա օգուտն պիտի ունենա, որ երկու օրվան մեջ հարուստ աղջիկ մը առնելով պիտի լրմնցունեմ ամուսնության գործն, որու համար միայն եկած եմ հոս... այս ամուս...»:

IV ԽՈՒՄԲ

- Կուզեի, որ սպասավորներս երկուքն ալ չախելով դիմացես վռնտեի, և անոնք ալ գլուխնին ծռած դուրս ելնեին. վերջապես սանկ բաներ չը՞ կրնար ըլլալ... կամ թե մեկը ծեծեի... օրինակի համար, մեր ագարակներուն վերակացուին երեսն ի վեր պոռայի... «մա՛րդ, քեզի քա՞նի անգամներ հրամայեցի, որ մշակներու հետ քաղցրությամբ վարվիս, կովերուս հետ սիրով երթաս, վար ու ցանը ժամանակին ընես, քանի որ ասոնք չըրիր, ես ալ քեզի կը վռնտեմ»: Վերակացուն ալ թաշկինակովն աչերը սրբելով՝ ոտներուս իյնա, աղաչե և պաղատե ըսելով. «Զավակներուս սիրույն համար ներե՛ հանցանացս. այսչափ տարիներե հետե ձեր հացը կուտեմ, դուք իմ բարերարս եք, ես Ձեզ գրկերուս մեջ այնչափ գրկած ու պտտցուցած եմ, երբ դեռ պզտիկ էիք»... վերջապես սըվոր նման բաներ չե՞նք կրնար դնել պատկերին մեջ:

V ԽՈՒՄԲ

- Ես շատ աժան չե՛մ ուզեր:

- Շատ լավ. աղջիկը ճերմա՞կ գույն ունենա, թե՞ քիչ մը թուխ:

- Ճերմակ կուզեմ:

- Աչքերը սև՞, թե՞ կապույտ:

- Եկու, տես, որ սևն ալ կը սիրեմ, կապույտն ալ...

- Կամ մին պիտի ըլլա, կամ մյուսը. վասնզի չկրնար ըլլալ անանկ աղջիկ մը, որուն մեկ աչքը կապույտ ըլլա, մյուսը՝ սև:

- Կապույտ ըլլա թո՛ղ:

- Շատ լավ: Հասակն և մազերը...

- Երկար, երկար:

- Մեջքը...

- Մեջքը բարակ ըլլա, բայց տկար չեմ սիրեր. կուզեմ, որ քալած ժամանակը միսերը շարժին: - Հայրը հարո՞ւստ է:

- Շատ հարուստ է, բայց հարստությունը չցցուներ:

- Շատ խանութնե՞ր ունի:

- Քսանի չափ:

- Տո՞ւն:

- Քառասունի մոտ:

- Շատ աղեկ, վաղը չէ մյուս օր կերթանք այդ աղջիկը տեսնելու:

VI ԽՈՒՄԲ

Այս լուսավորության վրա կես ժամ չանցավ, և Աբիսողոմ աղային ներկայացավ երի-տասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ. սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ, և վերջապես անանկ բանի մը կը նմաներ, որուն նմանը չկա: Հազիվ երեսուն երկու տարեկան կը թվեր: Կապույտ աչերով, դեղին մազերով զարդարված ըլլալով՝ ուներ նաև երկու մատ մորուք, որ մայրաքաղաքիս մեջ կամ սգո նշան է և կամ չքավորության: Հագուստներն այնքան հին էին, որ հնախույզները զանոնք գնելու համար մեծաքանակ գումար մը կուտային: Սակայն եթե հագուստի մասին վանողական էր, դեմքի մասին քաշողական զորություն ուներ այս անձը:

VII ԽՈՒՄԲ

- Հասկցա, ինչպե՞ս հանել տալու եմ ուրեմն պատկերս, որ տարակույս չմնա, թե պզտիկ մարդ չեմ, վասնզի ըսիք, թե պզտիկներն ալ իրենց պատկերներն կը հանեն:

- Ձեր պզտիկ մարդ չըլլալը հասկցնելու համար մեծ պատկեր հանելու եք թիկնաթոռի մը վրա նստած:

- Նոր հագուստներս հագնելու եմ, այնպես չէ՞:

- Այո՛:

- Ժամացույցս ալ կախելու եմ հարկավ:

- Տարակույս չկա:

- Սանկ ծխփող քաշելով և երկու մարդ ալ դեմս բարև բռնելով և մեկն ալ ետևես ձիս բռնելով:

- Այո՛, այո՛:

- Դեռ ուրիշ ի՞նչ պետք է փառավոր երևնալու համար:

- Այսչափ բավական է:

VIII ԽՈՒՄԲ

- Կուզեի, որ սպասավորներս երկուքն ալ չախելով դիմացես վռնտեի, և անոնք ալ գլուխնին ծռած դուրս ելնեին. վերջապես սանկ բաներ չը՞ կրնար ըլլալ... կամ թե մեկը ծեծեի... օրինակի համար, մեր ագարակներուն վերակացուին երեսն ի վեր պոռայի... «մա՛րդ, քեզի քա՞նի անգամներ հրամայեցի, որ մշակներու հետ քաղցրությամբ վարվիս,

կովերուս հետ սիրով երթաս, վար ու ցանը ժամանակին ընես, քանի որ ասոնք չըրիր, ես ալ քեզի կը վոնտեմ»: Վերակացուն ալ թաշկինակովն աչերը սրբելով՝ ոտներուս իյնա, աղաչե և պաղատե ըսելով. «զավակներուս սիրույն համար ներե՛ հանցանացս. այսչափ տարիներե հետե ձեր հացը կուտեմ, դուք իմ բարերարս եք, ես ձեզ գրկերուս մեջ այնչափ գրկած ու պտտցուցած եմ, երբ դեռ պզտիկ էիք»... վերջապես սըվոր նման բաներ չե՞նք կրնար դնել պատկերին մեջ:

Խմբերը ընթերցում են իրենց հանձնարարված հատվածը, հարկ եղած դեպքում օգտվում են բնագրից և միասին կատարում են հատվածի վերաբերյալ իրենց վերլուծությունը:

Աշխատանքին հատկացված ժամանակը լրանալուց հետո խմբերը, մեկը մյուսին շարունակելով, վերլուծում են Աբիսողոմ աղայի կերպարը:

Առաջին խումբը ներկայացնում է, որ Աբիսողոմ աղան հայտնի երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ Մուրացկանները» վիպակի գլխավոր կերպարն է: Նա ներկայացնում է գավառից եկած միամիտ հարուստի, որ զոհ է դառնում պոլսահայ պատեհապաշտ, խաբեբա դատարկապորտների դավերին ու դրամաշորթությանը:

Ժողովրդային լայն շրջանակների մեջ «Աբիսողոմ աղա» արտահայտությունը գործածվում է որպես հոմանիշ՝ միամիտ, բարի և սնապարծ մարդու, որ ճարպիկ խաբեբաների շողոքորթության զոհ է դառնում ու կողոպտվում:

Ամեն ոք ունի լուրջ և զավեշտական կողմեր: Երգիծաբանը վերցրել է այն, ինչ իրեն անհրաժեշտ է: Հակոբ Պարոնյանը «Մեծապատիվ մուրացկանները» երգիծավեպում գործի է դրել ժանրի բոլոր երանգները՝ թեթև հեգնանքից մինչև ոչնչացնող ծաղր՝ բացահայտելու այն ամենը, ինչից մեր շուրջը և մեր ներսում խախտվում է ներդաշնակությունը:

Ինչպե՞ս է սկսում վիպակը Պարոնյանը: Պատմում է, թե ինչպես է իր վեպի գլխավոր հերոսը՝ Աբիսողոմ աղան, Տրապիզոնից ժամանում Կոնստանդնուպոլիս, և ասում է՝ տեսնո՞ւմ եք, ինչպես եմ սկսում վիպակը. «Ո՛չ հով կար, ո՛չ անձրև, ո՛չ խուռն բազմություն և ոչ էլ ձերբակալված աղջիկ»: Սովորաբար, շատերն հենց այսպես են սկսում իրենց ստեղծագործությունները, բայց խոսքը ռոմանտիզմի հետևորդների մասին է, իսկ Պարոնյանը երգիծական ժանրի ռեալիստ է: Այս պատմությունը Տրապիզոնից Կոնստանդնուպոլիս եկած մեծահարուստի մասին էր, որը եկել էր ամուսնանալու նպատակով: Բայց ի՞նչ խնդիրների է բախվում նա: Աբիսողոմը տգետ, սահմանափակ մտածողություն ունեցող, միամիտ մեծահարուստ էր: Նա չուներ և ոչ մի հետաքրքրություն, նրան չէր հուզում ազգի և մարդկության ճակատագիրը, ապրում էր միայն իր ու իր ունեցվածքի համար:

Մյուս խումբն է ներկայացնում՝ ասելով, որ ինչպես Պարոնյանն է նշում՝ շատ մարդիկ ցանկանում են ի ցույց դնել այն, ինչ չունեն, մյուսները չեն ցանկանում ցույց տալ այն, ինչ ունեն, բայց կան նաև այլ անձինք, որ ցանկանում են ցույց տալ բոլորին այն, ինչ ունեն: Աբիսողոմ աղան էլ մեր նշած վերջին անձանց շարքին էր պատկանում: Գալով Կոնստանդնուպոլիս՝ հանդիպում է քծնող, շորթող, բարբարոս հասարակությանը՝

«մեծապատիվ մուրացկաններին», որոնցից էին թերթի խմբագիրը, քահանան, բանաստեղծը, լուսանկարիչը, բժիշկը, ուսուցիչը, փաստաբանը, դերասանը: Սրանք դեռ միայն այն մարդիկ էին, որոնց հանդիպեց Աբիսողոմը, բայց այդ շարքը կարելի է անվերջ շարունակել...

Միշտ էլ լինում են հեղինակներ, որ ամեն գնով ընթերցողի հետաքրքրությունը շարժելու և նրան լարվածության մեջ պահելու համար ինչ միջոցների ասես չեն դիմում: Ահա այդ հեղինակներին հակադրվելու համար Պարոնյանն իր պատմությունը չի սկսում արտասովոր դեպքերով. ոստիկանությունը աղջիկ չէր ձերբակալել, սաստիկ անձրև չէր գալիս: Մուտքը շատ պարզ է. մեծահարուստ Աբիսողոմ աղան գավառից ժամանել է մայրաքաղաք՝ Կ.Պոլիս, ամուսնանալու նպատակով: Ընթերցողը տրամադրվում է, որ գործ է ունենալու առանց ավելորդ ճյուղավորումների դիպաշարի հետ:

Հաջորդ խումբն է ներկայացնում իր նկատառումները՝ պատմելով, որ միայն մի նրբերանգով է հեղինակը «մատնում» իր վերաբերմունքը գլխավոր հերոսի հանդեպ. «Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթե պարոն Հ. Վարդովյան հանդիպեր յուր աչերով կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կ'ուզես՝ թատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»»:

Այդպիսի նայվածքով մարդը ինչպե՞ս է պահելու իրեն մայրաքաղաքում, որի բարքերին անծանոթ է: Հեղինակը դիմել է շատ սովորական մի հնարքի: Հասարակության տարբեր շերտերի մարդիկ ներկայանում են, բացահայտում իրենց էությունը՝ բացահայտելով նաև Աբիսողոմ աղային: Առաջինը հայտնվում է խմբագիրը, որ քծնելով ու Աբիսողոմ աղային փառաբանելով՝ համոզում է անունը գրել տալ լրագրում: Աբիսողոմ աղան երկար չի դիմադրում. չէ՞ որ ինքը նույնպես «պատվավոր ազգային» է. «Մեր քաղաքին մեջ արտերու, եզներու, կովերու և ագարակներու տեր եմ»: Եթե անունը լրագրում գրվի, ամուսնության գործն արագ գլուխ կգա: Արդարացումն էլ կա ու կա. «Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կը կարծե այս խմբագիրն. բայց հարկավ ան ինձմե աղեկ գիտե իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ' է և ուսումնական է»:

Հաջորդ խումբն էլ ասում է, որ մյուս մեծապատիվ մուրացկանը բանաստեղծն է, «որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի կը նմաներ, որուն նմանը չկա»: Անհատականությունից զուրկ այս բանաստեղծը պատրաստ է քծնելու, հարկ եղած դեպքում արտասվելու, միայն թե հասնի նպատակին. ցանկանում է տպագրել իր դատարկաբանության գլուխգործոց ճառը. «... Անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ...»:

Այնուամենայնիվ, բանաստեղծի գործը կարծես թե առաջ է գնում: Աբիսողոմ աղայի փառասիրությունը կրկին արթնանում է, և նա ոտանավոր է պատվիրում: Իսկ երբ բանաստեղծը տեղեկացնում է, որ սպասելու է մուսայի գալուն, ագարակատիրոջ տգիտությունն էլ ամբողջությամբ ձև ու կերպարանք է առնում. «Եթե մեկ-երկու ոսկի տանք, այս շաբաթ կուգա՞»:

Մյուս խումբն էլ, շարունակելով ընկերներին, բացատրում է, որ նոր հանդիպումներ, նոր բացահայտումներ են կատարվում: Աբիսողոմ աղայի պես «ազնվական» մարդը, պարզվում է, լուսանկար չունի: Լուսանկարիչը գործը վարպետորեն առաջ է տանում, և Աբիսողոմ աղան համաձայնում է, իհարկե, պայմանով. «Պատկերին տակը գրվի, որ այս մարդն ագարակներ, ձիեր, կովեր, էշեր ունի»:

Իսկ միջնորդ կինը՝ Շուշանը, իր ապրանքն է առաջարկում. «Իմ ձեռքիս տակ ամեն դասե աղջիկ կա. բարձր դասեն, միջին դասեն և ստորին դասեն. այս երեք դասեն ալ ծախու ապրանք ունիմ: Հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհրդակցեցեք և ինձի ըսեք՝ սա դասեն կ'ուզիմ»: Ճիշտ է, Աբիսողոմ աղան փոքր-ինչ դժվար է կողմնորոշվում գույների ընտրության հարցում, բայց միջնորդ կինը կարողանում է հասկացնել. չի կարող լինել այնպիսի աղջիկ, «որուն մեկ աչքը կապույտ ըլլա, մյուսը՝ սև»:

Կերպարի վերլուծությունը շարունակում է մյուս խումբը: Միմյանց հերթ չեն տալիս մյուս մուրացկանները: Հիվանդ չունեցող բժշկի հույսը, պարզ է, Աբիսողոմ աղան է: Դասատուն առաջարկում է գնել իր գրքերը: Իսկ փաստաբանը զարմանում է, որ նրա պես մարդը դատ չունի. «Ոչ միայն անկարելի է, այլ անպատվություն ալ է. ձեզի պես մեկը հարյուրներով դատեր ունենալու է, և ձեր շնորհիվ քանի մը փաստաբաններ ապրելու են»:

Դասը ամփոփում է ուսուցիչը՝ ասելով, որ հերթը գնալով մեծանում է: Փող են ուզում բոլորը: Նույնիսկ մեկ-երկու օրով Աբիսողոմ աղային օթևանած Մանուկ աղան, որ այդպես էլ չի կարողանում ավարտել թաղականի ընտրության պատմությունը, հարյուր հիսուն ոսկի է պահանջում: Ի վերջո, Աբիսողոմ աղան չի դիմանում. մայրաքաղաքից փախչում է այնտեղ, որտեղից եկել էր՝ գավառ:

Պարոնյանը պարզաբանում է, որ երգիծավեպը գրել է ոչ այնքան մեծապատիվ մուրացկաններին մեղադրելու, «որքան ներկայացնելու համար ապագա սերնդյան՝ ժամանակիս գրական մարդոց ողբալի կացությունն և գրականության մասին ազգային մեծատուններու սարսափելի անտարբերությունը»:

Ահա այսպես Պարոնյանը լիարժեք պատկերացում է տալիս մի հասարակության մասին, որտեղ բացակայում են հոգևոր արժեքները, և իշխում է միայն փողի պաշտամունքը: Ծաղրն ու հեգնանքը, ինչ խոսք, գրվածքի վերին շերտում են, իսկ խորքում հեղինակի ցավն է:

Դասն ամրապնդելու նպատակով կատարում ենք հետևյալ առաջադրանքները.

1. **Բնութագրե՛ք Աբիսողոմ աղային, նրա արարքները, մեկնաբանե՛ք սոցիալ-հոգեբանական տեսանկյունից:**

Կերպարը	Արարքները	Մեկնաբանությունը
Աբիսողոմ աղա	1.	
	2.	

2. **Ներկայացրե՛ք Աբիսողոմ աղային որպես միջոց՝ ցուցադրելու ազգի մտավոր ու բարոյական կացությունը՝ բնագրից բերելով համապատասխան օրինակներ:**

3. **Մեկնաբանե՛ք հեղինակի հույզերն ու ապրումները և դրանց ազդեցությունը ձեր վրա:**

4. **Բացատրե՛ք՝ ժամանակը, միջավայրը ինչ կերպ է ազդել հերոսի հոգեբանության վրա:**

5. **Գնահատե՛ք հեղինակի վարքագիծը և արտահայտե՛ք վերաբերմունք նրա հանդեպ:**

6. **Թվարկե՛ք մեծապատիվ մուրացկաններին, մեկնաբանե՛ք նրանց արարքները՝ հիմնավորելով բնագրից բերած օրինակներով:**

7. **Ձեր կարծիքով այս երկը քանի՞ գաղափար է արտահայտում: Խմբով քննարկե՛ք, թե ինչու եք այդպես մտածում: Ձևակերպե՛ք գաղափարը ձեր բառերով:**

8. **Բնութագրե՛ք վեպի երկրորդական կերպարները առանձին-առանձին՝ ապացուցելով նրանց «մեծապատիվ մուրացկան» լինելը:**

9. **Մեկնաբանե՛ք կամ հիմնավորե՛ք գրողի ոճական հնարների ընտրությունը (մեկնաբանել գրող-ընթերցող կապը, բերել համապատասխան օրինակներ՝ անդրադառնալով լեզվական, պատկերավորման, կերպավորման միջոցներին, նկարագրություններին, երկխոսություններին և այլն):**

Հանձնարարությունները կատարելուց հետո սովորողները կարդում են իրենց աշխատանքները, լրացնում են միմյանց, ապա քննարկվում է օրվա թեման՝ յուրաքանչյուրին հնարավորություն ընձեռելով արտահայտելու իր կարծիքը, դրիքորոշումը:

Կատարում ենք **անդրադարձ** և հանձնարարում տնային աշխատանք, եթե դրա անհրաժեշտությունը կա:

Գ. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախարարը սահմանել է դպրոցներում սովորողների գնահատման չափանիշները
https://iravaban.net/418029.html

2023-03-2 (19 39)

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը փետրվարի 24-ին հրաման է ստորագրել, որով սահմանել է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները՝ համաձայն հավելվածի:

Գնահատման չափանիշների ներդրումն իրականացվելու է հետևյալ ժամանակացույցով.
1) 2023-2024 ուսումնական տարի՝ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր դասարաններում,

2) 2023-2024 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 2, 5, 7, 10-րդ դասարաններում,

3) 2024-2025 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 3, 6, 8, 11-րդ դասարաններում,

4) 2025-2026 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 1, 4, 9, 12-րդ դասարաններում:

Հրամանն ուժի մեջ է մտել մարտի 1-ին:

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափանիշներով սահմանվում են պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) սովորողների գնահատման (այսուհետ՝ Գնահատում) հետ կապված իրավահարաբերությունները:

2. Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

3. Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

4. Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

5. Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:

6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

7. Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

2. ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

8. Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտե-լիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

9. Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:

10. Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

11. Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք,

2) բանավոր հարցում,

3) բաց հարցերով քննարկում,

4) այլ:

3. ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

12. Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

13. Ձևավորող գնահատման խնդիրն է՝ ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը,

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը,

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

14. Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում:

15. Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

16. Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

17. Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

18. Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

19. Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:

20. Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ),

2) բանավոր հարցում,

3) գրավոր աշխատանք,

4) գործնական (լաբորատոր) աշխատանք,

5) տնային աշխատանք,

6) նախագծային աշխատանք,

7) քննարկում, բանավեճ,

8) այլ:

21. Ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները:

22. Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

23. Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

4. ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

24. Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան՝ սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

25. Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

26. Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

27. Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

28. Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

29. Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

5. ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

30. Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:

31. Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավոր-ներով:

32. Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:

33. Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ՝ 1 (մեկ), 2 (երկու), 3 (երեք), 4 (չորս), 5 (հինգ), 6 (վեց), 7 (յոթ), 8 (ութ), 9 (ինը), 10 (տասը), որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:

34. Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:

35. Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում դրվում են հետևյալ նշումները՝

1) սովորողի բացակայության դեպքում՝ «բ».

2) միավորային գնահատման հաստատված ձևերը չկատարելու դեպքում՝ «-»:

36. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերն ու անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

37. Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ,

2) բանավոր հարցում,

3) գրավոր աշխատանք,

4) գործնական (լաբորատոր) աշխատանք,

5) նախագծային աշխատանք,

6) այլ:

38. Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

39. Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է սույն կարգի 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

40. Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

41. Սովորողների գնահատման համար ներկայացված 10 միավորային սանդղակի գնահատման միավորների բնութագրիչներն ընդհանրական են, որոնք հստակեցվում և տեղայնացվում են՝ ըստ առանձին ուսումնական առարկաների և գնահատման տարբեր ձևերի:

Միավորը	**Բնութագրիչները**
1	Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ:

2	Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի:
3	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:
4	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:
5	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշներն առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:
6	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:
7	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա:
8	Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է դրանց էությունը, հիմնավորում և ապացուցում փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:
9	Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական մոտեցումներ:
10	Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:

6. ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

42. Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով:

43. Դրական է գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում են նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումները:

44. Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝

1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը,

2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել,

3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

45. Բնութագրող գնահատման ընթացքում ուսուցիչը արձանագրում է՝

1) սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը,

2) առարկայական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների յուրացումը,

3) տեղեկատվության մտապահումը,

4) աշխատանքի ճշգրիտ և մանրակրկիտ կատարումը,

5) սովորողի ուսումնառության մոտիվացիան,

6) սովորողի ինքնուրույնությունը,

7) սովորողի ինքնագնահատման ունակությունը:

46. Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից:

47. Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

1) 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին,

2) տարրական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրի ավարտին:

48. Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

49. Սովորողի ուսումնական ձեռքբերումներն արձանագրելու համար հիմք են ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

50. Բնութագրող գնահատման չափանիշները հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների:

51. Ամփոփիչ գնահատման ձևերից սովորողների ուսումնառության արդյունքները գրանցվում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում և կցվում են սովորողի անձնական գործին:

Օգտագործած գրականության ցանկ

1. Белкин А. С., Основы возрастной педагогики, М., Академия, 2000,192 с.
2. Выгоȣский Л. С, Собрание сочинений, том 2, Мышление и речь, Лекции по психологии, М., Педагогика, 1982, 502 с.
3. Гамезо М.В., Петрова Е.А., Орлова Л.М., Возрастная и педагогическая психология, М.: Педагогическое общество России, 2003. 512 с.
4. Թովմասյան Թ., Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2019:
5. Թովմասյան Թ., Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2019:
6. Թովմասյան Թ., Հայոց լեզու 10, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2022 Էդիթ Պրինտ:
7. Թովմասյան Թ., Հայ գրականություն 10, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., Էդիթ Պրինտ, 2023:
8. Обухова Л.,Ф., Детская (возрастная) психология, М., РПА, 1996, 374 с.
9. 101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար:
10. https://ahaslides.com/hy/blog/15-innovative-teaching-methods/
11. https://iravaban.net/418029.html

Բովանդակություն

Ա. Թեմատիկ պլան
Հայ գրականություն - 10-րդ դասարան 4

ԴԱՍԻ ՊԼԱՆՆԵՐ
ԴԱՍ 1
ԹԵՄԱՆ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 63

ԴԱՍ 2
«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ «ՀԱՌԱՋԱԲԱՆԸ»: ՎԵՊԻ ՍՅՈՒԺԵՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 68

ԴԱՍ 3
ԹԵՄԱՆ՝ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՄՈՒՐԱՑԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.....75

ԴԱՍ 4
ԹԵՄԱՆ՝ «ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՎԵՊԸ, ԳՐԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ: «ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՊԱՏՄԱՎԵՊԻ ՍՅՈՒԺԵՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 81

ԴԱՍ 5
ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ՌԵԱԼԻԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՌԵԱԼԻԶՄԸ..... 90

ԴԱՍ 6
ԹԵՄԱՆ՝ ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ. «ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ» 99

ԴԱՍ 7
ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ «ՔԱՌՍ» ՎԵՊՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԻ, ԿՆՈՋ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ: ՎԵՊԻ ՄՅՈՒՍ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ 108

ԴԱՍ 8
ԹԵՄԱՆ՝ «ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ» ՎԻՊԱԿԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ: ԱԲԻՍՈՂՈՄ ԱՂԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ 112

Գ. ԳՆԱՀԱՏՈՒՄ 121

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ 122

Օգտագործած գրականության ցանկ 130

ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
10

Մեթոդական ուղեցույց

EDIT PRINT
43 D. Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am